ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ 1
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ 2
Ո՞Վ Է ՊԱՀԱՆՋԱՏԷՐԸ ԵՒ Ի՞ՆՉ Է ՊԱՀԱՆՋՈՒԱԾԸ 2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ 5
ՀԻԼՏԱ ՉՈՊՈՅԵԱՆ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՆՊԱՍՏԱՒՈՐ ՉԷ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՏՐՈՒԿ ՇՐՋԱԴԱՐՁԵՐԻ ՀԱՄԱՐ 5
2024-03-18 5
Մարինա ԳՐԻԳՈՐԵԱՆ 5
ԿԻՊՐԱՀԱՅ 7
ԼԵՒՈՆ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑԱՒ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԱՐԺԱՆԵԱՑ» ՇՔԱՆՇԱՆՈՎ 7
ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ 8
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ 8
«ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ» ՀԱՏՈՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍԸ 9
ՆԻԿՈՍԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ՅԱՂԹԱՐՇԱՒԸ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ 13
ԾԱՆՈՒՑՈՒՄ 14
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ 15
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՄԻՇՏ ՉԷ, ՈՐ ՅԱՂԹՈՂԸ ԿԸ ԿԵՐՏԷ 15
ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՌԱԶՄԱԿԱՊԻԿՈՒԹԻՒՆ ԵՒ 21
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱՄԻՄՈՍՈՒԹԻՒՆ 21
ՅԻՇՈՒՄՆ 24
ՔԻՉ ՄԸ ԽԻԶԱԽՈՒԹԻՒՆ՝ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԷՆ ԱՌԱՋ 26
ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆԻ 30
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ՝ ՏԵՍԻԼՔ, ԿԱՄՔ ԵՒ ՅՈՅՍ» ՆՈՐԱՏԻՊ ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ-ԳԻՆԵՁՕՆԸ 30
ՔՈՒԷՅԹԻ ՄԷՋ 30
ՏԵՍԱԿԷՏ 33
ԱՐԴԱՐ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԲԸՄ-Ի ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԷՆ 33
Ի ԴԷՄՍ ԱՏՐՊԷՅՃԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՆՈՒԱՃՈՂԱԿԱՆ ԽԱՂՔԵՐՈՒՆ 36
ՀԱՅԱՍՏԱՆ-ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԸՆԵԼԻՔ ՈՒՆԻ՞ 36
ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆ 39
ԱՊԱԳԱՂՈՒԹԱՑՄԱՆ ՓՇՈՏ ՃԱՆԱՊԱՐՀԸ 42
ՀԱՅԱՍՏԱՆ ԵՄ-ԷՆ ԵՒ ԱՄՆ-ԷՆ ՍՏԱՑԱԾ Է ՖԻՆԱՆՍԱՒՈՐՈՒՄ ԵՒ ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆ, ՍԱԿԱՅՆ Ո՛Չ ՄԷԿ ՓԱՄՓՈՒՇՏ 44
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ 47

ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ 47
ՌՈՒԶԱՆ ԱՍԱՏՐԵԱՆ....51
ԱՍՏԾՈՎ ԲԱՑՈՒՈՂ <<ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍԸ>> ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ....51
ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ ՍՐՏԻ ԽՕՍՔԸ «ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ» ՀԱՏՈՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍԻՆ....54
ԽԱՉՈՒՍԵԱԼԸ....57
ՎԻՐՏՈՒԱԼ ԶՐՈՅՑ ՎԱՂԱՄԵՌ ԳԱԳԻԿ ԳԻՆՈՍԵԱՆԻ ՀԵՏ....57
ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ ԵՒ ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ… 61
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ 62
ՔԱՌԵԱԿՆԵՐ....65

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ո՞Վ Է ՊԱՀԱՆՋԱՏԷՐԸ ԵՒ Ի՞ՆՉ Է ՊԱՀԱՆՋՈՒԱԾԸ

Հայոց Ցեղասպանութեան 109-րդ տարելիցին առիթով, համայն հայ ժողովուրդը՝ միակամ ու միասիրտ, անգամ մը եւս կը խոնարհի իր բիւրաւոր նահատակներու յիշատակին առջեւ եւ կը վերանորոգէ իր յանձնառութիւնը՝ հաւատարիմ մնալու անոնց սրբազան կտակին...:

Ոգեկոչումն ու հաւատարմութեան վերանորոգումը էական են, որոշապէս, պայմանաւ որ մեր մտքերուն մէջ յստակեցնենք, մէկանգամընդմիշտ, թէ ի՞նչ կը նշանակէ այդ հաւատարմութիւնը: Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչո՞ւմի ապահովում, անոր ժխտողականութիւնը քրէօրէն պատժելի դարձնելու օրինագիծի ընդունմա՞ն ձեռքբերում, հողային հատուցման Պահանջատիրութի՞ւն..., թէ՞՝ շարունակաբար կրկնուող յանկերգ, ուր հռետորաբանութիւնը կարծէք մթագնած ըլլայ մեր գործելու քաղաքական կամքը եւ ուր ցանկատեսական ճառերն ու կարգախօսները ընդունուին որպէս հարցի լուծում...: «Խաբուիլ սիրող մեր ժողովուրդը», պիտի ըսէր մեր գրողներէն մին, այնքան դիպուկ կերպով..., ակնարկելով այն իրողութեան, որ շարունակաբար մեր յոյսերը կապելով օտարին բարեկամեցողութեան հետ, հիասթափուած ենք դառնօրէն, եւ այդպէս ալ, առ այսօր չենք մշակած Ազգային մեր Ծրագիրը խոհականութեամբ եւ համազգային համագործակցութեամբ..., հազարամեակներու պատմութիւն ունեցող ժողովուրդի մը վայել իմաստնութեամբ...:

Ըսուածին փաստարկ որպէս, նշենք պարզապէս որ հայ քաղաքական միտքը տասնամեակներ շարունակ՝ Հայ Դատի Պահանջատիրութիւնը սահմանափակած է Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը ձեռքբերելու գործընթացով...այս կամ այն երկրի

նախագահին, խորհրդարանին, ծերակոյտին, թէ այլ ատեաններու կողմէ, առանց ճշդելու, գոնէ ինքն իրեն համար, թէ ի՞նչ է բուն Պահանջուածը եւ ո՞վ է զայն Պահանջողը:

Խնդիրը, սակայն, այն է թէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցը, մեր իսկ թոյլտուութեամբ, դարձած է արտաքին ոյժերու շահարկման առարկայ, անոնց քաղաքական խաղերու գործիք ու խաղաքարտ...: Խաղաքարտ՝ որ կ'օգտագործուի այսօր բոլոր մեծ ոյժերու կողմէ ի շահ իրենց մեծապետական հաշիւներուն: Սա արդեօ՞ք նախատինք չէ մեր մեռելներու յիշատակին...: Ալ ժամանակը չէ՞ որ, վերջապէս մենք ըլլանք ՏԷՐԸ մեր ճակատագրին: Բայց ինչպէ՞ս:

Առաջին հերթին, արդեօ՞ք ա՛լ յստակեցնելու չենք, թէ Ի՞ՆՉ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆՔ: Որոշապէս, Հայոց Ցեղասպանութեան ճանաչումներէն անդին ու գերիվեր, մեր բուն Պահանջատիրութիւնը՝ թուրքին կողմէ բռնախլուած հայուն հայրենական հողերու վերադարձն է իր տիրոջ: ՀՈՂԻՆ համար էր որ գործադրուեցաւ Ցեղասպանութիւնը: Այն հողին, որ կը կոչուէր ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆ եւ ուր հազարամեակներէ ի վեր կ'ապրէր արեւմտահայութիւնը՝ իր լեզուով, մշակոյթով, ազգային-հաւաքական հաստատութիւններով, աւանդութիւններով ու արժէքներով... տուն ու տեղերով, կալուածներով ու հարստութիւններով.: Համախումբ ազգային կեանքով մանաւանդ: Այդ արեւմտահայութեան իրաւայաջորդը, ներկայիս, իր հողերէն բռնահանուած Տարագիր արեւմտահայութիւնն է, ցրուած աշխարհի երեսին, որպէս քիչ թէ շատ կազմակերպուած հայազաղութներ, սակայն իր քաղաքական ամբողջութեանը մէջ՝ տակաւին անկազմակերպ ու անտիրական, զուրկ ի մասնաւորի զայն ներկայացնող լիազօր իրաւական կառոյցէ, ինչ որ պիտի հնարաւորութիւն ընձեռէր իրեն, դառնալու միջազգային կարգավիճակ ունեցող ազգային-քաղաքական հաւաքականութիւն եւ այդպիսով կարենալու իր ԴԱՏԸ հետապնդել լիարժէք ու լիիրաւ կերպով:

ՊԱՀԱՆՋԱՏԷՐԸ, սակայն, ցարդ կը մտածէ՞ ու կը գործէ՞ այդ ուղղութեամբ, թէ՝ իր էսթապլիշմենթներով ու ջոջականութեամբ, կ'ապրի աթոռներու եւ աթոռակներու սին ու փառատենչ գոհունակութեամբ եւ կարճատեսութեամբ: Ե՞րբ պիտի տրուի մեկնարկը նման աշխատանքին: Այս մասին շատ է գրուած, մանաւանդ վերջին տարիներուն, բայց Սփիւռքի Արշակաւանը ե՞րբ պիտի սթափի ու անցնի վերացական խօսքէն արդիւնաւէտ գործի...: Իսկ ժամանակը, հաստատապէս, մեր դէմ կը գործէ, երբ տարուէ-տարի ահաւոր նահանջ կ'արձանագրեն արեւմտահայ լեզուն, Բառն ու Բանը, ազգային ինքնագիտակցութիւնը, տարագիրի գիտակցութիւնը, առանց որոնց Հայոց Ցեղասպանութիւնը ինքնաբերաբար կը հասնի իր վերջին հանգրուանին, եւ Պահանջատիրութիւնը կը մնայ առանց իր Պահանջատէրին:

Իսկ՝ Հայաստանը՞: Հայաստանի Հանրապետութիւնը ունի՞ իր պետական քաղաքականութեան մէջ Հայ Դատի Պահանջատիրութիւնը: ՀՀ երեք նախագահներն ալ, տարբեր առիթներով, հրապարակած են իրենց պետական կեցուածքը՝ Հայ Հողային Դատին նկատմամբ: Յիշեցման կարցով, առաջին նախագահի արտաքին գործոց նախարար Ռաֆֆի Յովհաննիսեան կը հրաժարեցուէր իր պաշտօնէն՝ Իսթանպուլ կատարած իր պաշտօնական այցէն վերադարձին, ուր ան յիշատակումը կատարած էր Հայոց Ցեղասպանութեան:

Երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեան հրապարակաւ կը յայտարարէր թուրք հանրայայտ լրագրողին.« Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը իրաւական հիմքեր չստեղծեր հողային հատուցման»: Իսկ Սերժ Սարգսեան, յատկապէս, իր ֆութպոլային քաղաքականութեամբ, պատմաբաններու յանձնախումբի մը ստեղծման իր տրամադրութեամբ եւ Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններու ստորագրութեամբ, կը մնայ յուշարարը մեր հողային Պահանջատիրական Դատի ահաւոր եւ անընդունելի զիջումին ի նպաստ «Հայաստան-Թուրքիա սահմանի բացումին»: Յուշարարը՝ այն փաստին որ ՀՀ պետական քաղաքականութիւնը կրնայ ըլլալ ամբողջովին անյարիր մեր համազգային շահերուն, պատմական իրաւունքներուն ու Պահանջատիրութեան: Վերջերս ալ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան բանաձեւեց ՀՀ իշխանութեանց առաքելութիւնը՝ «պատմական Հայաստանից դէպի իրական Հայաստան անցում»ը, ինչ որ ըստ իրեն պիտի ապահովէ ներկայ Հայաստանի գոյատեւումը: Արդարեւ, Ապրիլ 10ին, Ազգային ժողովին մէջ վարչապետ Փաշինեան յայտարարած է. “Պատմական Հայաստանը չի ճանաչում իրական Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը, պատմական Հայաստանն ու իրական Հայաստանը ոչ միայն համատեղելի չեն, այլեւ յաճախ հակոտնեայ են միմեանց եւ նոնիսկ լրջագոյն սպառնալիքներ են ստեղծում մէկը միւսի համար»:

Եթէ ՀՀ պետութեան օրակարգը ՆԵՐԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆՆ է, ներկայ Հայաստանի հանրապետութեան ինքնիշխանութիւնը կայացնելն ու հզօրացնելը, ապա ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ օրակարգը անպայմանօրէն կ'ընդգրկէ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ, որ մեր ինքնութեան անբաժանելի մասն է: Ահա թէ ինչու պէտք է ստեղծել ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՌՈՅՑ կամ ՄԱՐՄԻՆ, որուն մէջ պիտի ներգրաւուի տարագիր ՍՓԻՒՌՔԸ, որպէս քաղաքական ամբողջութիւն: Աւաղ, շատ ենք ուշացած, բայց լաւ է ուշ, քան երբեք:

Ապաւինի՞նք արդեօք Հայաստանի Հանրապետութեան վարած պետական քաղաքականութեան եւ չվրդովե՞նք մեր հանգիստը...:

Սփիւռքի Արշակաւանը պիտի զգաստանա՞յ, ի վերջոյ, որ ճակատագրական հրամայական է ա՛լ վերակազմակերպուիլ՝ ընտրովի կայացած Ներկայացուցչական Լիազօր Մարմնի մը ներքոյ, որ կարենայ մեր Պահանջատիրութիւնը ներկայացնել միջազգային ատեաններու, ճշդել գործընթաց եւ ուղեգիծ, մշակել համապարփակ Ծրագիր: Առանց նման իրաւական իրաւատէրի կարգավիճակ ունեցող ՄԱՐՄՆԻ կամ ԿԱՌՈՅՑԻ, մենք՝ Արեւմտահայութեան իրաւայաջորդներս, ինչպէ՞ս պիտի կարենանք լսելի դառնալ Միջազգային ատեաններուն առջեւ եւ Արեւմտահայաստանի Դատ հետապնդել լիարժէք կերպով..: Մենք կը մնանք այն հաստատ համոզումին վրայ, որ հրամայական պահանջ է նշեալ Կառոյցի ձեւաւորման յանձնառումը եւ անոր գործադրումը, եթէ խօսքերէն ու ճառասացութիւններէն անդին, ճշմարտօրէն ՊԱՀԱՆՋԱՏԷՐՆ ենք մեր Դատին եւ ունինք զայն հետապնդելու քաղաքական աննկուն եւ անկոտրում կամքը:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ՀԻԼՏԱ ՉՈՊՈՅԵԱՆ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՆՊԱՍՏԱՒՈՐ ՉԷ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՏՐՈՒԿ ՇՐՋԱԴԱՐՁԵՐԻ ՀԱՄԱՐ

2024-03-18

Մարինա ԳՐԻԳՈՐԵԱՆ

«Ծայրայեղ անկայունութեան ներկայիս պայմաններում Հայաստանի համար ամէնեւին էլ պատեհ չէ վերջնական ընտրութիւն կատարել, հրաժարուել Ռուսաստանից և խզել նրա հետ յարաբերութիւնները՝ այդ երկրի հնարաւորութիւններն ի նպաստ իր շահերի օգտագործելու փոխարէն»,- «ԳԱ»-ին տուած հարցազրոյցում ասաց Իրաւունքի և հակամարտութիւնների կարգաւորման փարիզեան «Կովկաս» կենտրոնի ղեկավար Հիլտա ՉՈՊՈՅԵԱՆԸ:

-Փետրուարի 13-ին Եւրախորհրդարանի ընդունած բանաձեւը, որով Հայաստանին առաջարկւում է դիտարկել ԵՄ անդամի թեկնածուի կարգավիճակի համար դիմելու հնարաւորութիւնը, բազմաթիւ արձագանգներ և մեկնաբանութիւններ յարուցեց, ամենահիճուալից և աւելորդ լաւատեսականներից մինչև իրատեսական և առողջ յոռետեսութեան երանգով գնահատականներ: Հարաւային Կովկասի տարածաշրջանի գծով յայտնի մասնագէտի ձեր գնահատմամբ, որո՞նք են հենց ներկայ պահին այդօրինակ բանաձեւի ընդունման հիմնական պատճառները:

-Նախեւառաջ պէտք է նկատի առնել, որ դա օրէնսդիր մարմնի ընդունած փաստաթուղթ է, իսկ ԵՄ գործադիր կառոյցները, որոնք իրական քաղաքականութեան վրայ ազդելու շատ աւելի մեծ լծակներ ունեն, ոչ մի պարտաւորութիւն իրենց վրայ չեն վերցնում: Այսինքն մենք գործ ունենք պարզապէս ԵՄ անդամակցութեան յայտ ներկայացնելու Հայաստանին եւրապատգամաւորների յղած կոչի հետ: Մեծ նշանակութիւն, այդ թւում՝ Հայաստանի պետական քաղաքականութեան համար, բանաձեւը չունի. դա լոկ նախնական յայտ է, շատ երկար ու բարդ գործընթացի սկիզբ, աննշան քայլ, որը չարժէ գերագնահատել:

Միւս կողմից, կարելի է հասկանալ, թէ ինչու Եւրախորհրդարանն այդպիսի բանաձեւ ընդունեց հենց ներկայ պահին: Կան մի քանի գործօններ:

Նախ՝ 2020 թուականի պատերազմից, Ադրբեջանի ագրեսիւ գործողութիւններից, այդ երկրի կողմից Մարդու իրաւունքների և մարդասիրութեան սկզբունքների զանգուածային խախտումներից յետոյ ԵԽ-ում ընդլայնուել է պատգամաւորների այն աւանդական շրջանակը, որը մշտապէս հանդէս է եկել ի պաշտպանութիւն ու զօրակցութիւն Հայաստանի և Հայկական հարցի: Դա շատ լաւ նշան է:

Երկրորդ գործօնը Եւրամիութեան ընդգծուած հակառուսական ուղեգիծն է, որը սկսեց սրընթաց աճել Ուկրաինայի վրայ Ռուսաստանի յարձակումից յետոյ: Այդ քաղաքականութիւնը մեծապէս ազդեց նաեւ 44-օրեայ պատերազմից յետոյ բարդ իրավիճակում յայտնուած Հայաստանին աջակցելու միտման վրայ:

Ներկայումս Եւրոպան, թէկուզ ոչ ուղղակիօրէն, բայց պատերազմի մէջ է Ռուսաստանի հետ: Եւ ակնյայտ է ԵԽ պատգամաւորների ցանկութիւնը՝ դուրս բերելու Հայաստանը Մոսկուայի ազդեցութիւնից և փորձելու ընդգրկել իրենց արժէքների ուղեծրում, հնարաւորութիւն տալու ապագայում օգտուել ԵՄ անդամակցութեան առաւելութիւններից:

-Հայաստանի համար անվտանգութեան խնդիրներն այսօր առաւել քան առանցքային են, գոյաբանական: Կարո՞ղ է արդեօք բանաձեւի ընդունումը գոնէ ինչ-որ կերպ նպաստել դրանց լուծմանը:

-Անուղղակիօրէն ինչ-որ չափով հնարաւոր է, բայց ակնյայտ պատճառներով այդ ազդեցութիւնը արագ և օպերատիվ չի լինի:

Այո, Ֆրանսիան փորձում է ներգրաւել Եվրամիութեան երկրներին Հայաստանին ակտիվ աջակցութիւն ցուցաբերելու գործընթացներում, այդ թւում՝ անվտանգութեան ոլորտում: Սակայն այդ խնդիրն այժմ դժուար թէ իրագործելի լինի, քանի որ հայ-ադրբեջանական հակամարտութեան վերաբերեալ ԵՄ անդամ երկրների դիրքորոշումները սաստիկ տարբերւում են: Մի շարք պետութիւններ որոշակի չափով կախուած են Ադրբեջանի և Թուրքիայի էներգառեսուրսներից, իսկ ԵՄ-ում այդ կարգի որոշումները կայացւում են կոնսենսուսով:

-Սակայն բանաձեւում կան յստակ կէտեր, որոնք դատապարտում են պաշտօնական Բաքուին: Այդուհանդերձ նման յայտարարութիւններ հնչել են նաև նախկինում, սակայն Եւրոպան խօսքերից անդին դեռեւս չի գնում՝ պահպանելով գործընկերային յարաբերութիւններն ու փոխգործակցութիւնը Ադրբեջանի հետ:

-ԵԽԽՎ-ում տեղի ունեցած վերջին իրադարձութիւնները, երբ այդ երկրի պատուիրակութեանը մէկ տարով զրկեցին լիազօրութիւններից, բաւական ցուցանշական են: Այդ քայլը ցոյց է տալիս, որ Ալիեւի գործողութիւնների սանձարձակութիւնն ու անթոյլատրելիութիւնը Եւրոպայում տեսնում են և պատշաճ գնահատականի արժանացնում: Եւ ես չէի ասի, թէ Բրիւսելի հետ Բաքուի յարաբերութիւնները զարգանում ու խորանում են:

Միաժամանակ պէտք է հաշուի առնել մի բաւական լուրջ հանգամանք: Եւրամիութիւնն ինքն էլ յայտնուել է ծայրաստիճան անկայուն, երերուն վիճակում: Խաղաղ զարգացման հայեցակարգը, որը դրուած է ԵՄ ստեղծման հիմքում, այսօր կարող է փոխարինուել ռազմականացմամբ և ռազմական միաւորման ստեղծմամբ:

Բանն այն է, որ դաշինքի անդամ մի շարք երկրներ, մասնաւորապէս՝ Ֆրանսիան, վտանգ են զգում ԱՄՆ-ում կայանալիք առաջիկայ ընտրութիւնների առնչությամբ, որոնք կարող են մեծ ազդեցութիւն ունենալ Բրիւսելի արտաքին քաղաքականութեան վրայ: Թրամփի յաղթանակի դէպքում Եւրամիութիւնում ստիպուած կը լինեն ՆԱՏՕ-ի շրջանցումով ստեղծել նոր, ԱՄՆ-ից անկախ ռազմական դաշինք: Հաշուի առնելով Թրամփի անկանխատեսելիութիւնը՝ ովկիանոսից այնկողմ կայանալիք ընտրութիւնների ելքից, կրկնեմ, շատ բան է կախուած:

Ուստի վստահօրէն խօսել հեռանկարային ինչ-որ զարգացումների մասին այսօր անհնար է, իրավիճակն իսկապէս չափազանց փոփոխական է՝ բազմաթիւ հակասական միտումներով: Եւ ես վստահ եմ, որ նման պայմաններում Հայաստանի համար ամէնեւին էլ պատեհ չէ վերջնական ընտրութիւն կատարել, հրաժարուել Ռուսաստանից և խզել նրա հետ յարաբերությունները՝ այդ երկրի հնարաւորութիւններն ի նպաստ իր շահերի օգտագործելու փոխարէն: Աշխարհում և տարածաշրջանում տիրող աշխարհաքաղաքական իրավիճակն ամէնեւին նպաստաւոր չէ այդպիսի կտրուկ շրջադարձերի համար:

-Իսկ ժողովրդավարական նորմերի տեսանկիւնից այսօրուայ Հայաստանը, ըստ ձեզ, համապատասխանո՞ւմ է ԵՄ չափանիշներին: Միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնների գնահատականները խօսում են, հակառակը, յետընթացի մասին…

-Լաւ ճանաչելով Եւրոպան՝ կարող եմ ասել, որ Հայաստանի իշխանութիւնների քաղաքականութիւնը ԵՄ պաշտօնեաների համար միանգամայն ընդունելի է։ Օրինակ, Ուկրաինայում ժողովրդավարութեան հետ կապուած իրավիճակը բնաւ աւելի լաւ չէ, քան Հայաստանում, գուցէ նոյնիսկ աւելի վատ է։ Սակայն Արեւմուտքի ռազմաքաղաքական շահերը թոյլ տուեցին աչք փակել դրա վրայ և թեկնածուի կարգավիճակ տալ այդ երկրին։

Այնպէս որ պէտք չէ իդէալականացնել ԵՄ պահանջները։ Խնդիրն ամէնեւին էլ այս կամ այն երկրի համապատասխանութեան կամ անհամապատասխանութեան աստիճանը չէ նրանց չափանիշներին, խնդիրը հրատապ աշխարհաքաղաքական նպատակներն են, որոնք թոյլ են տալիս անտեսել ժողովրդավարութեան և Մարդու իրաւունքների ոլորտում առկայ թերութիւնները։ Բուն պահանջներն, ի դէպ, այնքան էլ խիստ չեն և միանգամայն իրագործելի են։

Բացի այդ, հնարաւոր անդամակցման բազմամեայ ուղին ենթադրում է շատ լուրջ փոփոխութիւններ ոչ միայն ժողովրդավարական բարեփոխումների առումով, այլև տնտեսութեան, արդարադատութեան համակարգի և մնացած բոլոր ոլորտներում՝ ընդհուպ մինչև այնպիսի մանրուք, ինչպիսին, ասենք, մայթերի բարձրութիւնն է փողոցներում։ Բայց այդ մասին, կրկնեմ, դեռ վաղ է խօսել։

Այնպէս որ, ԵՄ անդամակցութեան հեռանկարը դեռեւս չափազանց մշուշոտ է, մինչդեռ արդի իրավիճակը Հայաստանի դիւանագիտութիւնից պահանջում է շատ աւելի մեծ ճկունութիւն և պրոֆեսիոնալիզմ։

ԿԻՊՐԱՀԱՅ

ԼԵՒՈՆ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑԱՒ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԱՐԺԱՆԵԱՑ» ՇՔԱՆՇԱՆՈՎ

Չորեքշաբթի, 27 Մարտ 2024-ին, կազմակերպութեամբ Համազգայինի Կիպրոսի Կազմի Վարչութեան, Ազգային Առաջնորդարանի «Վահրամ Իւթիւճեան» սրահէն ներս, երեկոյեան ժամը 8-ին, տեղի ունեցաւ մեծահամբաւ ջութակահար եւ աշխարհահռչակ «Չիլինկիրեան Քառեակ»-ի հիմնադիր Լեւոն Չիլինկիրեանի պարգեւատրումը Համազգայինի Շքանշանով, ձեռամբ Կեդրոնական Վարչութեան անդամ՝ Սեպուհ Այնթապլեանի։

Ներկայ էին Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Խորէն Արք. Տողրամաճեանը, Արժ. Տ. Մաշտոց եւ Տ. Մոմիկ Քհնյ. Հայրերը, Ազգային Իշխանութեան եւ գաղութի կազմակերպութիւններու ատենապետներ, անդամներ եւ գաղութի բազմաթիւ անդամներ։

Վարչութեան ատենապետ Արթօ Դաւիթեանի բացման խօսքէն ետք Վարդան Թաշճեան ներկայացուց Լեւոն Չիլինկիրեանի կեանքն ու բեղուն գործունէութիւնը, յատկապէս՝ ջութակի մենակատարումները բազմաթիւ երկիրներու սիմֆոնիկ նուագախումբերուն հետ, ինչպէս նաեւ անոր հիմնած «Չիլինկիրեան Քառեակ»-ի երկարամեայ ուշագրաւ գործունէութիւնը։ Յաջորդեց Կիպրոսի արուեստի ու երաժշտական կեանքի հիմնական կազմակերպիչներէն Կարօ Քեհէյեանի անգլերէնով ելոյթը, որ

դրուատեց Լեւոն Չիլինկիրեանի կատարած գործը նշելով, որ ան համաշխարհային համբաւ ունի եւ Կիպրոսը պէտք է հպարտ զգայ իր հարազատ զաւակին յաջողութիւններով:
Ապա խօսք առաւ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան անդամ Սեպուհ Այնթապլեանը ու կատարեց շքանշանի տուչութիւնը, որմէ ետք, Լեւոն Չիլինկիրեան արտասանեց իր սրտի խօսքը, մէջբերելով հին յուշեր եւ իր մօրեղբօր՝ երաժշտութեան ուսուցիչ Վահան Պէտէլեանի շնորհաբեր ազդեցութիւնը իր կեանքին ու ասպարէզին մէջ: Իր խօսքի աւարտին ան իր մօրեղբօր հին ջութակին վրայ նուագեց Կոմիտասի «Ծիրանի Ծառ»-ը խանդավառ ծափահարութիւններ խլելով ներկաներէն:
Գեղարուեստական բաժնով ելոյթ ունեցան ջութակահար Տիկիններ Յասմիկ Սարգսեան եւ Վառվառա Պերզլովա-Պանեւա, որոնք նուագեցին Կոմիտասի «Ալ Այլուղս» եւ «Շողեր Ջան» կտորները: Վերջաւորութեան ելոյթ ունեցաւ Համազգայինի «Սիփան» պարախումբէն եռեակ մը հայկական պարով:
Երեկոն աւարտեցաւ Գերշ. Սրբազան Հօր փակման խօսքով ու «Պահպանիչ» աղօթքով: Յաջորդեց՝ համեստ հիւրասիրութիւն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 18 ԱՊՐԻԼ 2024
Հայկական Ցեղասպանութեան Յիշատակումին առիթով, Խորհրդարանի նիստի ընթացքին կ.է. ժամը 16:00-ին, խօսք պիտի առնէ Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ՝
Տիար Վարդգէս Մահտեսեան: Նիստը միաժամանակ պիտի ձայնասփռուի պետական առաջին ալիքէն
ՇԱԲԱԹ, 20 ԱՊՐԻԼ 2024
ԱՐԻԻՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ - կ. է. ժամը 15:00-17:00 Նարեկ Վարժարան, Նիկոսիա
ԿԻՐԱԿԻ, 21 ԱՊՐԻԼ 2024
Aurora's Sunrise - Ֆիլմի ցուցադրութիւն կ.է. ժամը 18:00 (Պանթէոն սինեմա)
Մուտքը ազատ
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 24 ԱՊՐԻԼ 2024
Ս. ՊԱՏԱՐԱԳ - կ. ա. ժամը 09:30-ին, Ս. Աստուածածին Մայր Եկեղեցի: Պիտի պատարագէ ու քարոզէ Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Խորէն Արք. Տողրամաճեան
ՔԱՅԼԱՐՇԱՒ - երեկոյեան ժամը 17:30-ին, քաղաքի կեդրոնէն «Զինա Փալաս»: Կիպրա-Հայկական պուրակէն «Արմենիաս» պողոտայի սկիզբը, ժամը 19:00-ին: ՅԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ - Նահատակաց Յուշարձանին առջեւ, եկեղեցւոյ շրջափակին մէջ, ժամը 19:30-ին:
Պատգամ՝ Խորհրդարանի նախագահ՝ Անիթա Տիմիթրիու
Պատգամներ եւ ելոյթ պիտի ունենայ Ս. Աստուածածին եկեղեցւոյ երգչախումբը
ԼԱՌՆԱԳԱ
Ապրիլ 23-ի գիշերը ժամը 20:00-ին քայլարշաւ եկեղեցիէն մինչեւ յուշարձան եւ մոմավառութիւն:
ԼԻՄԱՍՈԼ
Ապրիլ 24-ին ժամը 17:00-20:00 Արիւնատուութիւն Ս. Գէորգ եկեղեցւոյ սրահէն ներս: Պիտի յաջորդէ մոմավառութիւն Խաչքարին առջեւ:

ՊԱՖՈՍ
ՄՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ – Խաչքարին առջեւ կ. ե. ժամը 18:00-ին:
Հայկական Ցեղասպանութեան Ոգեկոչման Կիպրոսի Յանձնախումբ:

«ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ» ՀԱՏՈՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍԸ



Դժուար է բառերով նկարագրել հայ գիր ու խօսքի, հայ բառ ու բանի հրավառութիւնը, որ տեղի ունեցաւ 4 Ապրիլ 2024-ին, ժամը 15:00-ին, Աւետիք Իսահակեանի կեդրոնական գրադարանի սրահին մէջ, Երան Կերթմենեան Գույումճեանի «ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ» ժողովածուի Շնորհանդէսին:

Ընթերցասէր ստուար հանրութիւն մը լեցուցեր էր սրահը ժամանակէն ալ առաջ, անհամբեր սպասելով շատերուն համար համացանցի հարթակէն միայն ծանօթ ու սիրուած նուաստիս: Բեմի պատին ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍի կողքերն էին՝ Արարատը, ծիրանափայլ, որ իր ճաճանչներով ողողեր էր ամբողջ մթնոլորտը:

Տուեալ ժամուն, հանդիսավար եւ շնորհալի ասմունքող Տիկ. Գայիանէ Սամուէլեանը իր ողջոյնի խօսքով բեմ հրաւիրեց տրուպիս: Այնուհետեւ խօսք առաւ առաջին հերթին Գրադարանի տնօրէնի ժամանակաւոր պաշտօնակատար Տիկ. Ռուզան Բարսեղեանը, որ յատկապէս շեշտեց այն փաստը որ սփիւռքահայ գրողը հայ մշակոյթը, հայ գիրն ու բառը պաշտպանող զինուոր է, ազգային ոգին եւ ինքնութիւնը պահպանողը սփիւռքի դժուարին պայմաններու տակ:

Խօսք առաւ այնուհետեւ բանաստեղծ, հրապարակախօս Տիկ. Ռուզան Ասատրեանը, որ յատկապէս ըսաւ. «Յուշագրութիւնները եւ անցեալ են եւ ներկայ Երան գրողի, մտաւորականի, ազգային գործչի, Հայրենիքից դուրս ապրող, սակայն ամէն վայրկեան Հայրենիքի տրոփիւններով իր սրտի զարկերը կարգաւորող նուիրեալ հայուհու համար, ես կ'ասէի՝ աւելին, քան Հայաստանում ապրող ներկաներից շատերի...Խօսելով գիրքին մէջ

տեղ գտած հրապարակագրութիւններուն մասին, ան արձանագրեց. «Երանը մէկն է իր ժողովրդի այն նուիրեալ զաւակներից, ում գրիչը նոյնպէս թաթախուած է իր ժողովրդի արեան մէջ: Այդ մասին են վկայում գրքում տեղ գտած նրա երեք տասնեակի հասնող հրապարակագրութիւնները: Այդ թւում՝ «Աւարայրէն Արցախ, իսկ հիմա՞», «Հայրենիքը կը սկսի ընտանիքէն», «Արտագաղթը համազգային ողբերգութիւն է», «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ»... «Մենք հայերէնով ենք հայ», «Հայ մօրմէն կը սկսին հայ ընտանիքն ու ազգը», «Մեր առջեւ նոր Սարդարապատ է»..., եւ այսպէս բազմաթիւ խօսուն վերնագրերով ու բովանդակութեամբ»:

Ռուզան Ասատրեան եզրակացուց. «Որքան խոհական, փիլիսոփայական, այնքան պատկերային մտածողութիւն ունի Երան Գույումճեանի պոէզիան: Ըղձանք-Աղօթք բանաստեղծութեան մէջ, նա համոզուած է, որ «ազգը կը գտնէ Արարչագործ պատկերը իր սկզբնական», մէկ այլ՝ «Ես ինձ հետ» բանաստեղծութեան մէջ, պատգամում է՝ «Թէ հողմերը, փոթորիկը քեզ հոս ու հոն տարուբերեն, Կառչիր կամքիդ հզօր կայմին, քալէ ճամբէդ միշտ անվեհեր...»: Յոյսն ու լաւատեսութիւնը միշտ պէտք է լինի իր ժողովրդի բանաստեղծի շուրթերին, որը եւ նրա ուղեկիցն է պոետական որոնումների ճանապարհներին: Բանաստեղծուհու համար՝ «Աշխարհը հեքիաթազուրկ քարէ խիղճ է, Այբուբենի մէկ տառը հայի հոգու կանչ ու ձայն եւ Արարչական լոյսի կայծ...»: Նա...Հայ գրերը ցորենի հատիկի նման հաւաքում է հոգեւոր հաց թխելու համար...»: Գերազանց է: Խօսքս աւարտում եմ իր իսկ տողերով՝ Եղիցի լոյս, թող ծագի նոր արշալոյսին...Թող ծագի եւ բարի ծնունդ ու ընթացք «Ծիրանի լոյսին»...ու հայոց Ազգին» (Ամբողջական խօսքը կու տանք առանձինն):

Կարճ բայց դիպուկ խօսքով հանդէս եկաւ գրող, հրապարակախօս, «Ծիծեռնակ» ամսագրի հրատարակչութեան տնօրէն Տիկ Անուշ Վարդանեանը, ընդգծելով որ գիրքի կողքերուն վրայ պաստառադրուած Արարատի նկարը արդէն կը բացայայտէ գիրքին իմաստն ու խորհուրդը: Բանաստեղծուհին՝ այս գեղեցիկ առիթով, հեղինակին պաշտօնապէս փոխանցեց ՀՀ գրողների միութեան անդամակցութեան վկայագիրը:

Խօսք առաւ Սիլվա Կապուտիկեանի տուն-թանգարանի տնօրէն Տիկ. Արմէնուհի Տեմիրճեան, որ յատկապէս շեշտեց ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ գիրքի յուշագրութեան բաժինին մէջ տեղ գտած պատկառելի անձնաւորութիւններու անունները, ինչպիսիք են Վահէ Վահեան, Վահան Թէքէեան, Գերսամ Ահարոնեան, իմաստաւորելով անոնց խօսքն ու

վերաբերմունքը հայոց լեզուին, հայ մշակոյթին, հայոց հայրենիքին:

Մէջընդմէջ, Տիկ. Գայիանէ Սամուէլեան հաղորդական ու վարակիչ շունչով ընթերցումներ կատարեց Երան Գույումճեանի բանաստեղծութիւններէն, հրապարակագրութենէն, բանախօսութիւններէն, ճաշակ մը հրամցընելով ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ հատորի բովանդակութենէն:

Յայտագիրը ծաղկեցուցին երաժիշտ Մանուկ Յարութիւնեան, սիրուած երգիչ Արսէն Համբարեան, որ շատ գեղեցիկ անակնկալ մը մատուցեց հեղինակին, կատարելով անոր երգի վերածած բանաստեղծութիւններէն մէկը՝ «Կարօտն ունիմ քու սուրբ հողիդ...», այնքան յուզախառով եւ յուզավառ...

Տակաւին տեղւոյն վրայ խօսք առին այլ անձնաւորութիւններ, գրող-հրապարակախօսներ, հայ գիրի մշակներ՝ Մելանիա Պետրոսեանց, Մարի Բարսեղեան Խանճեան, Անահիտ Դանիէլեան, Նայիրա Գասպարեան, Երանուհի Կարապետեան եւ ուրիշներ:

Զիս յատկապէս յուզեց Տիկ. Մելանիա Պետրոսեանցի ելոյթը, ուր ան նշեց. «Մի առիթով կիպրոսցի մի յոյն Երանի մասին ասել է. -Ես նախանձում եմ հայերին, որ Երան ունեն: Ձեր Երան-ների շնորհիւ է, որ հայոց լեզուն անմեռ է մնում աշխարհի բոլոր ծայրերում»:

Շնորհանդէսի աւարտին, խօսքը տրուեցաւ խմբագիր Պրն. Գէորգ Եազըճեանին, որ իր միտքը խտացուց մէկ առանցքային խօսքին մէջ՝ Աւետիք Իսահակեանի, «ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է» նշանակալից խօսքին եւ աւելցուց. ա՛ն որ չի պաշտպաներ իր լեզուն, չի կրնար պաշտպանել իր հայրենիքը: ՊԱՐԶ ՈՒ ԴԻՊՈՒԿ:

Ի վերջոյ խօսքը տրուեցաւ հեղինակին, որ յատկապէս ըսաւ. «Որպէս սփիւռքահայ գրող, դժուար է դիմանալ այսքան ջերմութեան, սիրառատ արտայայտութիւններուն, սրտայոյզ խօսքերուն եւ ի մասնաւորի այս ոգեղէն եւ լուսեղէն մթնոլորտին, զոր կարելի է գտնել միայն ու միայն Մայր հայրենիքէն ներս» եւ շարունակեց. «Պահեր կան մեր կեանքին մէջ, սիրելիներ, խի՛տ ու

խո՛ր պահեր, որոնք կարծէք մեր ամբողջ կեանքը կ'իմաստաւորեն ու կ'արժեւորեն: Այդպիսին է ինծի համար այս պահը, հայրենի հողին վրայ, մեծ բանաստեղծ Աւետիք Իսահակեանի անուան գրադարանի այս սրահին մէջ տեղի ունեցող ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ գիրքիս շնորհանդէսը ի ներկայութեան ձեզ, սիրելիներ: Շնորհակալ եմ բոլորիդ գիրքիս եւ նուաստիս ընծայած ձեր սիրաջերմ վերաբերմունքին համար, ինչ որ ցոյց կու տայ ձեր յարգանքը, սէրն ու հաւատքը հայ գիրին ու հայ գրողին հանդէպ, ի մասնաւորի սփիւռքահայ գրողին հանդէպ, որ կը ստեղծագործէ թիավարելով մայրենի լեզուի նահանջի հզօր հոսանքն ի վեր եւ կը տքնի վառ պահել Մեսրոպեան ջահը ամէնէն տարականոն պայմաններու մէջ»: Իր երախտագիտութեան խօսքը ուղղելէ ետք Շնորհանդէսին մասնակից բոլորին անուն առ անուն, ներկաներուն, գիրքի անխոնջ խմբագիր Պրն. Գէորգ Եազըճեանին եւ իր օգնական Տիկ. Լիւսի Տէօքմեճեանին, Գրադարանի վարչութեան, ան յատկապէս ընդգծեց. «Վաղուց է ըսուած. «Ի սկզբանէ էր բանն», այսինքն բառը, խօսքը...Կը հաւատամ որ ԲԱՌԸ արարչական մեծ ոյժ ունի: Ան ԵՂԻՑԻ ԼՈՅՍ է, որուն նշոյլ ճառագայթն անգամ կրնայ փարատել խաւարը չարածին, կամարել հոգիները իրար եւ համերաշխութեան ծիածան դառնալ սիրտէ սիրտ եւ հոգիէ հոգի: Ճշմարիտ գրականութեան մէջ, բառը, գիրով արտայայտուած, տեսակ մը զրոյց է սեփական հոգիին հետ, ընթերցողին հետ, մեր կողքի մարդուն ու մեր հայրենակիցին հետ, հաղորդակցութիւն է բնութեան, ապրելու խորհուրդին, տիեզերքին եւ Աստուծոյ հետ: Իսկ հայ գրականութեան, հայ բառ ու բանի մէն մի բառը հաղորդակցութիւն է նաեւ ու մասնաւորաբար մեր խոր արմատներուն հետ, հազարամեակներու մեր պատմութեան հետ, հայրենեաց հողին, ՀԱՅ ԸԼԼԱԼՈՒ խորին խորհուրդին հետ: Ան արեան կանչ է ու ցեղի ձայն: Դարերն ու սերունդները իրարու կամարող ոգեղէն ծիածան է ան:....

Կը հաւատամ որ իւրաքանչիւր հայ գիրք որ կ'ընծայուի լոյսին, նշոյլ մը ճառագայթ է ճշմարտութեան, բարիին, գեղեցիկին, չարին դէմ տարուած յաղթանակ է, խղճի արթնացման կոչ է, ազգային ինքնաճանաչման, ազգային ինքնագիտակցութեան, ազգային զգօնութեան հրաւէր է ան, մէկ խօսքով, ազգային-հոգեւոր ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԶԷՆՔ է ՀԱՅ ԳԻՐՔԸ: ՈԳԻԻ ՍՊԱՌԱԶԻՆՈՒՄ է ան: Պիտի աւելցընեմ, որ այս պարագային, արեւմտահայերէնով գրուած գիրքիս պարագային, ան նաեւ ճաշակ մըն է արեւմտահայ բառ ու բանին, որ անբաժանելի մասն է հայոց լեզուի գանձարանին: Ազգի աւելի քան կէսը հաշուող տարագիր արեւմտահայութեան արիւնն է արեւմտահայերէնը, անոր ոգին ու ինքնութիւնը: Բռնախլուած Արեւմտահայաստանի անկողոպտելի շունչն է ան ու ոգին:

Այս խորապրումով ու գիտակցութեամբ գրած եմ ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍը, զոր այսօր կը յանձնեմ ընթերցողիս դատին, ձեր դատին, մաղթելով որ ան արձագանգ գտնէ ձեր ալ հոգիներէն ներս, զանոնք վարակէ այն յոյզ-ապրումներով ու միտք-գաղափարներով, որոնք ներշնչած են զիս...դառնայ ձեզի՝ հոգիի թրթիռ ու մտքի գրգիռ...»: (Խօսքը՝ ամբողջութեամբ, կու տանք առանձինն):

Կարելի է միայն մաղթել ու աղօթել որ շատնա՛ն, շատնա՛ն նման միջոցառումները ի փառս հայ գիր ու դպրութեան ու մշակոյթին, որ մեր երկիրը ծաղկի ու բարգաւաճի խաղաղ երկնքի

տակ եւ ի կատար ածէ դարերէն եկող եւ դէպի գալիք դարերը գացող իր լուսապաշտ եւ լուսարար առաքելութիւնը:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՆԻԿՈՍԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ՅԱՂԹԱՐՇԱՒԸ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Նիկոսիոյ Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ երգչախումբը մեկնեցաւ Ֆրանսա 9 Ապրիլ 2024-ի առաւօտեան ժամը 10:00-ին:
Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ երգչախումբը կը բաղկանայ 60 կրտսերներէ, պարմանուհիներէ ու երէց անդամներէ: Խումբը՝ գլխաւորութեամբ Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Խորէն Արք. Տողրամաճեանի, Նիկոսիայէն ճամբորդեց դէպի Փարիզ:
Երգչախումբին միացան նաեւ ծնողներ՝ 18 հոգի:

Նիկոսիոյ Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ Երգչախումբը՝ համագործակցաբար Ալֆորդվիլի՝ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ ու Փարիզի «Նաւասարդ պարախումբ եւ նուագախումբ»ի հետ, բացառիկ համերգ մը ունեցաւ Չորեքշաբթի 10 Ապրիլի գիշերը, Ալֆորդվիլի Մշակութային Սրահէն ներս 425 հանդիսատեսներու ներկայութեան եւ մեծ յաջողութեամբ կատարեց հայկական երգեր եւ Կիպրական պար մը, արժանանալով ներկաներուն ջերմ ընդունելութեան:
Ի դէպ, նշենք որ “Նաւասարդ”-ը հիմնադրուած է 1967թ-ին Փարիզի մէջ՝ ֆրանսահայ Էդի Ջոլոլեանի նախաձեռնութեամբ: 50 տարուայ պատմութիւն ունեցող համոյթը իր գոյութեան երկար տարիներու ընթացքին պարի եւ երաժշտութեան միջոցով տարածած է հայ մշակոյթը ինչպէս Ֆրանսայի, այնպէս ալ ամբողջ աշխարհի մէջ: “Նաւասարդ”-ը հանդէս եկած է աշխարհի բազմաթիւ հանրայայտ բեմերէն, մասնակցած եւ

դափնեկիրի կոչման արժանացած միջազգային փառատօններուն: Ազգագրական համոյթը ունի 60 արուեստագէտ, ինչպէս նաեւ իր ուսումնական ակադեմիան, ուր կ'ուսանին ֆրանսահայ եւ այլազգի երիտասարդներն ու մանուկները:
Հինգշաբթի օր, Ս. Աստուածածին եկեղեցւոյ երգչախումբը այցելութիւն մը տուաւ դէպի Ֆրանսայի տեսարժան վայրերը:
Այցելութեան ծիրէն ներս, Երգչախումբը ուխտագնացութիւն մը կատարեց դէպի Պատմական Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր Տաճար, ուր ծառայած եւ թաղուած է ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ:
Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Խորէն Արք. Տողրամաճեան եւ Նիկոսիոյ Ս. Աստուածածին Մայր Եկեղեցւոյ կրտսերներու եւ երէցներու խումբէն 65 անդամներ միասին երգեցին «Տէր Ողորմեան»:
Ուրբաթ առաւօտեան, Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ մէջ, պատարագեց ու քարոզեց Սրբազան Հայրը: Պատարագի երգեցողութիւնը կատարեց Նիկոսիոյ Ս. Աստուածածին երգչախումբը:

Նիկոսիոյ Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ երգչախումբը վերադարձաւ Կիպրոս
Շաբաթ, 13 Ապրիլ 2024-ի երեկոյեան ժամը 18:00-ին, գլխաւորութեամբ Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Խորէն Արք. Տողրամաճեանի:

Կը շնորհաւորենք Նիկոսիոյ Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ Երգչախումբը որ բարձր կը պահէ մեր հաւատքի, մեր շարականներու եւ երգերու դարաւոր ջահը, զայն փոխանցելով նոր սերունդի մատղաշ հոգիներուն եւ զայն տարածելով երկրէ երկիր:
ԲՈԼՈՐԻՆ ՎԱՐՁՔԸ ԿԱՏԱՐ:
Ե.Գ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ազատ Խօսք - Էլեկտրոնային Անկախ Պարբերաթերթ
կայք էջ : www.azadkhosk.com
Խմբագիր - Երան Գույումճեան
Թիւ (145) Ապրիլ 2024

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՄԻՇՏ ՉԷ, ՈՐ ՅԱՂԹՈՂԸ ԿԸ ԿԵՐՏԷ

Little Insurrectionist Statue, a child soldier on the Pollish Resistance – July 6th, 2015 – Warsaw, Poland

Դոկտ. Աբէլ քինյ. Մանուկեան, Ժընեւ, 21 փետրուար 2024, ԳԵՂԱՐԴ

Դժուար է ըսել, թէ ճշգրիտ ե՞րբ կամ ո՞վ առաջին անգամ ըսած է՝ «Պատմութիւնը յաղթողն է կերտողը» կամ «Պատմութիւնը յաղթողը կը գրէ»։ Այս թեւաւոր խօսքը, որ միանշանակ պատերազմին կը վերաբերի, յաճախ կը վերագրուի Մեծն Բրիտանիոյ վարչապետ Ուինսթըն Չըրչիլի։ Կ'ենթադրուի նաեւ, թէ ան ազդուած է նացի քաղաքական գործիչ եւ ռազմական յանցագործ Հերմանն Կէօրինկի Գերմանիոյ մէջ արտասանած մէկ ճառէն, որուն մէջ ան ըսած է. «Մենք պատմութեան մէջ կը մնանք կա՛մ որպէս աշխարհի ամենամեծ պետական գործիչներ, կա՛մ ամենավատ չարագործներ»։ Իրողութեան մէջ, այս արտայայտութիւնը, որ պատմութեան հոլովոյթին մէջ մեծ նշանակութիւն ստացած է, շատ աւելի հին է, քան կ'ենթադրուի։

Մեր պատմահայրը՝ Մովսէս Խորենացին, պարթեւ թագաւորութեան եւ Արշակունեաց հարստութեան հիմնադիր Արշակ Ա. Պարթեւին կը վերագրէ այս խօսքը, երբ ան իր եղբայրը՝ Վաղարշակ Ա.-ը, կը կարգէ Հայոց աշխարհի թագաւոր, որ միաժամանակ կը դառնայ հիմնադիրը հայկական Արշակունեաց թագաւորութեան։ Այս առնչութեամբ ան կը մէջբերէ այսօր բոլորիս քաջածանօթ խորիմաստ ասացուածքը՝ ըսելով. «Զի սահմանք քաջաց, ասէ, զէնն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի» («Որովհետեւ, կ'ըսէ, քաջերուն սահմանը իրենց զէնքն է, ինչքան կը կտրէ՝ այնքան կը տիրէ»)։ Այսպէս, Խորենացին նշուած արտայայտութիւնը առնուազն կը տանի մինչեւ Ք.ա. 250–211 թուականները, նոյնիսկ գուցէ աւելի հին կրնայ ըլլալ անոր ծագումը։

Արդարեւ, ռազմական հակամարտութիւններու եւ պատերազմներու աւարտին յաղթողն է, որ կը գերիշխէ իր նուաճած ժողովուրդին եւ մշակոյթին վրայ։ Ան հոն կը նշանակէ իր ուզած իշխանութիւնը, կը թելադրէ իրեն ձեռնտու օրէնսդրութիւնն ու սահմանադրութիւնը, նաեւ կը տարածէ իր լեզուն, որ իրեն համար լոկ հաղորդակցութիւն մըն է՝ պատմական նշանակութենէ եւ ինքնութենէ զուրկ։ Այն հանգամանքները, որոնք հանդիսացած են բուն դրդապատճառները պատերազմի բռնկումին, միակողմանիօրէն ինք կը պատմէ, նաեւ իր շահերուն համապատասխան կը ներկայացնէ անոր աւարտը։ Ան, ինչպէս քիչ առաջ նշուեցաւ, կը նկարագրէ ամբողջ պատմական դարաշրջանը, այսինքն չարափոխելով պատմական փաստերը՝ կը յօրինէ իր պատմութիւնը ու կ'աւանդէ հետագայ սերունդներուն, որոնք զայն կ'ընկալեն իբրեւ ճշմարտութիւն։

Փոքրիկ ապստամբին արձանը՝ Վարշաւիա, Լեհաստան: Յուշարձան՝ նուիրուած մանուկ զինուորներուն, որոնք կռուած ու զոհուած են 1944 թուականին Վարշաւիոյ ապստամբութեան ժամանակ նացի գերմանացիներուն դէմ: Պրոգէ քանդակի հեղինակ՝ Եժի Եարնուշկեվիչ:

Իրատեսութենէ մեկնելով որքան ալ կեանքի բիրտ օրէնքներուն համապատասխան թուին վերոնշեալ մտածումները, պատմութիւնը ցոյց կու տայ շքադրամին դարձերեսը, որ նոյնքան իրական է: Արդարեւ, յաճախ յաղթողները չեն պատմութեան եւ մարդկային քաղաքակրթութեան համարժէք թելադրողներն ու կերտողները, այլ բռնակալներուն դէմ համամարդկային արժէքներու պահպանման, սիրոյ, արդարութեան եւ ազատութեան համար երկարատեւ պայքար մղողները՝ ի վերջոյ ճշմարիտ յաղթանակ ամրագրողները: Հետեւաբար միշտ որոտացող թնդանօթներն ու զօրահրամանատարները չեն պատմութիւնը թելադրողները, այլ անոնց դէմ հերոսական, անզիջող եւ երկարատեւ պայքար մղողները:

Վերջերս պատահաբար հեռախօսիս լուսապաստառին վրայ ցոլաց լուսանկար մը, որ 2020 թուականին Վարշաւիա այցելութեանս առթիւ վերցուցած էի նոյն քաղաքի ապստամբութեան թանգարանին մէջ: Սոյնը կը ներկայացնէր պատմութիւնը Լեհաստանը բռնագրաւած ֆաշիստ գերակշռող ուժերուն դէմ վարշաւացիներուն հերոսական ապստամբութեան, որ տեղի ունեցած էր 1944 թուականին: Այնտեղ կը ցուցադրուէին այդ չարաբաստիկ ժամանակին մասին վկայող բազմաթիւ իրեր, լուսանկարներ, զէնք-զինամթերքէն, անձնական զանազան առարկաներէն մինչեւ ապստամբներուն պատկանող սիրային նամակներ՝ այցելուներուն ապստամբութեան պատմութեան զանազան փուլերուն մասին ամբողջական պատկերացում մը հաղորդելու համար: Պատերուն վրայ եւ տարբեր ցուցափեղկերուն մէջ ներկայացուած վաւերագրական լուսանկարները սահմռկեցուցիչ էին՝ հիմնայատակ կործանած եւ քարուքանդ դարձած Վարշաւիան՝ գերեզմանային լայնածաւալ ու անկենդան տեսարաններով: Չարի թագաւորութեան ուժերուն դէմ անզօր եւ յանձնուած ըլլալու զգացումը ուղղակի ընկճախտ պիտի տար ինծի, եթէ այդ վախազդեցիկ տեսարաններու գորշութեան վրայ չհանդիպէի լուսանկարի մը, որ լոյսի եւ յոյսի առկայծ մը հաղորդեց սրտիս: Արուեստի այդ յօրինուածքը լուսանկարն էր «Փոքրիկ ապստամբին արձան»-ին, որուն բնօրինակ յուշարձանը կանգնած էր Վարշաւիոյ հին քաղաքի պատկառելի թաղամասերէն մէկուն մէջ:

Ապստամբը վտիտ պատանի մըն է, հազիւ տասը թէ տասնմէկ տարեկան, որ գլխուն վրայ կը կրէ նահատակ հերոսի մը ռազմական մետաղեայ խոշոր սաղաւարտը, հագին՝ իր մարմնի չափերէն մեծ բաճկոնակ մը, նմանապէս՝ զոյգ մը զինուորական երկարաճիտ կօշիկ, իսկ վիզէն կախուած է գնդացիր մը: Բնականաբար պատանին տակաւին մանկադէմ է, բայց անոր վրայ բացորոշ են ապագայ տղամարդու դէմքի կտրուածքին գիծերը, այլեւ խիստ տպաւորիչ եւ ցնցող են այդ մեծ սաղաւարտին տակ հազիւ նշմարուող աչքերը, որոնց մէջ ժամանակին հետ քարացած է վրէժը՝ պատանիին պայքարելու անյողդողդ վճռակամութիւնը: Ուժերու անհամեմատելի յարաբերութիւնը, զօրեղին դէմ տկարին մղած անհեռանկար թուող պայքարին բնական տրամաբանութեան մէջ չսեղմուող իրողութիւնը հոս ամենեւին չէ կարեւորը, այլ բռնակալութեան դէմ խրոխտ կեցուածք դրսեւորելու, բարբարոսութիւնը մերժելու եւ անոր դէմ մինչեւ վերջ մարտնչելու կամքի առկայութիւնն է էականը, որ ահաւասիկ իր յուսաժպիտ անձին մէջ կ՚արձանացնէ այդ փոքրիկ ապստամբը:

Այս լուսանկարը իրօք թարմացուց յիշողութիւնս եւ յուզախառն մտածումներս ուղղորդեց դէպի մեր մօտ անցեալը՝ պատահած իրադարձութիւններուն բովանդակ անբարեյուսութիւնը եւ այսօրուան անկայուն իրականութիւնը, որուն յանձնուած ըլլալու անզօրութեան զգացումը տակաւին կը ճնշէ մեր միտքը։ Պիտի չուզեմ յանկերգել վերջին պատերազմին մեր կրած ծանր պարտութեան եւ անփոխարինելի կորուստներուն պատմութիւնը, անդրադառնալ հարեւան թշնամիին ծաւալապաշտական նկրտումներուն, մեր ազգային բազմադարեան պատմութիւնը զեղծելու եւ մշակոյթ թալանելու իր մշակած ծրագրերուն, որոնք նաեւ այսօր Դամոկլեան սուրերու պէս կախուած են մեր գլխուն վրայ։ Այնուամենայնիւ, հակառակ այս իրողութեան, միջազգային պատմութիւնը, առաւել եւս մեր ազգայինը կու գան մեզի պատգամելու, որ ոչ մէկ բռնապետ, ոչ մէկ նախայարձակում (ագրեսիա) իրականացնող պետութիւն ցայսօր չէ կրցած զէնքի ուժով ճնշել թէկուզ իրմէ յաղթուած ժողովուրդ մը. տիեզերքի մէջ ոչինչ աւելի ուժեղ եւ տոկուն է, քան մարդուն մէջ գոյութիւն ունեցող բնածին ազատ ապրելու ցանկութիւնը, որուն ոչ մէկ իշխանութիւն երկարաժամկէտ չի կրնար դէմ կանգնիլ, ոչ իսկ ամենազօրեղ բռնակալ մը իր գերիզօր բանակով եւ գերարդիական զէնքերով։

Այս առումով պատմութիւնը փառահեղ փաստեր արձանագրած է իր ոսկիէ էջերուն մէջ, որոնց անունները,– ըլլան անոնք անհատ հերոսներ թէ հաւաքականութիւններ,– յաղթանակի դափնիով պսակած է՝ վերածելով զանոնք կենդանի խորհրդանշաններու կամ մնայուն ներշնչարանի մը բռնաճնշուած անհատներու եւ ազգերու համար։ Առանց ծանրաբեռնելու առկայ յօդուածին միտք բանին, պիտի ուզէի քանի մը կարկառուն օրինակներ նշել պատմական նման իրադարձութիւններու. Նախակրթարանի տարիներուն, կրօնի դասերէն տակաւին ի տղայի տիոց սորված ենք Աստուածաշունչին աւանդած ամենայայտնի դրուագներէն Դաւիթի ու Գողիաթի պատմութիւնը։ Այս աւանդութեան հիմնական ուղերձը այն է, որ չափն ու ուժը միշտ չէ, որ հակամարտութիւններու առթիւ գերիզօրին ի նպաստ վճռորոշ ելք մը կ’ապահովեն։ Դաւիթ, որ երիտասարդ հովիւ մըն էր, կը տապալէ զինք մենամարտի կանչած հսկայ Գողիաթը՝ իր պարսատիկէն արձակած ընդամէնը քարով մը։ Այս պատմութիւնը յաճախ կը մեկնաբանուի իբրեւ պերճախօս օրինակ, թէ ինչպէ՛ս կրնան քաջութիւնը, հաւատքն ու հմտութիւնը աւելի կարեւոր ըլլալ, քան ֆիզիքական ուժը կամ արտաքին հանգամանքները։ Արդարեւ, կարելի է յաղթահարել մեր առջեւ ծառացած նոյնիսկ անյաղթահարելի թուող խոչընդոտները, եթէ մեր ներսիդին առկայ է վճռականութեան, ինքնավստահութեան եւ յարատեւութեան անխորտակելի ոգին։

Դասական հանրածանօթ օրինակ մըն է նաեւ Մարաթոնի ճակատամարտը, որ տեղի ունեցած է Ք.ա. 490 թուականին՝ պարսիկներուն եւ աթենացիներուն միջեւ։ Մարաթոնը անհաւասար ուժերու՝ պարսիկներու սպառազինուած գերակշռող բանակին դէմ աթենացիներուն թիւով շատ աւելի փոքրաքանակ ռազմիկներու մղած ինքնապաշտպանական ճակատամարտն էր, որ կ’աւարտի փայլուն յաղթանակով մը՝ շնորհիւ իրենց ցուցաբերած վճռականութեան եւ հմուտ մարտավարութեան։ Ճիշդ օգտագործելով իրենց իմացութիւնը սեփական երկրին, միջավայրին եւ աշխարհագրական տեղանքին մասին, նաեւ իրագործելով վազքի իրենց բացառիկ կարողութիւնները, աթենացիք կրցան անակնկալի բերել պարսիկ զօրաբանակը եւ ջախջախել զայն։ Այս պատմական ճակատամարտը ցոյց կու տայ, որ նոյնիսկ գերակշռող ուժերու դէմ վճռական եւ ռազմավարական հմուտ դիմադրութիւն ցուցաբերել միշտ ալ կարելի է։ Պէտք չէ վախնալ

թշնամիին ուժէն եւ բանակներու թուաքանակէն, եթէ յաղթուածը տակաւին իր մէջ կը կրէ ազատասիրութեան, հայրենասիրութեան ու դիմադրողական ոգիին առկայծումները։

Աւելին՝ Մարաթոնի ճակատամարտը յաճախ կը խորհրդանշէ ժողովրդավարութեան եւ ազատութեան յաղթանակը օտար տիրապետութեան եւ բռնակալութեան դէմ՝ ի խնդիր հայրենիքի անկախութեան եւ ազգի ազատութեան, որոնց պաշտպանութեան համար ոչինչ պէտք է խնայել, նոյնիսկ սեփական կեանքը։

Դասական ուրիշ օրինակ մը կը ներկայացնէ Թերմոփիլէսի ճակատամարտը Ք.ա. 480 թուականին։ Սփարթայի թագաւոր Լէոնիտասի գլխաւորութեամբ յոյն ռազմիկներու փոքրաթիւ գունդ մը՝ ընդամէնը 300 քաջամարտիկէ բաղկացած, կը դիմադրէ Քսերքսես Ա.-ի առաջնորդած թէ՛ քանակով եւ թէ՛ սպառազինութեամբ գերակշռող ուժին։ Թէեւ եռօրեայ այս ճակատամարտին ընթացքին սփարթացիներ կը նահատակուին, սակայն Թերմոփիլէսի ճակատամարտը եւ սփարթացիներուն հերոսական դիմադրութիւնը կը դառնան յոյներու արիութեան եւ ազատասիրութեան խորհրդանիշը՝ դարէ-դար ներշնչելով բանաստեղծներ, արուեստագէտներ, բազմաթիւ յեղափոխականներ եւ բռնութեան դէմ պայքարող ազատամարտիկներ։

Բայց ինչո՞ւ խորասուզուիլ օտար ազգերու պատմութեան էջերուն մէջ, երբ մեր ազգին՝ հայ ժողովուրդի բազմադարեան պատմութիւնը սկիզբ առած է ազատասիրութեան փառաշուք փաստով։ Աւանդութի՞ւն, թէ՞ պատմական իրողութիւն, ի՞նչ փոյթ, երբ ժողովուրդիդ գոյառման հիմքը, հայ անունդ եւ Հայաստան դրախտավայր երկիրդ Հայկ նահապետիդ անունէն, անոր արիւնէն, հայկազուն տոհմէն եւ բռնակալ Բելին դէմ մղած իր յաղթապանծ ճակատամարտէն յառաջացած է։ Դժուար է ըսել, ազատատենչ մեր նահապետը եթէ երբեք ընդառաջէր Բելին եւ ենթարկուէր անոր իշխանութեան, արդեո՞ք գոյութիւն պիտի ունենար հայ ժողովուրդը։ Ի՛նչ ալ ըլլար, Թորգոմայ տան եւ հայկազեան ցեղին ժառանգորդ ըլլալու իրողութիւնը արժանապէս հպարտութիւն կ՚առթէ եւ բացառաբար այն մենաշնորհը, որ ոչ թէ ստրուկ ցեղի մը զաւակներն ենք, այլ սաղարթներն ենք Հայկական Լեռնաշխարհի հողին մէջ աճած հաստաբուն այն կաղնիին, որուն հաստարմատը կազմաւորուած ու սնած է ազատութեան եւ անկախութեան աւիշով։ Դարերու թէժ քուրային մէջ կոփուած ինքնութիւն մըն է ան, որուն կրողներն ենք մենք բոլորս՝ հայկազեան ցեղի զտարիւն ժառանգորդ դուստրերս եւ ուստերս։

Տակաւին վերջերս ազգովին կրկին անգամ ոգեկոչեցինք 1573 տարի առաջ Աւարայրի դաշտին վրայ տեղի ունեցած Վարդանանց ճակատամարտին ներշնչող յիշատակը։ Թէպէտ քաջն Վարդան եւ իր զինակիցները պարսկական գերակշռող ուժին դէմ զոհաբերելով իրենց կեանքը յաղթուեցան, բայց անոնց ըմբոստութիւնը, Վարդանանց պատերազմը Վահանեանց հետեւողական շարժումով եւ Նուարսակի 484 թուականի դաշնագրով յաղթանակով պսակուեցաւ։ «Վասն Յիսուսի, վասն հայրենեաց» Վարդանանց կարգախօսը ոտքի կոխան չդարձաւ, այլ դարերու փոթորկումներուն մէջ միշտ ալ շողաց հայոց ազատագրական գոյամարտի փողփողուն դրօշին վրայ։

Պատմութեան հոլովոյթին մէջ հայ ժողովուրդը չէ զլացած շարունակելու իր երթը եւ մղելու իր անհամար գոյապայքարները իր երկիրը ասպատակող տիրակալ օտար ուժերուն եւ

զաւթիչներուն դէմ։ Թէպէտ անոնք վոհմակներով վայրենի մեր երկիրը յաճախ վերածած են ողբի եւ որբի հայրենիքի մը, խրած են իրենց սուրերն ու նիզակները մեր ժողովուրդի արիւնաքամ սրտին մէջ, սակայն միշտ ալ ձախողած են լլկելու հայու հոգին ու եղած են անկարող զգետնելու անոր մէջ աննահանջ սէրը հանդէպ ազատութեան եւ անկոտրում կամքը նորէն ու նորէն կերտելու իր անկախ պետականութիւնը։

Պարոյր Սեւակ, հայոց անմահանուն բանաստեղծը, որուն ծննդեան 100-ամեակը այս տարի արժանաբար պիտի նշեն հայ ժողովուրդի երախտաշատ զաւակները ի Հայաստան եւ սփիւռս աշխարհի, որքան լաւ ըմբռնած եւ պերճախօս պատկերով ցոլացուցած է ազգային այս գերազանց արժանիքը Սարդարապատի հերոսամարտին նուիրուած իր բանաստեղծութեան մէջ.

«Երբ չի մնում ելք ու ճար,
Խենթերն են գտնում հնար,
Այսպէս ծագեց, արեգակեց
Սարդարապատի մարտը մեծ։

Զանգեր, ղօղանջէք,
Սրբազան քաջերին կանչէք
Այս արդար պատից։
Սերունդներ, դուք ձեզ ճանաչէք
Սարդարապատից։

Աւարայրից ջանք առանք,
Այստեղ մի պահ կանգ առանք,
Որ շունչ առած շունչներս տանք
Սարդարապատի պատի տակ։

Բայց մենք չընկանք, մենք միշտ կանք,
Մենք չյանգանք՝ դեռ կը գանք,
Երբ տան զանգը, ահազանգը,
Որ մեր հոգու պարտքը տանք»։

Արդարեւ, ռազմական ոչ մէկ երաշխիք գոյութիւն ունէր Սարդարապատը շահելու։ Հիւծած Հայաստան մը՝ վտանգուած մահաբեր համավարակներով եւ ցեղասպանութենէն մազապուրծ հազարաւոր գաղթականներով ու սովահար որբերով գերբեռնուած, յիրաւի ընկղմած տնտեսական ու քաղաքական ճգնաժամի մէջ։ Սակայն եւ այնպէս, շնորհիւ հայ հերոսներու անձնուրացութեան, Արամ Մանուկեանի, Թովմաս Նազարբէկեանի, Մովսէս Սիլիկեանի, Դանիէլ Բէկ-Փիրումեանի, Պօղոս Բէկ-Փիրումեանի, Քրիստափոր Արարատեանի հմուտ մարտավարութեան, նաեւ բազմաթիւ շարքային կռուողներու արիութեան, հայ ժողովուրդի հոգեւոր եւ աշխարհական ուժերուն ցուցաբերած միասնականութեան, բռնցքաւորուելու բացառիկ կամքի դրսեւորման, թուրք ջարդարարներու՝ Եաքուբ Շեւքիի, Քեազըմ Գարապեքիրի եւ Համտի Պէյ-Փիրսելիմօղլուիի

առաջնորդած զօրաբանակները ջախջախիչ պարտութիւն կրելով ստիպուած եղան նահանջելու։ Այսպէս, Սարդարապատի ինքնօրեայ ճակատամարտը պսակուեցաւ հայոց լիակատար յաղթանակով՝ մեծապէս նպաստելով նորահռչակ Հայաստանի Ա. Հանրապետութեան ծնունդին ու կայացման։

Ի դէպ, բոլորովին աւելորդ պիտի չըլլար անդրադառնալու այստեղ մերօրեայ պատմական իրադարձութեան, երբ ֆաշիստ ուժերու դէմ ֆրանսական դիմադրութեան առաջամարտիկ նահատակ հերոսներէն Միսաք Մանուշեան իր կնոջ՝ Մելինէի հետ, կ'արժանանան Ֆրանսայի Հանրապետութեան յետմահու շնորհած բարձրագոյն պատիւին՝ իրենց աճիւններուն պանթէոնականացումով։ Հայ ժողովուրդի տիրական զաւակները իրենց անմնացորդ զոհողութիւններով, ընդհուպ մինչեւ սեփական կեանքի զոհաբերութեան գնով ոչինչ խնայած են նպաստելու համար պատմութեան այն հզօր պայքարներուն, որոնք մղուած են բռնակալութեան, բարբարոսութեան եւ խաւարի կործանարար ուժերուն դէմ։ Ահաւասիկ հոս ալ միշտ չէ, որ ուժը կ'իշխէ եւ բռնակալը կը թելադրէ պատմութեան ընթացքը։ Ֆրանսական դիմադրութիւնը գերմանաֆաշիստական գերակշռող ուժին դէմ պերճախօս վկայութիւն մըն է, որ վերջին խօսքը սիրոյ, ազատութեան եւ մարդկային մնայուն արժէքներու համար մղուած պայքարին կը պատկանի։ Միսաք Մանուշեան եւ իրեն հետ նահատակ իր 23 ընկերները իրենց կեանքով, հերոսական գործով ու պարտաւորեցնող յիշատակով այս համոզումին կրանիթեայ վկայութիւններէն են։

Պատանեկութեանս օրերէն այսօրուան պէս կը յիշեմ Պէյրութի հարաւային արուարձանին՝ Տահիէի շրջանին մէջ ապրող լիբանանցի եւ ոչ-լիբանանցի շիա համայնքին պատկանող ժողովուրդին թշուառ վիճակը։ Ծովափնեայ անսահման տարածքին երկարող այդ վրանաշէն կամ թիթեղաշէն տուները, որոնց անհիւրընկալ միջավայրին մէջ կ'ապրէր հազարներու հասնող խղճալի ժողովուրդ մը, չունէր նոյնիսկ ինքնութիւն կամ մարդավայել կեանք մը ապրելու որեւէ հեռանկար։ Այրերը մեծաւ մասամբ իրենց օրապահիկը կ'ապահովէին պատահական ծառայութիւններ կատարելով, իսկ երեխաներու բանակ մըն ալ օրը կ'անցընէր մուրացկանութեամբ՝ թափառելով քաղաքին աղմկոտ մայթերուն վրայ։ Բայց առանց նախապաշարումներու պէտք է գնահատել անոնց ներկան, թէ այդ անբարեյոյս բազմութիւնը այսօր ի՛նչ եղաւ։ Կարիքը, զրկանքը, ճնշող աղքատութիւնը, բայց ա՛լ աւելի իրեն հանդէպ զլացումը՝ տալու մարդկային արժանապատուութեան նուազագոյն իրաւունքը, անզիջող պայքարներու բորբ քուրային մէջ ծնաւ հմուտ ղեկավարութիւն մը, որ համախմբեց եւ կազմակերպեց այդ ժողովուրդը՝ ձեւաւորելով կուսակցութիւն մը, որ ինքզինք կոչեց «Աստուծոյ կուսակցութիւն»։ Լիբանանի շիա համայնքը ներկայացնող այս կուսակցութիւնը հետզհետէ կրցաւ դառնալ ոչ միայն երկրին, այլեւ ամբողջ Մերձաւոր Արեւելքի ամենապատկառազդու քաղաքական եւ ռազմական ուժերէն մին, զոր այսօր ստիպուած են հաշուի առնելու նաեւ աշխարհի գերհզօր տէրութիւնները, ինչ փոյթ, թէ անոնք բացասական ինչպիսի անուններով կը պիտակաւորեն զինք։

Անշուշտ միշտ կարելի է առարկել՝ ըսելով, թէ վերոնշեալ շիա ժողովուրդը հեղինակութիւն ստացաւ աջակցութեամբ այս կամ այն պետութեան տրամադրած նիւթական եւ ռազմական օժանդակութեան։ Բայց ոչ ոք կ'օգնէ անկարի մը, երբ ան կազմակերպուելու եւ ջոլիր մը ըլլալէ անդին լուրջ հաւաքականութեան վերածուելով իր անձին հանդէպ համապատասխան յարգանք չի պարտադրեր։ Ի վերջոյ պէտք է տարբերիլ խոտաճարակ անասուններու ցեղին պատկանելու ստրկահոգութենէն, այլ պէտք է խրոխտանալ, բռունցք

բարձրացնել, գիտակցական բարձրագոյն մակարդակի հասցնել սեփական անձիդ եւ ժողովուրդիդ արժանապատուութեան զգացումը, սէրը ազատութեան, անկախութեան եւ ինքիշխանութեան հանդէպ։ Ոչ թէ յարգանք մուրալ օտարէն, այլ զայն օտարին պարտադրել։ Ա՛յս է մերօրեայ իմաստը Խորենացւոյն «Սահման քաջաց զէնն իւրեանց» վերոնշեալ պատգամին։ Հարկ է զայն ճիշդ թարգմանել մեր ներկայ կեանքին մէջ ու կենսագործել հայօրէն։ Բռնակալին առջեւ միշտ վիզ եւ ծունկ ծռողն ու մէջքը խոնարհողը վերջաւորութեան կուզ կը մնայ։ Ի վերջոյ, բռնակալները չեն, որ կը ստեղծեն բռնակալութիւնը, այլ ստրկահոգի մարդակերպ ջոլիրը։

Միջազգային պատմութենէն եւ հայ ժողովուրդի դարաւոր անցեալի ոսկեզօծ էջերէն բերուած վերոնշեալ վկայութիւնները վառ օրինակներ կը հանդիսանան, թէ ինչպէ՛ս ենթադրաբար աւելի թոյլ թուող անհատներն ու խումբերը կրցած են ընդդիմանալ, անխոնջ պայքարիլ եւ ի վերջոյ յաղթել հզօր հակառակորդներուն իրենց ամուր վճռակամութեան, կազմակերպուածութեան եւ, յատկապէս, իրենց թիկունքը կեցած համաժողովրդային զանգուածներու նիւթաբարոյական օժանդակութեան շնորհիւ։ Այս իրադարձութիւնները մարդկային կամքի փոխակերպող ուժի ցայտուն վկայութիւններ են, որոնք ցոյց կու տան, որ անկախ պարագաներէ, թէ ինչքան բիրտ ու ճնշող կը թուին ըլլալ խոչընդոտները, միեւնոյնն է, արդարութեան եւ ազատութեան հաւաքական ձգտումը ունի այն անսպառ եւ վերանորոգ ուժը՝ հակազդել կարենալու համար հին եւ նոր սուլթաններու սպառնալիքներուն եւ քանդելու անոնց շինծու ժողովրդավարութեան քօղով ծածկուած բռնատիրական վարչաձեւը՝ ամրագրելով նոր եւ ազատ, ստեղծագործ ու շինարար կեանք մը ապրելու իրաւունքը։

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՌԱԶՄԱԿԱՊԻԿՈՒԹԻՒՆ ԵՒ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱՄԻՄՈՍՈՒԹԻՒՆ

Պարոյր Յ. Աղպաշեան
- Կազա - Պէյրութ - Դամասկոս։
- Պաղեստին - Լիբանան - Սուրիա։
- Նաթանիահու - հրէիզմ - մասոնիզմ։
- Արիւն - ջարդ - սպանդ։
- Աւերում - փլատակում - քանդում։



Այս է, որ տիրէ քիչ մը ամէն տեղ, բայց, ամենէն աւելի՝ վերոյիշեալ առանցքներէն ներս։

Խելակորոյս, խելացնոր ու խելագար երկիր մը՝ Իսրայէլ, իր անմարդկայնութեամբ, անասնութեամբ, հրէշութեամբ ու ճիւաղութեամբ, անմեղներ կը հնձէ, երեխաներ կ'անճիտէ, անկարներ կը ռմբահարէ եւ, առհասարակ, ժողովուրդ կը հրկիզէ, զարմանալիօրէն, ինքզինք հռչակելով անմեղ, իրաւացի, պաշտպանուողի դերով, բրտանալու իրաւունքով։

Մեծապետական պետութիւններ, իրենց այլանդակ ու խայտառակ, ցնորամիտ ու մտացածին, արդարամիտ ու քաղաքակիրթ միջամտութիւններով եւ յաւակնութիւններով (ի՛նչ հեգնանք), աշխարհը կ'ուզեն համոզել, որ իրենք խաղաղապաշտ են, անդորրասէր, կողքին կանգնելով անիրաւուածին, պաշտպանելու զոհերը, այլեւ՝ ոտնակոխելու բռնատէրերը եւ անկիւնաւորելու անսաստողները։

Այնուամենայնիւ, լկտի ու լիրբ ոսոխը, իր փայլուն տարազով, բայց, ներխած ներքինով, ինքնահաւան վարք ու բարքով, բայց, ամբարտաւան նկարագիրով, անմեղունակ մօտեցումով, բայց, շիլ ուղիով, կը շարունակէ աշխարհին ներկայանալ որպէս հալածեալ, հետապնդեալ ու խաչակրեալ հաւաքականութիւն մը (ո՛չ ժողովրդային), որ կը փնտռէ ու կը պաշտպանէ իր ինքնութեան (՞) արժանապատուութիւնը ու քաղաքացիութիւնը:
Եթէ ա՛յս է իսրայէլեան հոգեբանութեան ու մտայնութեան «ազգամեծարութեա՛ն» իրաւունքը, իսկ նոյն այդ մեծապետականները զօրավիգ են անոր պատշպանութեան ու գոյատեւութեան երթին, կը մնայ այս վերջինները նկատել, միմիայն միմոսներ ու ծաղրածուներ, որոնք կը շահագործեն ամէն ինչ, յանուն իրենց.
- Անպարկեշտութեանց
- Խաղքութեանց
- Այլամերժութեանց
- Սնամեծառութեանց
- Անիրաւութեանց
Այս մատնանշումները դարաւոր անցեալ ու պատմութիւն ունին, մարդկութիւնը, աւելի ճիշդ՝ մարդ արարածները, իրենց ծնունդէն ի վեր «ԱԴԱՄ»ական ոգիով կը գործեն, կը շարժին ու կը յարաբերին, հետեւաբար, իրենց յաջորդները կամ ժառանգորդները կրնա՞ն այլընտրանք ունենալ կամ այլաձեւ ապրիլ:
***
Բնական է, նման իրավիճակի մը մէջ, երբ գործողի ու դիտորդի, օգտուողի եւ անտարբերի լծակներ կան, մերթ այս, մերթ այն կողմերէն, ի՞նչ կարելի է սպասել կամ ակնկալել. հրա՞շք, մեծագործութի՞ւն, չէզոքութի՞ւն, թէ՞ անկողմնակալութիւն:
Ոչ թէ միամտութիւն, այլ՝ բթամտութիւն է նման տրամաբանութեամբ խորաչափելը եւ արժեւորելը, քաղաքականութեան կշիռներ զետեղելով իրենց ճշգրիտ հունաւորումին մէջ:
Չկա՛յ նման տարբերակ, ո՛չ ալ կան, անոր մօտիկ թէ հեռաւոր գործունէութեանց ծիրէն ներս ձեւաւորուած ու համատեղուած դաշտեր, ուր մեծապետականին մօտ (իբր թէ) կը յայտնուին հակազդեցութեան, գթասրտութեան, արդարութեան, համօգնութեան, անկեղծութեան ու հաւասարութեան չափանիշներ:
Ընդհակառակը՝ կան զիրար կուլ տուող ախորժակներ, բզքտող տրամադրութիւններ, խաչաձեւող փորձեր, ուր մեծապետականները միշտ առաջին կարգի վրայ են, թէկուզ՝ երեւելի եւ աներեւելի իրենց ուրուկաններով, կեղծաւորութիւններով, սնոտիապաշտութիւններով, նենգամտութիւններով եւ, ամենէն վտանգաւորը, իրենց սադայէլական ծրագիրներով ու դաւադրութիւններով, փշրելու ու քանդելու դիմացինը, ոչնչացնելու կամ պառակտելու անոր էութիւնը:
Հոս պէտք է յիշել (առանց մոռնալու), որ այս հրէծին պետութեան վոհմակները չե՞ն, որոնք 44օրեայ Արցախեան գրոհին, իրենց զինամթերքներով, զինուժով ու վարձկաններով, զայն աքցանեցին ու դարպասեցին, որոնց պատասխանը, թէկուզ քաղաքական ու դիւանագիտական հիմունքներով չտրուեցաւ, ո՛չ հայկական կողմէն, ո՛չ ալ համաշխարհային:
Ի՞նչ կը նշանակեն այս անյարիրութիւնները եւ անչափութիւնները, որոնք կը պարտադրուին փոքր պետութիւններու նկատմամբ, բայց, գերազանցապէս մեծապետականներու ոտնձգութեամբ, յափշտակութեամբ ու վայրենաբարոյութեամբ:
Ի դէմս այն ցեղասպանական գործողութիւններուն եւ ոճրարքներուն, որոնք տեղի կ՚ունենան բազմաթիւ ոլորտներէ ներս, մարդկութեան, երեխաներու, ընտանիքներու ու հաւաքականութիւններու նկատմամբ, հետաքրքրական է, յանուն ինչի՞, որմէ՞ հարցեր լուծելու կամ պատասխաններ պահանջելու, իսկ մեծապետականները արդեօ՞ք այդքան կարճատես կամ անիրատես են, որ չեն տեսներ, թէ իրենց «հովանաւորեալ»ները երբեք այն

չե՛ն, ինչ որ իրենք կը կարծեն եւ կը հաւատան անոնց, (իբր թէ) խաղաղութիւն բաշխելով բոլորին:
***
Վերջին հաշուով, այն պետութիւնները, որոնք կը յաւակնին ըլլալ տիրականներ ու տիրողներ, իշխանութիւններ եւ իշխողներ, հզօրութիւններ ու հզօրներ, արդեօ՞ք իրենց դերակատարութիւններուն ու գործունէութիւններուն, դիւանագիտութեան ու քաղաքականութեան մէջ, իրաւունք ունին գտնուելու սանձարձակ, անզուսպ եւ անպատասխանատու դրութիւններու… հովերգութեան մէջ:
Այսպիսիներու մեծութիւնը եւ հեղինակութիւնը, կրնա՞յ այն աստիճանի վայրենացնել ու վայրագացնել իրենց ախորժակներն ու քմայքները, որ իրենք զիրենք նկատեն տիրակալներ, իսկ փոքր ժողովուրդները (կամ պետութիւնները) իրենց ճորտերը:
Տարօրինակ եւ անբնական չէ՞ որ «ճորտ»ատէրերը, այնքան լքատուած են, որ իրենք, ուրիշներու հաշուոյն.
- Քարտէսներ կը մշակեն
- Սահմաններ կը գծեն
- Հողեր կը յանձնեն (կը գրաւե՞ն)
- Շրջաններ կը բաժնեն
- Իրաւասութիւններ կը հռչակեն
- Լիազօրութիւններ կը յայտարարեն
- Բռնութիւններ կը պարտադրեն
- Պատժամիջոցներ կը սահմանեն
- Որոշումներ կ’առնեն
- Ծրագիրներ կը յօրինեն
- Այս բոլորը այն տպաւորութիւնը ձգելով, որ իրենցմէ վար գտնուողներ, տկար վիճակի մէջ խարխափած, անկարութեան մատնուած պետութիւններ, մէկական «ազարակ»ներ են, որոնց հետ վերաբերուիլը, ըստ կամս է, ուր չափն ու սահմանները, միշտ կախեալ են իրենց հաշիւներէն:
Անշուշտ, վերին օթեակներուն մէջ թառածներ, հիւանդագին բարդութեամբ համակուածներ են, ուր ամէն ինչ ընելը եւ ամէն ուղղութեամբ շարժիլը, իրենց համար գերագոյն պարտականութիւններ ու պարտաւորութիւններ են:
Ցիմարութիւն է կարծել (կամ հաւատալ), որ մեծապետականները դրական կամ օգտաշատ «բարիք»ներ կը մատուցանեն այլոց, իսկ եթէ, իրօք, այդպէս է, ապա անոր մէջ պէտք է տեսնել, առնուազն խորհրդաւոր ու կեղծատիպ դիտաւորութիւն մը, որ միայն կը ծառայէ ենթակայ կողմին:
Արագ հայեացք մը կամ շրջապտոյտ մը նման շրջաններէ եւ առանցքներէ ներս, անմիջապէս ցոյց կու տայ, որ անկեղծութիւն եւ արդարութիւն, պարկեշտութիւն եւ հոգածութիւն փնտռելը մեծապետականներուն մօտ… ցնորք մըն է, որովհետեւ, աւելի քան բացայայտ ու թափանցիկ է, որ «տուժեալ» կողմեր, միշտ ալ կը գտնուին անվերականգնելի եւ անուղղայ ընթացքի մէջ, ենթակայական հոգեբանութեամբ ու ժառանգական ախտավարակութեամբ, յուշելով որ իրենց դառն ճակատագիրը չունի հիմնական կամ մնայուն լուծումներ:
***
Թերեւս այս զարտուղի խաչմերուկներուն վրայ, ամենէն աւելի ողբերգականն է՝ Հայաստանի պարագան, որ ըլլալով դիւրաբեկ «որս» մը, դատապարտուած է ստրկանալու, մերթ թշնամիին՝ մերթ Արեւմուտքի ճիւաղին առջեւ:

Առաջինը, իր պայմանները չյարգուելու ու չգործադրուելու սպառնալիքով (եթէ հայկական չորս շրջանները իրեն չյանձնուին), պատերազմ կրնայ յայայտարուիլ, որուն դիմաց, վարչապետ Նիկոլ Փաշինեան, ընդունած (՞) է համակերպիլ Ալիեւի սադրանքներուն:
Երկրորդը, սատանայական Արեւմուտքի տխրահռչակ դերակատարութիւնն է, Նիկոլը «գրպանել»ով եւ անոր յեղյեղուկ նկարագիրէն օգտուելով, իր կառքը առաջ մղել, մոռնալով իր միամիտ ու կեղծ սիրաբանութեան լարախաղացութիւնները:
Բոլոր պարագաներուն, կորսնցնողները կ'ըլլան բոլոր անոնք, որոնք խնդրարկուի վերարկուով կը ներկայանան, խամաճիկի դիմանկարներով, իսկ յաղթողները՝ սին ու փուճ պատմուճաններով հանդիսապետերը, աշխարհը՝ իրենց տաք ու պաղ երեսներով, ճնշող ու վարկաբեկող սլաքներով, խեղճացնող ու շահագործող միտումներով, մարդկութիւն լլկելու, արժանապատուութիւն ոտնակոխելու, ինքնութիւն արատաւորելու, անհատականութիւն խեղդելու գնով, կոտորածներ ու կողոպուտներ կազմակերպել, իւրացումներ եւ առգրաւումներ կատարելով, պղծագունդեր սարքելով:
Այս ակնարկութիւնը եւ անդրադարձը, մեզ կ'առաջնորդէ, հայկական իրականութեան զուգահեռ, Պաղեստինեան թղթածրարին, որուն պատճառով նման ընդհանրացում մը կատարեցի, շեշտելու համար, իսրայէլեան ռազմակապիկութեան ու ռազմագիժութեան այլանդակութիւնները, բայց, գլխաւորաբար Արեւմուտքին եւ առհասարակ արաբական աշխարհին թուլակազմութիւնն ու թուլամորթութիւնը, ի լուր ամբողջ ազգութեան մը խողխողումին, նորածիլ սերունդներու բնաջնջումին, հայրենիք մը արմատախլելուն:
Տակաւին ի՜նչ երեսով, Արեւմուտքը կը գեղգեղէ մարդասիրութեան, խաղաղասիրութեան եւ արդարասիրութեան լոզունգներով, երբ իր ձեռքերն ու մռութը, դէմքն ու ոգին, ամբողջութեամբ արիւնոտ են, ճիշդ այնքան որքան իսրայէլեան գոյութիւնը:
Իսկ դուք՝ հայութի՛ւն, տակաւին ի՜նչ կը մոլտաք ու կը մրմնջէք, Արեւմտեան կողմն աշխարհի ընդմէջէն, լուսաւորութի՞ւն փնտռելով…:
(Պէյրութ)

11/4/2024

ՅԻՇՈՒՄՆ

« Մի ժողովուրդ չունի ապագայ՝
երբ չունի յիշողութիւն »
Ֆերդինանդ Ֆոշ

Յիշել որեւէ դէպք, արարք կամ անձնաւորութիւն համազօր է վերապրել երեւոյթը գնահատել, արժեւորել: Այն լինում է անհատական կամ համայնական երբ որեւէ երեւոյթ առնչուում է հասարակութեանը:

Ապրիլ 5-ին Բրիւսելում տեղի ունեցած վարչապետի եւ ԵՄ, ԱՄՆ ներկայացուցիչների եռակողմ հանդիպման ընթացքին յայտարարուեց, որ այդ երկրները պատրաստ են սատարել ՀՀ ի ժողովրդավարութեան, տարածքային ամբողջականութեան եւ ընկերային-տնտեսական կայունութեանը եւ բարգաւաճ ապագային, ընդլայնելով համագործակցութիւնը եւ բազում այլ հաճելի առաջարկութիւններ, որին յաջորդեց վարչապետի գնահատականը, թէ «Գերազանց խորհրդակցութիւններ ենք անցկացրել ԱՄՆ եւ ԵՄ գործընկերների հետ՝ ՀՀ տնտեսական, մարդասիրական եւ ժողովրդավարական

կայունութեան ամրապնդման նպատակով համագործակցութեան ընդլայնման ուղղութեամբ»:

Տեղին է թարմացնել յիշողութիւնը եւ յիշեցնել հարիւր յիսուն տարիների եղած նման հանդիպումներին որ մեր հարցը քննելու նպատակով նման մարդասէրները միշտ աննպաստ որոշումներ են ընդունել՝ մեզ օգնելու նպատակով.

ա)Սան Ստեֆանոյի պայմանագիրը 1878 յունուարին ռուսթուրքական պատերազմի դադարեցման առիթով, ուր հայերի հարցը զբաղեցնում էր 16-րդ տեղը տարբեր խնդիրների կողքին:

բ) Այդ հանդիպումից ընդամէնը մի քանի ամիս անց, Բերլինում Խրիմեան Հայրիկի մասնակցութեամբ խորհրդակցութիւնը շարունակուեց, ուր համաժողովին որպես Օսմանեան կայսրութիւնում հայ ժողովրդի ներկայացուցիչ, ներկայացրեց Գրիգոր Օտեանի կազմած ինքնավարութեան ծրագիրը, որ ճանաչուելու էր Հայաստանի անկախութիւնը՝ ընդունուելու պարագային, բայց մեր խնդիրը ունենալով առաջընթաց՝ 16-րդից անցաւ 61-րդ հորիզոնական եւ թղթէ շերեփի գնահատականին արժանացաւ, որ մասոնական ստուերային ուժերի աճպարարութիւն էր, իսկ մենք լրջօրէն պարզամիտ էինք:

գ) Սեւրի վեհաժողովը, 1920-ի օգոստոսին, որին մասնակցել են Աւետիս Ահարոնեանը եւ Նուբար փաշան գլխաւոր դաշնակից պետութիւնների հետ կնքած են լրացուցիչ պայմանագրեր՝ դիւանագիտական եւ առեւտրական յարաբերութիւնների վերաբերեալ, Հայաստանի համար դէպի միջերկրական, ելք ունենալու պայմանով: Բայց այդ բոլոր երազները, թուրքական սերտ կապի շնորհիւ մասոն շրջապատի հետ մնացին թղթի վրայ: Դեռ այսօր ոմանք Ուիլսոնի քարտէզը համարում են իրականանալի:

դ) Մոսկուայի 1921-ին ռուս-թուրք (Լենին-Քեմալ) կնքուած «Եղբայրութեան եւ բարեկամութեան պայմանագիր»ով, Թուրքիայի ինքնիշխանութեանը Ռուսաստանը ճանաչում էր, որպէս ազգային մեծ ուխտաւոր, թուրք բոլոր տարածքների նկատմամբ: Թուրքիան իր կողմից հրաժարուում է Բաթումից:

ե) Կարսի պայմանագիրը 1921ին ստորագրել են, ՀՀ, Ադրբեջանը, Վրաստանը, Ռուսաստանի մասնակցութեամբ՝ յաջորդելով Մոսկուայի պայմանագրին: Թուրքիային անցաւ Կարսի մարզը ամբողջութեամբ եւ Սուրմալուի գաւառը ներառեալ Արարատը, իսկ Բաքուն ունեցաւ Նախիջեւանը: Ի վերջոյ Հայաստանը կորցրեց իր տարածքի գրեթէ կէսը ստոր դաւերի միջոցով:

զ) Ալեքսանդրապոլի պայմանագիրը 1920ին, հայերի կողմի կրած պարտութիւնից յետոյ թուրքերի հետ ստորագրուած զինադադարի պայմանագրով մենք զիջեցինք Նախիջեւանը, որ այլ տարածքների հետ ժամանակաւոր մնալու էին Թուրքիոյ հովանաւորութեան ներքոյ, յետագային նրանց վիճակը հանրաքուէով որոշելու պայմանով, բայց ժամկէտից ընդամէնը 7 ժամ առաջ խորհրդային կարգերի հաստատումով պայմանը չեղարկուեց եւ ամէն ինչ մնաց թուրքերին ընդմիշտ որպէս Լենին պապիկի նուէր:

Վերոնշեալ պայմանագրերի ակնառու հետեւանքը այն է, որ ամէն անգամ տարածք ենք կորցրել եւ չի եղել մեզ շահաւէտ մէկ հանդիպում, թէեւ բարի ցանկութիւնները յորդառատ էին, ինչպէս այսօր ԱՄՆ, ԵՄ սրտաճմլիկ ելոյթներով փորձում են հաւատացնել, թէ մեր երկրի բարեկեցութեան համար պատրաստ են ամէն քայլի: Նոյն պատրաստակամութիւնն են ցուցաբերում մեր դարաւոր բարեկամ ռուսները, բայց որի՞ն հաւատանք եւ որի՞ն լքենք: Կասկած կայ, որ վերջին տարիների մեր գլխին եկած արհաւիրքներին, բացի ցաւակցական կոչերից, որեւէ սատար չենք տեսած, այլ աջակցել են եւ քաջալերել մեր թշնամուն զինելով: Բլինքընի «Մենք հաւաքուած ենք՝ վերահաստատելու անդրատլանտեան աջակցութիւնը հայ ժողովրդի ժողովրդավարական, բարեկեցիկ ապագային եւ աւելի բարեկարգ եւ խաղաղ

Հարաւային Կովկասի տարածաշրջանը եւ խաղաղութեան խաչմերուկ ծրագիրը զարգացնելու»:

Որքա՞ն անկեղծ եւ իրական են այդ շոյող խօսքերը, որին վարչապետը պատասխանեց, թէ «Պատրաստ ենք մեր ներդրումային միջավայրն աւելի գրաւիչ դարձնել եւրոպական եւ ամերիկեան ընկերութիւնների համար»:

Մենք այլեւս իրաւունք չունենք, կուրօրէն ընկալել այս գեղեցիկ խօսքերը, առանց մանրակրկիտ զննելու ամէն մի բառի նշանակութիւնը եւ թէ ի՞նչ այլ իմաստ է այն պարունակում եւ ի՞նչ հետեւանք կարող է ունենալ եւ ի՞նչ կը պատահի երբ այդ ուժերը հաստատուեն մեր տարածքում: Յայտնի է որ դիւանագիտական միջավայրում **այո** բառին փոխարինում է **գուցէ** կամ **թերեւս,** իսկ **ոչ** բառի հոմանիշը՝ **կը մտածեմ,** կամ **չեմ խոստանում:**

Հասկացողին բարի ողջոյն:

7/4/24

ՔԻՉ ՄԸ ԽԻԶԱԽՈՒԹԻՒՆ՝ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԷՆ ԱՌԱՋ

ԱՒՕ ՊՕՂՈՍԵԱՆ

Դարձեալ բորբոքուած են հայութեան կիրքերը՝ մտահոգութիւնները հասած են գագաթնակէտին, եւ թշնամիին պարբերական լկտի պահանջներէն եւս մէկը՝ Տաւուշի չորս՝ նախապէս Սովետական իշխանութիւններու օրերուն Ատրպէյճանի Հանրապետութեան սահմաններուն մէջ ինկած, գիւղերու վերադարձի պահանջն է, գիւղեր, կամ աւելի ճիշդ՝ երեսունամեայ պատերազմին պատճառով լքուած գիւղերու հողատարածքներ: Սակայն, վտանգը աւելին է, քան՝ քանի մը հեկտար հողատարածքներու զիջումը: Այս հողերուն՝ Ատրպէյճանի վերահսկողութեան տակ վերադառնալով, ամբողջ Տաւուշ աքցանի մը մէջ պիտի յայտնուի:

Հայաստանը Վրաստանին կապող ճանապարհը, այլեւս անգործութեան մատնուած նախկին երկաթուղագիծը, Ռուսիայէն Հայաստան երկարող կազատարը եւ այլ շատ կարեւոր ռազմավարական բարձունքներ պիտի կորսնցնենք:

Ռուսերը, մաքիաւելական կայսերապաշտական իրենց հաշիւներով, ինչպէս բոլոր միութեան նախկին երկիրներուն մէջ եւ ինչպէս բոլոր կայսրութիւններու պարագային, միջպետական սահմանները գծած են այնպիսի դիտաւորեալ կերպով, որ այսպիսի օրերուն դարձեալ զանոնք շահարկեն: Ահա այսպէս, Ատրպէյճանի այս նորագոյն սպառնալիքի ետին կ՛երեւան ռուսական լուռ եւ անմեղունակ թուացող չէզոքութիւնը, սակայն, միաժամանակ ի յայտ կու գայ մեր իշխանութիւններուն ապիկար պարտուողականութիւնը: Արդեօք այդ նաեւ արեւմուտքին կողմէ՞ թելադրուած է, թէ ոչ անիկա միայն ժամանակ շահելու մարտավարութիւն է, որովհետեւ անմտութիւն է ենթադրել, որ մենք բաց կը

թողնենք այդ պահանջներուն դիմաց Հայաստանի տարածքներէն ներս թափանցած թշնամի բանակին հեռացման պայմանը:

Թերեւս բոլոր պատմաբանները համաձայն պիտի գտնուին այն կարծիքին, որ չկան ազգեր, որոնց պատմութիւնը միայն շարունակական յաղթանակներու պատմութիւն է կամ հակառակը՝ միայն պարտութիւններու, որոնց պարագային ակնյայտօրէն պատմութեան թատերաբեմէն բոլորովին պիտի վերանային: Ուժեղ պետութիւններու երկարատեւ հզօր մնալու գաղտնիքը կը կայանայ անոնց յաղթանակներու պատճառած գինովութենէն արագ սթափման եւ այդ ձեռքբերման պահպանման մէջ:

Լեհ յեղափոխական եւ անկախ Լեհաստանի բանակի 1918էն 1922 հրամանատար Ժոզէֆ Փիլզուտցքի (Josef Pilzudski) ըսած է հետեւեալը. «Պարտութեան մատնուիլ սակայն չ՛ընկճուիլ՝ յաղթանակ է, իսկ յաղթանակ տանիլ, բայց գինովնալ՝ յաղթանակի դափնիներով պարտութիւն է»: Գրեթէ բոլոր երկիրներու զանազան քարտէսները եթէ ուսումնասիրենք, պիտի տեսնենք, որ անոնք դարերու ընթացքին բազմաթիւ անգամներ փոխուած են եւ ձեռքէ ձեռք անցած, ընդարձակուած, ապա փոքրացած եւ այսպէս՝ շարունակաբար:

Այդպէս եղած է նաեւ մեր երկիրը՝ Հայաստան: Կռուախնձոր ըլլալով զայն շրջապատող զանազան կայսրութիւններու միջեւ՝ ենթարկուած է ջարդերու եւ տեղահանումներու, կոտորակուած է եւ հանդիսացած այլոց պատերազմներուն թատերաբեմ, նոյնիսկ մեր պետականութիւնը կորսնցուցած ենք, եւ քսաներորդ դարու սկզբին ցեղասպանութեան ենթարկուելէ ետք, փիւնիկի մը պէս վերապրած ենք եւ վերստեղծած մեր պետականութիւնը, թէկուզ մեր պատմական տարածքին միայն մէկ փոքր հատուածին վրայ: Դժբախտաբար, նոյնիսկ այդ հանրապետութիւնը պահպանելու զօրութիւնը չունեցանք, երբ պոլշեւիկ բանակը մէկ կողմէ, եւ քեմալական թուրք բանակը միւս կողմէ ներխուժեցին նորաստեղծ պետութեան սահմաններէն ներս եւ մնացեալ տարածքին վրայ հաստատուեցան Խորհրդային կարգերը, որ եօթանասուն տարիներ ետք՝ Խորհրդային Միութեան փլուզումով, տեղը տուաւ մեր ներկայի անկախ պետականութեան:

Անկախութենէն ասդին, ունեցանք ձեռքբերումներ, ինչպէս՝ Արցախի առաջին պատերազմի յաղթական ելքը, եւ, դժբախտաբար, բազմաթիւ բացթողումներ: Այդ բացթողումները հիմնական պատճառներէն էին մեր հազարաւոր երիտասարդներուն արեան գնով վաստակած ձեռքբերումներուն կորուստին, որովհետեւ, ինչպէս անգլիացի պատմաբան Թիմոթի Կարտըն Աշ իր Homelands գրքին մէջ կ՛ըսէ՝ «այն անկախութիւնը որ կատարեալ ձեւով չէ իրագործուած, կ՛ենթադրէ շատ աւելին քան պարզապէս բռնապետութեան բացակայութիւնը»: Փաստօրէն, 70 տարիներու խորհրդային կարգերու կենցաղը

այլափոխած էր հայրենի հայութեան նկարագիրը այն աստիճան, որ պէտք ունինք սերունդներու՝ զայն վերագտնելու համար: Այդ յատուկ չէր միայն հայութեան, համատարած էր եւ կ՛ընդգրկէր թէ՛ նախկին խորհրդային երկիրներու, թէ՛ Արեւելեան եւ կեդրոնական Եւրոպայի՝ Սովետական արբանեակ երկիրներու ժողովուրդները, որովհետեւ համայնավար կարգերու փլուզման պատճառով յանկարծակի ստացուած անկախ կարգավիճակին ոչ ոք պատրաստ էր:

Այդ երեւոյթը լաւապէս բացատրած է տասնիններորդ դարու գրող Մերի Շելի՝ գրելով. «Ոչ մէկ բան այնքան ցաւոտ է մարդկային միտքին համար, որքան մեծ եւ յանկարծակի փոփոխութիւն մը» (Nothing is so painful to the human mind as a great and sudden change): Ի զուր չէր որ անկախութեան յաջորդող առաջին տասնամեակին, մարդիկ խելայեղօրէն եւ զանգուածաբար դիմեցին արտագաղթի:

Երկաթէ վարագոյրը քանդուած էր: Ապա հետեւեցան այլ արտագաղթի ալիքներ, շարունակուող մաշումի պատերազմին եւ տնտեսական լճացումին պատճառով: Եթէ խորհրդային տարիներուն անոնք ունէին ապահով կեանք մը եւ կը ձգտէին ազատութեան, յետ-խորհրդային տարիներուն, անոնք ունէին ազատութիւն, սակայն կը ձգտէին ապահով կեանքի:

Հիմա այդպիսին է մեր կացութիւնը եւ մենք կը գտնուինք այլընտրանքային ուղիներ փնտռելու հարկադրանքին տակ, կամ անձնատուր ըլլալով մեր ճակատագիրին՝ հրաժարիլ ամէն փորձէ եւ ընդունիլ ռուսական եւ թրքական ամէն պահանջ, որոնց հետեւանքը մանրամասնելը աւելորդ պիտի ըլլայ: Անշուշտ, միամտութիւն է կարծել, որ այլընտրանքային ուղիները հարթ եւ ողորկ են մինչեւ վերջ: Սակայն այդ աւանդական ճանապարհի ստոյգ վտանգաւոր ըլլալը չտեսնելը, միամտութեան սահմանները անցնիլ է:

Իսկ ի՞նչն է որ վտանգի առաջ յայտնուող ազգը հաւանաբար կը փրկէ, եթէ ոչ միասնաբար այդ վտանգը տեսնելը եւ անկէ փրկուելու միջոցներ գտնելը: Զարմանալիօրէն, մեր պարագային, անհասկնալի դրսեւորում մը կայ: Իշխանութիւնները կը թելադրեն քաղաքականութիւն մը, որ երբեմն սխալ եւ պարտուողական տրամադրութեամբ կը վարեն, ինչպէս՝ Տաւուշի գիւղերու եւ այլ հարցերու պարագային, մինչ ընդդիմախօսները փոխանակ իրենց տեսակէտը եւ այլընտրանքային քաղաքականութիւնը բացատրելու կամ նոյնիսկ պարզապէս յայտնելու, միայն կը պահանջեն իշխանութեան հրաժարականը:

Մենք կը դիմագրաւենք ստոյգ վտանգ մը, որդեգրելով նախկին արեւելումը, կը կտրուինք հիւսիս-հարաւ ռազմավարական ճանապարհէն, կը կորսնցնենք Սիւնիքը՝ իբրեւ տարածք,

մեր տնտեսութիւնը լաւագոյն պարագային կը մնայ նոյնը, մինչ արտագաղթը կը շարունակուի աւելի խոցելի դարձնելով մեր ազգային անվտանգութիւնը եւ անվերադարձ փլուզման ենթարկելով մեր ժողովրդագրական պատկերը: Որդեգրելով այլընտրանքային արեւելումը, գիտնալով հանդերձ որ այնտեղ վտանգները չեն պակսիր՝ վկա՛յ մեր Արցախի վերջին ողբերգութեան ընթացքին արեւմուտքին քար լռութիւնը, ինչպէս տեսած էինք Եուկոսլաւիոյ բաժանման պատճառով նորաստեղծ հանրապետութիւններուն միջեւ տեղի ունեցող պատերազմներուն ընթացքին հոն գտնուող Հոլանտական, ֆրանսական եւ այլ արեւմտեան երկիրներու խաղաղարար ջոկատներու զինուորներուն չէզոք հանդիսատես մնալու փաստը, երբ միջհամայնքային խժդժութիւններ կ՛արձանագրուէին շարունակաբար, զանոնք կոչելով պարզապէս, հինաւուրց ցեղախմբային ատելութիւններու դրսեւորում՝ տեսակէտ մը, որ բառացիօրէն ժողովրդականացած էր արեւմտեան քաղաքական շրջանակներուն մօտ Ռապըրթ Քափլանի «Պալքան Կոսթց» (Balkan Ghosts) գրքին մէջ արտայայտուած «հինաւուրց ցեղախմբային ատելութիւններ» (ancient tribal hatreds) խօսքին հետեւելով: Թիմըթի Կարթըն Աշ իր «Հայրենիքներ» (Homelands) գրքին մէջ կ՛ըսէ, թէ անձամբ լսած էր Եւրոպական Միութեան բարձրակարգ պաշտօնեայի մը բերանէն, թէ՝ «մենք չենք կրնար արգիլել մարդոց, որոնք Կ՛ՈՒԶԵՆ զիրար սպաննել»:

Այո, այլընտրանքային որեւէ արեւելում զերծ չէ վտանգներէ, շահագործումներէ եւ ուրացումներէ, սակայն ստոյգ վտանգին փոխարէն նախընտրելի է որոշ յոյսերու ճանապարհը, ուր կայ առնուազն արեւմտեան աշխարհին միանալու հաւանականութիւնը եւ տնտեսական զարգացումը: Վերջապէս, հայութեան անդադրում արտագաղթը կրնայ կասեցուիլ միայն Հայաստանի տնտեսութեան զարգացումով եւ խաղաղութեան հաստատումով:

Մինչ այդ, սահմանազատման եւ սահմանագծման գործընթացներուն ընթացքին քիչ մը խիզախութիւն պէտք է:

ԱՍՊԱՐԷԶ

4/4/2024

ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆԻ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ՝ ՏԵՍԻԼՔ, ԿԱՄՔ ԵՒ ՅՈՅՍ» ՆՈՐԱՏԻՊ ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ-ԳԻՆԵԶՕՆԸ

ՔՈՒԷՅԹԻ ՄԷՋ

«Գիրքերու աշխարհը... Տիեզերք է անեզր...»
Եղիշէ Չարենց

Գիրքերու աշխարհը անսահման է: Գիրքը մարդուն թեւեր կու տայ, եւ կը տանի տարբեր աշխարհներ:



Չարենցեան այս իմաստալից խորհուրդին մեծ համոզում ունեցող, հրապարակագիր եւ գրող՝ Դոկտ. Հրայր Ճէպէճեան, իր աշխատասիրութիւններով կը սատարէ արեւմտահայերէնի պահպանութեան եւ կենսունակութեան յոյժ կարեւոր գործին: Ան իր յօդուածներու ճոխ ծաղկաքաղով, կ'արծարծէ շարք մը նիւթեր, որոնց հիմնական առանցքը կը կազմեն՝ Հայրենիքի ու սփիւռքի գոյութիւնը խաթարող մտահոգութիւնները, ցաւերն ու դժուարութիւնները, որոնց յաղթահարման համար, երբեք չջլատուիր իր կամքը, այլ նոր տեսիլքներով ու քրիստոնէական վառ յոյսով, կը կենսաւորուին ու նոր աւիշ կու տան մեր ամպամած երկնքին:

Արդարեւ, Կիրակի 7 Ապրիլ 2024ին, Քուէյթի Ազգային Վարժարանի սրահէն ներս, տեղի ունեցաւ Դոկտ. Ճէպէճեանի գրական վաստակին պատկանող «Հայկական Ազգագրական Պատկերներ՝ Տեսիլք, Կամք Եւ Յոյս» գիրքի շնորհահանդէս-գինեձօնը:

Հանդիսութիւնը կը վայելէր հովանաւորութիւնը, Քուէյթի եւ Շրջակայից Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Գերպ. Տ. Պետրոս Ծ. Վրդ. Մանուէլեանի:

Երեկոն իրենց ներկայութեամբ պատուած էին՝ Քուէյթի մօտ ՀՀ Դեսպան Տիար Սարմէն Պաղտասարեանը, Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Արտակ Ա. Քհնյ. Քէհեայեանը, Պատկան Մարմնի ներկայացուցիչ՝ Տիար Յակոբ Մելիքսէթեանը, ՔԱՎ-ի Տնօրէն՝ Տոքթ. Ներսէս Սարգիսեանը, ազգային եւ միութենական մարմիններու ներկայացուցիչներն ու գրասէր ընտրանի մը:

Օրուան հանդիսավար՝ Արժ. Քահանայ Հայրը, բարի գալուստի խօսք արտասանեց, որու ընդմէջէն ներկայացուց Դոկտ. Հրայր Ճէպէճեան մարդն ու գրիչի սպասարկուն:

Իսկոյն, բեմ հրաւիրուեցաւ ՔԱՎ-ի հայրենաւանդ ուսուցիչ՝ Պրն. Ճորճ Արապաթլեան, որ հետաքրքիր շրջագայութիւն մը կատարելով գիրքի ծալքերէն ներս, հաճելի ներկայացում մը կատարեց:

Ան Իր նախաբանին մէջ յիշեց՝ Խաչատուր Աբովեանի գեղեցիկ խօսքը, որ կ'ըսէ.- 《Մէկ ազգի միացնողը, իրարու կապողը լեզուն եւ հաւատքն են...》 ապա շարունակեց ըսելով, որ Դոկտ. Ճէպէճեան Աբովեանի սրբութիւններուն վրայ կ'աւելցնէ նաեւ Մշակոյթը, զայն անուանելով՝ Փափուկ զէնք, որու շնորհիւ յաջողած ենք մեր ինքնութիւնը պահել, կեանքի փոթորիկներուն դիմաց, միշտ Հայրենիքը դասելով ամէն ինչէ վեր:

Քաղաքական թեմաներով յօդուածներուն քով կանգ առնելով, Պրն. Ճորճ պարզեց, որ Լիբանանի քաղաքացիական պատերազմը ելակէտ ունենալով, գիրքի հեղինակը զուգահեռներ կը գծէ՝ Արցախի պատերազմին, Պէյրութի նաւահանգիստի պայթումին եւ մերօրեայ այլ իրադարձութիւններուն հետ։

Ապա, անդրադառնալով գիրքին մէջ գլխագիր տեղ գտած կրօնական յօդուածներուն, պարզեց հեղինակին սկզբունքը, որուն համար քրիստոնէական դաստիարակութիւնը նոյնքան անհրաժեշտ է, իւրաքանչիւր քաղաքացիի բարոյական նկարագիրը կերտելու համար։ Ան կը հաւատայ, որ Քրիստոնեան պէտք չէ վախկոտ ըլլայ, այլ իր մէջ պէտք է սերմանէ «Քրիստոնէական վրէժխնդրութիւնը», փոխաբերական իմաստով։

Այնպիսի վրէժխնդրութիւն մը, որ մեզ կ'առաջնորդէ վերստին յառնելու ու հաստատակամութեամբ ընթանալու դէպի յառաջ։

Թուղթի եւ տպագրական մելանի հոտով, իսկական գիրքի սիրահար եւ ընթերցասէր՝ Ազգ. Վարչութեան երիտասարդ անդամ՝ Տիկին Դալար Գալէմքեարեան-Տաղլեան, գեղեցիկ կերպով ներկայացուց գիրքի գեղարուեստական արժէքը։

Ան բարձրաձայնելով ըսաւ, որ սոյն գրքի իւրաքանչիւր յօդուածին մէջ, ի յայտ կու գայ, Դոկտ. Հրայրի Հայու հոգին, պինդ ու անխախտ հաւատքը, որ ուխտած է գործել բարին, ու համատարած դարձնել զայն։

Դոկտ. Հրայր ընդելուզուած է քրիստոնէական հաւատքով, լաւատեսութեամբ, մարդասիրութեամբ եւ յատկապէս հայրենասիրութեամբ, որ ակնյայտօրէն արտացոլած են իր գրութիւններուն մէջ։

Տիկին Դալար միաձուլուելով իւրաքանչիւր յօդուածի մէջ շեշտուած գաղափարին ու խորհուրդին հաստատեց, որ այս գիրքը արխիւային մեծ հարստութիւն մը ու Զարթօնքի կանչ մըն է՝ վերանայելու կեանքի հասկացողութեան, համամարդկային ու հայկական արժէքներուն ու փիլիսոփայութեան, հաւատքին, ազգին ու հայրենիքին։

Ան իր խօսքը աւարտեց հեղինակի այն մարտահրաւէրով, որ կ'ըսէ. «Եթէ կ'ուզես, կ'ըլլայ»։ Անկարելի բան չկայ, բարիով թրծուած Աստուածասէր ու հայրենասէր հայուն համար։

Այնուամենայնիւ, ՔԱՎ-ի Տնօրէն՝ հասարակական գործիչ եւ մտաւորական Տոքթ. Ներսէս Սարգիսեան, քննական վերլուծական դիտանկիւնէն ներկայացուց գիրքը։

Ան գլխաւոր երեք ենթավերնագրերու բաժնած էր սոյն հատորը, պարզաբանելու համար թէ հաւաքական մեր կեանքի այս ծանր օրերուն, ի՞նչ ունի ըսելիք դոկտ. Հրայր Ճէպէճեան հայ ընթերցողին։ Այսպէս.-

Ա.-) Հայկական Սփիւռքը, իր բազմադիմի էութեամբ, հոգեմտաւոր բարդ կազմուածքային շերտերով, գաղութները կազմող հայերու առանձնայատկութիւններով, նմանութիւններով եւ տարբերութիւններով, ինչպէս նաեւ հաւաքական ինքնութեան խնդիրներով։

Անոր հերոսները այն հայերն են, որոնք ամէն տեղ են ու պատնէշի վրայ։ Անոնք պատմելիք ունին աշխարհին, եւ տակաւին շարունակուող ցաւ ունին։ Աշխարհին բացուելով հանդերձ, ինքնութիւնը պահպանելու մարտահրաւէրներ ունին եւ անոնցմէ արժանապատիւ ու յաղթական դուրս գալու խնդիր ունին։

Սփիւռքեան հակասութիւնները, համադրումի ու կառուցողական ներդաշնակութիւն ստեղծելու փորձերը, իւրայատուկ երանգ մը կը ստանան գրքին մէջ։

Տագնապէն դուրս գալու միջոցը հեղինակին համար, համակարգ-պետութիւն կերտելը, կամ պետականաշինութիւնն է։ Հայի փրկութիւնը իր խելիքն մէջ է։ Հեղինակը կը հաւատայ ու ջատագովն է միասնականութեան։ Իրեն համար Սփիւռքը Հայաստանի միակ

«հաւատարիմ դաշնակիցն» է: Սփիւռքը անցողակի, ժամանակաւոր երեւոյթ մը չէ, այլ ան մնայուն ներկայութիւն է:

Բ.-) Գրքին մէջ տիրական ներկայութիւն է՝ Ճէպէճեան ընտանիքը իր հարուստ աւանդով եւ երեւելի ու պատուաբեր անձնաւորութիւններով, որոնց մասին կ'արժէ յատուկ գիրքի մը հրատարակութեան ձեռնարկել, աւելցուց Տոքթ. Սարգիսեան:

Գ.-) Քրիստոնէական հոգեւոր թեման զգալիօրէն ներկայ է: Ճէպէճեանին համար Աստուածաշունչը հաւաքականութեան գիրքն է: Ան իր ներգործութիւնը ունի կեանքի բոլոր երեսներուն վրայ:

Հայու ազգային ինքնութիւնը խարսխուած ու շաղախուած է քրիստոնէական արժէքներով, որ անքակտելի է: Կրօնական յօդուածները իրական կեանքին համար ուղեցոյցներ են: Առօրեայ խնդիրներն ու աշխարհի հարցերը, քրիստոնէավայել ընթացքով մը դիմագրաւելու կոչ ու պատգամ են:

Եւ այսպէս, քննական պրիսմակը շարունակելով, առիթը տրուեցաւ ՔԱՎ-ի Փոխ Տնօրէն՝ Պրն. Կարօ Արսլանեանին:

Ան բերկրալի ոճով մը սկսաւ իր խօսքը, ըսելով «Գիրքի մը հրատարակութիւնն ու անոր նուիրուած շնորհահանդէսը, «ծնունդի, ապա մկրտութեան» ուրախ ու շնորհալի առիթներ են: Մեր տրամադրութեան տակ դրուած այս նորածին հատորի հեղինակը, մարդկային տեսակի առումով տիպարն է բարձրագոյն արժէքներ կրող մերօրեայ մարդուն, որուն բացակայութիւնը մեր կեանքի մէջ շատ յաճախ զգալի է»:

Աւելցնելով Պրն. Արսլանեան ըսաւ.- «Սոյն հատորը ընթերցելէ ու քննելէ ետք, անոր բովանդակութիւնը կարելի է ամփոփել երեք գլխաւոր միտքերու մէջ.-

1. Հաւատացեալ հայուն դարաւոր տեսիլքը վառ է ու կը մնայ միշտ վառ, մինչեւ այն ատեն, երբ աշխարհացրիւ հայութեան հոգիներուն մէջ առկայծ է նախահօր Հայկի կտակած ազատատենչ հայու կերպարը, այն կերպարը որ այսօրուան նիւթապաշտ աշխարհի ցուրտէն պատսպարուելու համար գիտէ ջերմանալ՝ իր խորքը ճարճատող հաւատքի հուրով, եւ անոր լոյսով նաեւ գտնել ճշմարտութեան արդար ուղին:
2. Արարող ու զարգացող հայուն կամքը, որ անկոտրում է եւ ծլարձակող: Կամք, որ ստացած է իր ամրութիւնը պապենական հողի ժայռերէն, սիգապանծ լեռներու վրայ ծնունդ առած իր նախնիներու պատգամը միշտ թելադրած է զինք ըլլալ խիզախ, որովհետեւ կեանք կը նշանակէ ապրիլ, իսկ ապրիլը՝ յարատեւ պայքար ու յառաջխաղացք:
3. Վերջապէս, յոյսը ամօթով չի ձգեր: Այն յոյսը, որ անձրեւոտ աչքերու սրբիչն է, ցաւոտ հոգիներու բալասանն է: *Այն սրբազան յոյսը, որ մեր ազգի պարտութիւնները դէպի կատարեալ յաղթանակներու առաջնորդողն է»*:

Բոլոր արտասանուած խօսքերը անվաւեր պիտի նկատուէին մինչեւ այն պահը, երբ քուէյթահայ հանրայայտ սիրուած ասմունքող՝ Տիկին Նարինէ Գոնճայեան-Արապաթլեան հմայիչ կերպով ընթերցեց «Եթէ կ'ուզես, կ'ըլլայ» յօդուածը, որ եկաւ երաշխաւորելու բոլոր զեկուցաբերներու բանաւոր վկայութիւնները:

Օրուան յայտագիրին իր ոգեւորիչ մասնակցութիւնը բերաւ, ՀՀ մեծարգո՛յ Դեսպան, Տիար Սարմէն Պաղտասարեան, որ իր կարգին, ամփոփ գիծերու մէջ ներկայացուց գիրքի բովանդակութիւնը, շնորհաւորեց անոր շունչ տուող հեղինակը, մաղթելով բեղմնաւոր ճանապարհ, գիրի ու գրականութեան ոլորտէն ներս:

Վերջապէս, կարելի չէր յայտագիրը աւարտել, առանց Տէր եւ Տիկին Դոկտ. Հրայր եւ Արտա Ճէպէճեաններու երախտիքի խօսքերուն: Անոնք սրտի անհուն հրճուանքով, ողջունեցին ձեռնարկը հովանաւոր եւ կազմակերպող կողմերը, անհատ առ անհատ, իրենց

ուրախութիւնը, սէրն ու կապուածութիւնը յայտնեցին Քուէյթահայ համայքին, խոստանալով մնալ հաւատաւոր հետեւորդները մեր նախահայրերուն, որոնք ընկրկում չճանչցան եւ հայու անխախտ հաւատքով ու կամքով շարունակեցին իրենց վստահուած առաքելութիւնը, հարկ եղած պահուն նոյնիսկ իրենց կեանքերը նուիրաբերեցին, մեզի նոր արշալոյսներ պարգեւելով։

Գրական երեկոներու ծարաւը յագեցնող, այս հոգեպարար հանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց՝ Գերպ. Հայր սուրբը։

Ան լուսարձակի տակ առաւ, ճէպէճեան ամոլի լուսաշող տեսիլքը, հաստատուն կամքն ու անմար յոյսը, որոնք խթան կը հանդիսանան իրենց, դառնալու կենսատու մասնիկներ, հայկական մեր իրականութեան մէջ։

Աւարտին, տեղի ունեցաւ գինեձօնի կենսուրախ եւ աւանդական արարողութիւնը։

Յայտագրի գործադրութենէն անմիջապէս ետք, ներկաները իրենց ջերմ բարեմաղթանքները փոխանցեցին Դոկտ. ճէպէճեանին եւ մեծ հաճոյքով ստացան մակագրուած գիրքերու իրենց օրինակները, նման հոգեկան բաւարարութիւն պարգեւող ձեռնարկներ յաճախ կրկնուելու հեռանկարով։

ՄԱՐԻԱ ՍԱՐԳԻՍԵԱՆ
ՔՈՒԷՅԹ

ՏԵՍԱԿԷՏ

ԱՐԴԱՐ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԲԸՄ-Ի ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԷՆ

ԳԵՂԱՐԴ Խմբագրական, 2 ապրիլ 2024

Սեմ (Սամուէլ) Սիմոնեանի անունը նորութիւն մը չէ։ Ան գիտնական է, համահիմնադիրը «ԹՈՒՄՕ»-ի (TUMO), որու կարեւոր մասնաճիւղերէն մէկը կը գտնուի Երեւանի մէջ եւ կը նկատուի համակարգչային գիտութեան վաւերական կեդրոններէն մէկը։ 1989-ին ան հիմնած է Inet Technologies-ը։ 1994-ին ճանչցուած է տարուայ ձեռնարկատէր Inc. Magazine, Ernst & Young եւ Merrill Lynch–ի կողմէ, 2000-ին արժանացած է ԱՄՆ-ի *Էլլիս Այլընտ* (Ellis Island) պատուոյ շքանշանին։ Շրջանաւարտ է Պէյրութի Վահան Թէքէեան վարժարանէն (նախակրթարան), իսկ երկրորդական կրթութիւնն ստացած է Հ. Բ. Ը. Միութեան Յովակիմեան-Մանուկեան վարժարանէն։ Գիտական բարձրագոյն ուսման տիրացած է Թեքսասի համալսարանին մէջ, ուրկէ վկայուած է որպէս էլեկտրոնիկայի ճարտարագէտ (Electronic engineer)։

Սեմ Սիմոնեանի անցնող տարիներու ազգային-հասարակական գործունէութիւնը ցոյց կու տայ, որ ան հարազատ արգասիքն է հայկական վարժարաններու։ Պատահական չէր իր յաճախած նախակրթարանին հանդէպ ցուցաբերած հոգատարութիւնը, որուն շնորհիւ

Թեքէեան վարժարանի մանկապարտէզը վերջերս կոչուեցաւ Սեմ եւ Սիլվա Սիմոնեան բարերար ամոլին անունով՝ յետ զգալի բարենորոգութիւններու եւ արդիականացման աշխատանքներու:

Նորընտիր նախագահին անունը քաջ ծանօթ է ՀՀ-էն ներս, որպէս բանական ճարտարագիտութեան (AI) նորարար գիտահետազօտական կարեւոր հիմնարկի մը հիմնադիր: Առ ի գնահատանք իր բազմակողմանի աշխատանքներուն ան պարգեւատրուած է Անանիա Շիրակացի շքանշանով:

Հ. Բ. Ը. Մ.ի Կեդրոնական վարչական ժողովին կողմէ Միութեան նախագահ ընտրութեամբ (*զայն պէտք է հաստատէ Միութեան ընդհանուր պատգամաւորական ժողովը, որուն գումարումը նախատեսուած է այս տարուան հոկտեմբերին*) հպարտութեան արդար զգացումով լեցուեցաւ յատկապէս Հ. Բ. Ը. Միութեան լայն շրջանակը: Լուրը գոհունակութեամբ ընդունեցին, ի մասնաւորի, Միութեան վարժարաններէն շրջանաւարտները: Արդարեւ, ան համազգային այս մեծ միութեան՝ հայկական վարժարաններէ շրջանաւարտ եւ Թեքէեան մշակութային միութեան շրջանակին մէջ թրծուած **առաջին** նախագահն է, նաեւ առաջին նախագահը որ կու գայ ժողովրդային չարքաշ խաւէն: Հետեւաբար, սփիւռքեան հոծ շրջանակ մը նոր յոյսերով ու ակնկալութիւններով կ՚ընդունի անոր ընտրութիւնը:


ՍԻՄՈՆԵԱՆ, ՍԱՄՈՒԵԼ.- Ծնած է 1955-թի, Հալէպ:
Նոր-նախագահը կը սորվեցնէր կը սորվեցնէ Վանայ Թէքէեան վարժարանին մէջ, որեղէ շրջանաւարտ կ՚ըլլայ 1968-թի: Նոյն տարին կը յաճախի պետական սերթիֆիքայի քննութեանց մէջ եւ կ՚ընդունուի Ցոյակիմեան-Մանուկեան Երկրորդական վարժարան:
Մաս կը կազմէ զարգացի արդիական հաստատութիւնին: Մասնաւոր հետաքրքրութիւն ցոյց կու տայ գիտական եւ ուսումնական գաղութին նկատմամբ: Մտադրած է հետեւիլ «Electronics»ի:
Նշանագրանն է «Ալլայ թեքակոտոր եւ արագ»:

Յիշեցնենք թէ վերջին երեսունհինգ տարիներու ընթացքին վերջին երկու նախագահներն ու անոնց վարչական/հոգաբարձական կազմերը Միութեան կիզակէտը դարձուցած էին գերազանցապէս նորանկախ Հայաստանի ու Արցախի Հանրապետութիւնները, միաժամանակ զգալիօրէն անտեսելով Հ. Բ. Ը. Միութեան վարժարանները, որոնք զանազան պատճառներով իրենց դուռերը գոցեցին կամ միացուեցան իրարու: Այս մասին տրուեցան զանազան «պատճառաբանութիւններ», որոնք համոզիչ չեղան գրեթէ բոլորին:

Այս պահուն յարմար չենք գտներ խօսիլ վերոյիշեալ հարցին մասին կամ զայն դարձեալ քննարկել, թէեւ շատ մեկան հոսեցաւ անցնող տասնամեակներուն՝ առանց դոյզն դրական փոփոխութեան: Մեր համոզումով, հայկական վարժարանները եղած են այն մշակութային ու կրթական ամէնէն վստահելի բոյները, ուր միս ու արիւն առին սփիւռքը սնող եւ կառավարող տարրերը: Այստեղ է որ հայապահպանութիւնը գտաւ իր պարարտ հողը, շարունակեց գոյատեւել հայոց լեզուն, նոր սերունդներուն հաղորդուեցան հայոց պատմութիւնն ու հայ մշակոյթը՝ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՔԱՅԼ ՊԱՀԵԼՈՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՅԼ ԿԵՆՍԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐՈՒ ՀԵՏ: Ճիշդ էին Միութեան հիմնադիր մեծ տեսլապաշտ Պօղոս Նուպար փաշա եւ իր գործակիցները, որոնք 1906-էն սկսեալ մասնայատուկ ուշադրութեամբ եւ բծախնդրութեամբ լծուեցան ԴՊՐՈՑ, ԱԿՈՒՄԲ եւ ԵԿԵՂԵՑԻ կառուցելու եւ զանոնք պահելու գործին՝ ըլլա՛յ Հայրենիքի թէ սփիւռքի տարածքին: Թուենք քանի մը հատը՝ Քելէկեան որբանոց, Սիսուան որբանոց-դպրոց (Փորթ Սայիտ), Մելգոնեան Կրթական Հաստատութիւն (Նիկոսիա, Կիպրոս), Պէյրութի Դարուհի Յակոբեան աղջկանց եւ Յովակիմեան-Մանուկեան մանչերու

երկրորդական վարժարաններ, Հալէպի Լազար Նաճարեան վարժարան, Պէյրութի Երուանդ Տեմիրճեան, Կարպիս Նազարեան, Պօղոս Կարմիրեան վարժարաններ, Պուէնոս Այրեսի Մարի Մանուկեան վարժարան ու դեռ կարելի է երկարել այս շարքը:

Յատկապէս պէտք է շեշտել ՄԿՀ-ը, որ շուրջ ութը տասնամեակ ոչ միայն պատսպարեց հարիւրաւոր որբեր, այլեւ մասնագիտութեամբ ապահովեց զանոնք, պատրաստեց մանկավարժներ, հայագէտներ, գիտութեան եւ արուեստներու մէջ յաջողած մասնագէտներ, ազգային-հասարակական գործիչներ: Այս վարժարաններու մէջ հասակ առին նաեւ գործարարներ, որոնք իրենց նիւթական աղբիւրները չխնայեցին ազգին կարիքներուն համար: Հետեւաբար, այսօր եւս հացի եւ ջուրի պէս մեր ազգը պէտք ունի նոր ՄԿՀ-ի մը:

Մարտահրաւէրները շատ են նորընտիր նախագահին դիմաց: Թուենք քանի մը հատը.

– Միութեան անդամութեան վերականգնում, որպէսզի սփիւռքի թէ Հ. Հ.ի հայերը ունենան **պատկանելիութեան ու պարտականութեան** խորունկ զգացում.

– Նպաստել արտագաղթի դէմ պայքարին.

– Մելգոնեան Կրթական Հաստատութեան եւ առհասարակ հայ վարժարաններու դերի վերարժեւորում.

– Տաղանդաւոր երիտասարդ արուեստագէտներու եւ գրողներու քաջալերութիւն.

– Հայ մշակոյթի արժէքներու պահպանութիւն եւ ծանօթացում աշխարհին.

– Եւ ամենէն էականներէն մէկը՝ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅՆՈՒԹԻՒՆԸ՝ զայն դուրս բերելով յղփացած հարուստներու եւ քաղքենիներու ակումբի այսօրուան տխուր վիճակէն: Միութեան հիմնադիրներէն եւ նախագահներէն ոմանք մեծահարուստ էին, սակայն միաժամանակ՝ իրենք զիրենք ծառան կը նկատէին համեստ խաւերուն եւ չէին զլանար անոնց օգնել ու չէին անտեսեր անոնց նոյնիսկ աննշան թուող օգնութիւնները Միութեան: Մենք լաւ կը յիշենք ամէն հոկտեմբերի Մշակոյթի օրուան հանգանակութիւնները, երբ ժողովուրդին համեստ խաւերը լիաբուռն կը մասնակցէին տուն առ տուն շրջող միութենականներու եւ Հ. Բ. Ը. Մ.ի դպրոցներու աշակերտներու հանգանակութեան արշաւին: Աւելի ճիշդ է որ ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ՀԱՅ մէկական տոլար տայ Միութեան, քան ՄԷԿ ՀՈԳԻ՝ մէկ միլիոն տոլար (անշուշտ՝ ողջունելի են նաեւ վերջիններս): Կը կարծենք, թէ կարիքը չկայ բացատրելու, թէ այս երկուքին դրամական արտայայտութիւնը եթէ նոյն գումարն է, սակայն Միութեան աշխատանքներուն ՀՈԳԵԿՑՈՒԹԵԱՆ տարողութիւնները լեռ ու ձոր կը տարբերին իրարմէ (ընտրեալ նախագահը եւ Միութեան վարժարաններ յաճախած իր հարազատները՝ քոյրը՝

Սեդա, զարմիկները՝ Պերճ եւ Մարալ, տիկինը՝ Սիլվա եւ այլք՝ հաւանաբար մասնակցած են Մշակոյթի օրուան ժողովրդային հանգանակութիւններուն՝ ապրելով ուրախութեան գերագոյն պահեր…):

«Գեղարդ» ի սրտէ կը շնորհաւորէ պրն. Սեմ Սիմոնեանի ընտրութիւնը եւ պատրաստակամութիւն կը յայտնէ սատար կենալու անոր ազգօգուտ բոլոր նախաձեռնութիւններուն: Պարտ կը զգանք յիշեցնել թէ մեր անձնակազմի եօթը անդամներէն հինգը իր նման Հ. Բ. Ը. Միութեան Յովակիմեան-Մանուկեան մանչերու երկրորդական վարժարանի, Դարուհի Յակոբեան աղջկանց երկրորդական վարժարանի եւ Երուանդ Տեմիրճեան նախակրթարանի շրջանաւարտներ են, որոնք իրենց հայկական կրթութիւնն ու դաստիարակութիւնը կը պարտին իրենց յաճախած վարժարաններուն, անոնց բիւրիցս երանելի ուսուցչական կազմերուն եւ հովանաւոր մեծ Միութեան ազգային տեսլակա՛ն ունեցող ղեկավարներուն:

Ներածական նկարը կը ներկայացնէ 1973-ի Հ. Բ. Ը. Միութեան Յովակիմեան-Մանուկեան Մանչերու Երկրորդական Վարժարանի շրջանաւարտ հունձքը, յաջորդը՝ նոյն նկարէն մաս մը՝ ուր սլաքը կը մատնանշէ Սեմ Սիմոնեանը: Այնուհետեւ տեղադրուած է դպրոցի «Նուիրում» աշակերտական թերթի 1973-ի ամառը լոյս տեսած թիւէն փոխառնուած հատուած մը, որ կը վերաբերի Սիմոնեանի կենսագրութեան եւ իր այդ օրերու նշանաբանին՝ «Ըլլալ ինքնավստահ եւ արագ»: Ապա տեղադրուած է Սիմոնեան ամոլի (Սիլվա եւ Սեմ) նկարը, որուն կը յաջորդէ Հ. Բ. Ը. Միութեան նորընտիր նախագահին պատկերը՝ հարցազրոյցի ընթացքին:

Ի ԴԷՄՍ ԱՏՐՊԷՅՃԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՆՈՒԱՃՈՂԱԿԱՆ ԽԱՂՔԵՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԸՆԵԼԻՔ ՈՒՆԻ՞

Պարոյր Յ. Աղպաշեան

Բոլոր տուեալները եւ տեղեկութիւնները կան, տեսանելի թէ լսելի, արձանագրելի թէ շօշափելի, որ Հայաստանը վտանգուած է ու կրնայ մէկ օրէն միւսը ինքզինք գտնել ահաւոր տխուր ճակատագիրի մը առջեւ:

Անբնական, բայց, սերտուած եռք մը կ’ապրի ան, շրջանը փոթորկող յորձանուտին մէջ, ուր ամէն ինչ հաւանական է եւ առաջին անգամը չէ որ ան կը յայտնուի նման անճրկելի կացութեան մը մէջ;
Արցախը վկա՛յ, քանի անիկա «կենդանի» ու «բզքտուած» պատկեր մըն է, երբ օր-ցերեկով, համայն աշխարհի առջեւ ան զաւթուեցաւ ու բռնագաղթուեցաւ, համարեա առանց պատերազմի յանձնուելով թշնամիին, վերջին «մնացորդաց»ն ալ բնակչութեան, լռիկ-մնջիկ տեղահանելով:
Ակնյայտ էր նաեւ ներքին դաւադրութեան մը որոգայթը, որ պատած էր անոր շուրջը, քանի պարզուեցաւ դառն ճշմարտութիւն մը, երբ թշնամին եկաւ, անվարանօրէն եւ անարգելօրէն մուտք գործեց ու հանուր մարդկութեան անտարբեր աչքերուն առջեւ բազմեցաւ հոն, դարաւոր մեր մշակութային հարստութիւնները եւ աւանդութիւնները պղծելով ու քանդելով:

***

Այսօրուան իրավիճակը շատ աւելի դաժան եւ աղիտաբեր է, որովհետեւ սպառնական ճիչերն ու կոչերը, սլաքներն ու նիզակները ուղղուած են Հայաստանին, այն ՍՈՒՐԲ հողին, որ հայ ժողովուրդի ԿԵՆԱՑ երաշխիքն է, իր ամենազօրութեամբ, ամենագրաւչութեամբ եւ ամենագեղեցկութեամբ:

Դժբախտաբար, սակայն, ամբողջ անկախութեան ժամանակաշրջանին, կարելի չեղաւ հայրենիքի պահպանման եւ ուժեղացման լարերը գտնել ու զայն դարձնել ոչ միայն անառիկութեան միջնաբերդ, այլեւ՝ հայութեան յաւերժացման ամրակուռ սիւներու համախմբուածութիւն մը:

Աւելին. մէկ կողմէն՝ իշխանութիւն-լծակիցներ, միւս կողմէն՝ ընդդիմութիւն-գործակիցներ, իւրաքանչիւրը այնպիսի ուղիներով գործեց (ու կը գործէ), որ մեծ անջրպետներ ու խրամատներ առաջացուց, գրեթէ բոլոր մարզերէն ներս, ուր՝

- Ատելութիւնը գերակշռելի է
- Խաւարամտութիւնը նշմարելի
- Հաւկուրութիւնը շեշտելի
- Մոլեռանդութիւնը ընդգծելի
- Անտարբերութիւնը յատկանշելի
- Պատեհապաշտութիւնը ուշագրաւելի
- Շահագործութիւնը տարածելի
- Անհեռատեսութիւնը խոցելի

Այս բոլորը իրենց խայտաբղէտութեամբ, ձախաւերութեամբ, անճոռնիութեամբ, անճարակութեամբ, անյաջողակութեամբ ու վիժուածութեամբ, ողողած են ամէն հրապարակները, արահետներն ու անկիւնները, Հայաստանը մղելով դէպի անորոշ փապուղիներ, միջանցքներ կամ հորիզոններ, որոնք ոչինչով լաւատեսութիւն կը ներշնչեն կամ վարդագոյն նշաններ կրնան ցոյց տալ:

Ո՞վ կրնայ չհաւատալ այն տժգունութեան, որ այսօր, «օձ»ի նման փաթթուած է հայոց վզին, զայն փորձելով խեղդամահ ընել, մինչ անկէ դուրս գալու ճիգերը կամ հազուադէպ են, կամ՝ հիւանդկախ եւ կամ ալ՝ անգոյ:

Այն բոլոր փորձերն ու միջամտութիւնները, զգաստութիւններն ու սթափութիւնները, որոնք տարբեր առիթներով ու պայմաններով լսուեցան եւ արձանագրուեցան, գրուեցան եւ արձագանգուեցան, բոլորն ալ մնացին անհետեւանք եւ անլոյծ, որովհետեւ «հայրենական գնացք»ը, իր խուլ ու խռպոտ, բիրտ ու խժալուր տզզոցներով ու բզզիւններով, միայն ստեղծեց «բազում աղմուկ վասն ոչինչի», այսպէս.

- Իշխանութիւնը գնաց ու շարունակեց շարժիլ իր երթուղիով, զայն նկատելով ամենէն ճիշդը, օգտակարը ու հանրանպաստը:
- Ընդդիմութիւնը կառչած մնաց իր թեզերուն ու շարունակեց հաւատարմագրուիլ անոնց (թէկուզեւ մեծ մասամբ ջլատուած ու տարտղնուած շարքերով), հաւատալով որ… օր մը կը հասնի իր նպատակին:
- Քաղաքական հոսանքները, որոնք այսօր գրեթէ կշիռ ու հեղինակութիւն չունին, բայց, կը կարծեն ուժ մը ներկայացնել, հետեւաբար, անհրաժեշտ կը նկատեն տակաւին… խարխափիլ:
- Մտաւորական դասակարգը, որ կրնայ գործօն եւ ազդեցիկ ներկայութիւն մը դառնալ, այսօր, մեծ բացակայ մըն է, անյոյս նկատելով իր մասնակցութիւնը որեւէ հարթակի վրայ:
- Ժողովուրդին մեծամասնութիւնը յուսախաբ եւ հիասթափ, սրտնեղած եւ ընդվզած, բոլորը կը մեղադրէ անլրջութեան եւ համախաբէութեան «յանցանքներով»:
- Արցախի տեղահանուած ժողովուրդը, ինքզինք կը նկատէ «անտէր-անտիրական», թողլքուած իր ճակատագիրին, հոգ չէ թէ իր նկատմամբ կը կիրարկուին որոշ

օժանդակութիւններ կամ կը հնչեն զօրակցական կոչեր, որովհետեւ անիկա կ'ակնկալէ աւելի ազդու, հզօր եւ արդիւնաւէտ նախաձեռնութիւններ:
- Սփիւռքը, որ անկախութեան հոչակումէն ի վեր, թիկունք կանգնեցաւ հայրենիքին, ձեռք երկարելով ամէն կարիքի, այսօր, նոյն հաւաստիութիւնը պահելու դժուարութեան առջեւ կը գտնուի, քանի ամէն մէկ գաղութ կլանուած է իր հոգերով ու պահանջքներով, մանաւանդ երբ կը լսեն ու կը զգան, որ ներկայ իշխանութիւնները իր նկատմամբ այնքան ալ «ջերմ» չեն, օրինակ, ամբողջ Սփիւռքի նախարարութիւն մը ջնջելով ու զայն վերածելով «գրասենեակային» տարածքի մը:
***
Այս ճեպընթաց պատկերը արդէն ցոյց կու տայ ու կը հաստատէ, որ հայրենիքը ու հայ ժողովուրդը թեւակոխած են խիստ փշոտ ու կնճռոտ շաւիղներու մէջ, որոնցմէ ձերբազատուիլը, իրօք, դժուար եւ համարեա անյաղթահարելի է են, մանաւանդ ի տես այժմու թուլութիւններուն, ներքին հակամարտութիւններուն եւ արտաքին միջամտութիւններուն:
Բացայայտ է, այլեւ՝ ճշմարիտ, որ հայրենի աւագանիին ու ընդդիմութեան միջեւ որեւէ հասարակաց գիծ չկայ, ոչ ալ պիտի ըլլայ, այնքան ատեն որ՝ հակառակորդութիւնն եւ ոսոխութիւնը իրարու նկատմամբ հասած են գագաթնակէտային անվերադառնալի բարձունքներու:
Ուրեմն, ի՞նչ կը նշանակէ այս վերացական-առարկայական բարդ կեցուածքը, եթէ ոչ՝ հակամարտութիւնը կը մնայ ի զօրու եւ յղի նոր ու անակնկալ զարգացումներով:
Նիկոլ Փաշինեանը գլուխը առած ու փոխադրած է Արեւմտեան ափերը ու կը դեգերի հոս ու հոն, բայց, ի զարմանս բոլորին, այդ բեւեռներու վրայ, կը թուի թէ ինք մե՛նծ նուաճումներ արձանագրած է կամ իրագործելու վրայ է:
Անշուշտ, ան իր կոնակը «կիսով» հեռացուցած է երէկուան իր դաշնակիցէն կամ «դուռ» մը բաց պահելու մտահոգութեամբ կամ ալ՝ նոր «դուռ» մը շահելու շուտիկութեամբ:
Վստահաբար, այդ է պատճառը, որ ան մնայուն շրջագայութեան մէջ է, արեւմտեան ոստաններէն թէ միջազգային հիմնարկներէն եւ ընտանիքներէն ներս, իր դիրքը զօրացնելու ու հեղինակութիւնը բարձրացնելու գնով, ատկէ դուրս ու հեռու, իրեն համար, իր ժողովուրդին մօտ ըլլալը կամ անոր իրազեկելը այդքան հիմնական չնկատելով:
Բաց աստի, հաւատալով իր վերընտրութեան անխուսափելիութեան (Սահմանադրութեան փոփոխութեամբ թէ ոչ), ան, «ինձմէ ետք ջրհեղեղ»ի վճռակամութեամբ, կը քշէ իր այրուձին, հո՛ն՝ ուր ինք կ'երազէ կամ հո՛ն՝ ուր ինքզինք կայսր կը նկատէ:
Կ'ընդունինք, որ վարչապետ Նիկոլը, միջազգային կառոյցներէ ներս, ունի «առաւելութիւն»ներ, «կանաչ լոյս»եր, «խնամի»ներ, «կնքահայր»եր, որոնք՝ անմիջական հեռաւորութեան վրայ, կը գեղազարդեն ու կը պսակադրեն իր ներկայութիւնը, բայց, արդեօք կ'անդրադառնայ (թէ՞ ոչ), այդ բոլորը կրնան փրփուրներ ըլլալով, շուտով (կամ յետագային) խամրիլ:
Արեւմուտքի, ընդհուպ՝ Ամերիկայի վրայ այսքան յոյս դնելը, անոր նժոյգին վրայ թառիլը կամ զայն անզուգական նկատելը, արդեօք ո՞րքանով իրականութեան պիտի ծառայեն, երբ հեռաւոր թէ մօտաւոր անցեալները ցոյց տուած են անոնց անփառունակութիւնը, ի վնաս հայութեան գերագոյն շահերուն, մանաւանդ երբ իր հայեացքները սեւեռած է այնպիսի ափերու, ուր լողալը այդքան ալ դիւրին չէ:
Նոյն իրատեսութեամբ ու տրամաբանութեամբ, դատողութեամբ եւ իրապաշտութեամբ, գործող ձախլիկ ու միականի ընդդիմութիւնը, երբ ի վիճակի չէ սանթիմ մ'իսկ յաջողութեան հասնիլ, ինչո՞ւ մթնոլորտը կ'ապականէ ու կը մրոտէ, փոխանակ գտնելու այնպիսի յուսադրող ու շինիչ միջոցառումներ, որոնցմով կրնայ համաժողովրդային բարենիշ

արձանագրել, խուսափելով՝ «փարազիթ»եան անիմաստ աղմկատարութեամբ զբաղելէ (ու զբաղցնել հասարակութիւնը):
***
Այս հպումներու ու մտորումներու լոյսին տակ, բազմիցս մատնանշումներ, քննարկումներ եւ անդրադարձումներ կատարելէ ետք, աւելի քան զարմանալի ու զայրացուցիչ չէ՞, երբ ամէն ոք, իր գիտցած յանկերգով ու բազմերգով, տակաւին կը բարբառէ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՀՁՕՐԱՑՄԱՆ մասին:
Այս ձե՞ւով կը պահուի պետականութիւնը ու կը յարգուի պետութեան արժանապատուութիւնը, երբ ամէն գլուխէ վայնասուն մը կը լսուի, բնական է, յանուն ինքնանպատակ քարոզչութեան եւ ինքնայաւակնութեան:
Եզրակացնելու պէտք կա՞յ, թէ՞ արդէն եզրակացութիւնը յստակ է, այժմ եւ յաւիտեանս, որ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ (ո՛չ Ազատութիւն), ՊԵՏՈՒԹԻՒՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ պահելու համար, այս թթու ոգիով, բազմագլուխութեամբ, հակաճառութեամբ, անշնորհքութեամբ, պառակտութեամբ, քինախնդրութեամբ, ինչպէ՞ս կարելի է, Հայաստանը Հայաստան պահել, հայրենիքը՝ հայրենիք, Արցախը վերադարձնել եւ… հայկական պահանջատիրութիւնը հետապնդել:
Ի վերջոյ. հիմնական հարցադրումը.
Ատրպէյճանը ու Թուրքիան կը դարպասեն Հայաստանը, յամառօրէ՛ն ու շարունակաբար, իսկ Հայաստանը ի՞նչ կ'ընէ հակազդելու ու ոչ միայն զսպելու արիւնարբու հրէշները, այլեւ հակագրոհելու ու հակակշռելու պատմական ոսոխները:
(Պէյրութ)

5/4/2024

ՄԵՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՈՎ ՈՒ ԴԱՏՈՒՄՈՎ շարքէն:

ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆ



«Հայ ժողովուրդը մշակութային յուշարձան է եւ նրա ապահով պահպանումը պարտքն է ոչ միայն մեր՝ հայերիս, այլեւ քաղաքակիրթ մարդկութեան»:

Վազգէն Ա:

Ազգերի եւ երկրների պատմական անցեալին անդրադառնալու պարագային յաճախ ակամայից հարց է ծագում, թէ ո՛ւր են այսօր Ասորեստանը կամ Բիւզանդիոնը եւ նրանց ժամանակակից մի քանի այլ երկրներ, եւ ո՛րն է նրանց անյայտացումի պատճառը: Թէեւ ոչ ամբողջական, բայց անմիջական պատասխանը կը լինի՝ երբ արտաքին ուժերի գործունէութեանը մասնակից էին նաեւ ներքինները: Սխալ չէ մտածել, որ մեր աւետեաց երկիրը վեր ի վարով նոյն վիճակի է եւ տագնապի ազդանշանները հեռու չեն իրականութիւնից եւ երջանիկ կը լինեմ, եթէ սխալ եմ:

Դարերի ընթացքին ինքնապահպանման բնազդը, որ անշէջ էր մեր հասարակութեան գիտակցութեան մէջ իր հայեցի ոգով, նրա շնորհիւ դարեր ի վեր դիմակայեցինք տարբեր տեսակի արհաւիրքների: Անկախութիւն ձեռք բերելուց յետոյ, վերջին տասնամեակների ընթացքին, ազգային գաղափարախօսութիւնը բացակայութեան նշաններ է ցոյց տալիս եւ «Հայեցի» բառի իմաստը կարծես արժէքազրկուել է:

Մենք իրաւունք չունենք չնկատել, չըմբռնել եւ պարտաւոր ենք, որ ամէն անգամ, երբ կործանուելու, կորցուելու տագնապը հաւանական, առկայ, կամ նախատեսելի է՝ պատրաստուել լաւագոյնս դիմակայել գալիք չարիքին: Այդ պարագային անսխալ կը լինէր, որ տարբեր տեսակի ու գաղափարի հոսանքները հաշուի առնելով հաւանական վտանգի կարեւորութիւնը՝ հաւասարակշիռ կողմնորոշումի դիրք ընդունեն, իսկ արդի ընդդիմադրութեան մասին անդրադառնալը համարում եմ աւելորդ եւ անիմաստ:

Ի վերջոյ նկատի ունենալով տիրող բազմակողմանի բարդ ու խճճուած կարգավիճակը, որ հսկայական Գորդեան կծիկի է նման, նկատի ունենալով անհաշտ կապերը ՀԱՊԿ-ի եւ ՌԴ-ի հետ, ոչ կատարեալ եւ կէս լուրջ կէս կատակ սիրաբանութիւնները արեւմուտքի մի շարք երկրների հետ՝ սին խոստումներով եւ իրենց շահերից ելնող առաջարկութիւններով, խաղաղութեան հասնելու փորձերը երկու դրացիների հետ, որ երբեք շօշափելի հանգրուանի չեն հասնում,-- մեզ մնում է աւելի աչալուրջ լինել եւ մեր գլուխը մեր միջոցներով քորել, որի համար պարտադիր եւ անհրաժեշտ է համայնական ջանքերով ընտրել հաստատուն **կողմնորոշում** մեր շահերի եւ նպատակների հիմունքներով՝ ընդունելի բոլորի կողմից, որ դժուար իրագործելի է, նկատի ունենալով մեր հասարակութեան գաղափարական անառողջ կացութիւնը :

Ինչո՞ւ, ինչպէ՞ս հասանք այս վիճակի: Բազում եւ պարզ են պատճառները.-

ա) Անհնար է աչքաթող անել արտագաղթի տուած ահռելի կործանիչ չարիքը: Պաշտօնական տուեալներով 1992-2020 տարիներին արտագաղթել է 1 161 000 մարդ, որ բնակչութեան աւելի քան մէկ երրորդն էր կազմում: Տարբեր հանգամանքների հետ կապուած վերադարձել են՝ ընդամէնը 35 000-ը, որ միայն երեք տոկոս է: Ի դէպ օրերս հանդիպեցի նախկին հայրենաբնակ մի ընտանիքի հետ, որ հաստատուել են ԱՄՆ, ունեն իրենց «բիզնեսը» եւ երբեմն այցելում են իրենց օրրանը: Իմ այն նկատողութեանը, որ իրենք նման են կկու թռչունին, որ այլոց բնի մէջ է ձու դնելով եւ իր պարտականութիւնը կատարած է համարում: Այդ համեմատութեան առիթով զրուցակիցներս մի փոքր ըմբոստացան, նշելով, որ եթէ ԱՄՆ-ի նոյն պայմանները գէթ մասնաւորապէս ապահով լինեն, ապա իրենք պատրաստ են սիրով իրենց գործը տեղափոխել Երեւան եւ իրենք միակը չեն լինի: Կարծում եմ անելիք եւ մտածելու տեղ շատ կայ:

բ) Հասարակութեան համընդհանուր եւ անհատական բարոյական մակարդակի ընդհանուր անկումը նշան է. որ հայ **դպրոցը** լայն ըմբռնումով եւ **եկեղեցին** տասնամեակներ իրենց դերը վրիպած եւ լքած, դարձել էին կուսակցական ընտրապայքարի եւ քարոզարշաւի օժանդակ միաւորներ: Պատահական եւ գաղտնիք եւս չէ, որ հազուագիւտ են հայերէնին տիրապետողները: Վաղուց է որ **«Է»** օժանդակ բայը դադարել է գործածուել մեր

օրրանի ցանկացած միջավայրում, իսկ գործածուած հայերէնը այլանդակ: Կրօնական եւ մանկավարժ այրերը մեծ քայլ ունեն անելիք կրթութեան կացութիւնը վերականգնելու:

գ) Տնտեսական ոլորտը, որ կարեւորագոյն տեղ ունի իւրաքանչիւր պետութեան կենսական համակարգի համար, լուրջ զարգացում ունեցաւ մեր երկրում անկախութեանը նախորդող տասնամեակներին, բայց աւա՜ղ նորածիլ քաղաքական գործիչները սխալ կողմնորոշման հետեւանքով կարողացան այն ոչնչացնել եւ կազմալուծել սեփականաշնորհումի ճանապարհով: «Նաիրիտ» եւ «447» ռազմարդիւնաբերական հսկայ գործարանները խոպան դարձան: Հազարաւոր գործաւոր բռնեց արտագաղթի ճամփան: Մտադիր չեմ յանցաւոր փնտռել, բայց այդ է փաստը:

Արդի ՀՀ տնտեսութեան հիմնական բաղադրիչը սպասարկման ոլորտն է ուր զգալի աճ է գրանցուած, միայն թէ այն բաւարար չէ երկրի բարգաւաճմանը, որի համար անհրաժեշտ է լրջախոհ կողմնորոշում ուղղուած դէպի բազմատեսակ արդիւնաբերութեան ստեղծման, որ օտարերկրեայ նաեւ սփիւռքահայ ներդրողների ուշադրութեան կարող է արժանանալ: Արգելուած չէ նաեւ յուսալ, որ այն լինի ազդակ եւ խթանի սպասուած ներգաղթին:

դ)Յաճախ եմ հարց տալիս, թէ մեր պետական այրերը, մտաւորականները եւ հանրութիւնը երբեւէ մտածել են, թէ ի՜նչ տեսակ երկիր եւ միջավայր պիտի կերտեն եւ ի վերջոյ այն պիտի ունենայ հայեցի բովանդակութիւն, թէ լինի, ինչ որ արեւմտեան դրոշմի նմանակում: Արդի Երեւանի փողոցներում բացի խորդ ու բարդ մայթերից ոչինչ չկայ հայկական՝ նախընտրելի է լռել այլանդակ ցուցանակների մասին, որոնց կողքին պետական գրանցումներով ձեռնարկութիւնները օտար անունով են: Արթնացի՛ր, **հայ մարդ,** եթէ չես ցանկանում Արցախի ու Նախիջեւանի բախտին արժանանալ:

24 / 3 /24

Ռուբէն Յովակիմեան- Սան Ռաֆայել

ԱՊԱԳԱՂՈՒԹԱՅՄԱՆ ՓՇՈՏ ՃԱՆԱՊԱՐՀԸ

ԱՒՕ ՊՕՂՈՍԵԱՆ

Անգլիոյ Պրիսթոլ քաղաքի փողոցներէն մէկուն վրայ գտնուող Էտուըրտ Քոլսթոնի (Edward Colston) արձանը, պետութեան կողմէ 2020ին վերջապէս վար առնուեցաւ անոր տեղադրումէն 130 տարիներ ետք: Քոլսթոն 1680ին ունէր առեւտուրի մենաշնորհը Արեւմտեան Ափրիկէի ստրուկներու, որոնց՝ ամերիկացիներուն վաճառքէն ան հարստացած էր, իսկ Անգլիոյ Պրիսթոլ քաղաքին մէջ իբրեւ բարեգործ հռչակուած էր՝ քանի մը դպրոցներ եւ այլ հանրօգուտ ձեռնարկներու նուիրատուն ըլլալուն համար: Այս կը նշանակէ, որ Անգլիոյ համար այնքան երկար տարիներ, նոյնիսկ արտերկրի իր գաղութներէն հեռանալէն եւ անոնց անկախանալէն ետք, ոչ մէկ զղջումի զգացում կար, աւելին՝ նոյնիսկ քաղաքին եւ երկրին սեւամորթ եւ ափրիկեան ծագումով քաղաքացիներուն համար գաղութատիրութեան հասկացութիւնը բնական համարուած էր, որ այլ բան չէր, քան գաղութատիրող նկատմամբ ստորադասութեան բարդոյթ: Այս բարդոյթը ոչ միայն գաղութատէրերու երկիրներուն մէջ ապրող նախկին գաղութներէն տեղափոխուած քաղաքացիներուն մօտ ներկայ է, այլ նոյնինքն նախկին գաղութներու բնակիչներուն մօտ, իրենց երկիրներուն անկախութեան վերատիրանալէն տասնամեակներ ետք եւս:

Այդ բարդոյթը գոյութիւն ունի Ափրիկէի գրեթէ բոլոր եւ Ասիական կարգ մը երկիրներու մէջ, ուր նախկին գաղութատէրերու լեզուները առաւել տիրապետող են, քան՝ տեղական լեզուները: Շատ են օրինակները, որոնցմէ եթէ թուելու ըլլանք քանի մը հատը, պիտի տեսնենք որ հիւսիսային Ափրիկէի միջերկրականեան երկիրներէն Թունուզը, Մարոքը եւ Ալճերիան, որոնք Ֆրանսական գաղութներ եղած էին, ֆրանսերէնը մինչեւ տասնամեակ մը առաջ համատարած խօսակցական լեզուն էր եւ միայն նոր սերունդն է, որ ֆրանսերէնի իմացութեան կողքին ֆրանսախառն արաբերէն կը խօսի, առանց թաքցնելու ֆրանսացիներուն հանդէպ ատելութեան զգացումը:

Նոյնն է պարագան Հնդկաստանի մէջ, ուր պաշտօնական լեզուները հաւասարապէս հինտուն եւ անգլերէնն են:

Վերադառնալով Եւրոպա կամ Ամերիկա, գաղութատիրութիւնը եւ գերակայութեան զգացումը տակաւին կը շարունակուի նոյնինքն այդ ցամաքամասերուն վրայ: Առաջինի պարագային, գրեթէ բոլոր երկիրներուն մէջ կան փոքրամասնութիւններ, որոնք կ՚ապրին իրենց դարաւոր հայրենիքներուն մէջ, սակայն առանց իրենց հարազատ պետականութեան

եւ ինքնիշխանութեան: Անոնցմէ են տասնմէկ միլիոն գնչուները, որոնք նոյնիսկ քաղաքացիութիւն չունին, սամի ժողովուրդը, որ տարածուած է Նորվեկիոյ, Շուէտի, Ֆինլանտայի, Ռուսիոյ հիւսիսային մասերուն մէջ, ափրիկեան երկիրներու սփիւռքները, Ամերիկայի ցամաքամասի բնիկ ժողովուրդները, որոնց հայրենիքները նոյնիսկ գաղութներ չեն, որովհետեւ անոնց հողերը ուղղակիօրէն խլուած են անոնց ձեռքէն եւ բնակեցուած եւրոպացիներով եւ այլ ժողովուրդներով. Նոյնը՝ նաեւ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի մէջ:

Այսօր, ամբողջ աշխարհի տարածքին, ըստ Սերա Ա. Ռատքլիֆի (Sarah A. Radcliffe) «Decolonizing Geography» գիրքին, կայ մօտաւորապէս 476 միլիոն բնիկ ժողովուրդ, որ անկախութիւն եւ ազատութիւն կը պահանջէ: Այդ թիւին մէջ ներառուած են նաեւ Ռուսիոյ մէջ ապրող բազմաթիւ ազգեր, ինչպէս՝ նէնէթցները, եակութները, էվէնկները, չուկչիները, օսեթները եւ շատ ուրիշներ, որոնք ունին իրենց մշակոյթը, լեզուն եւ աւանդութիւնները եւ յաճախ իրենց մշակոյթներուն ճանաչման համար պահանջներ կ՛արտայայտեն:

Գաղութարարները թէ՛ անցեալին եւ թէ ներկայիս, իրենց տիրապետութիւնը կ՛արդարացնեն՝ իբրեւ տիրապետուած ժողովուրդներուն քաղաքակրթական մակարդակին բարձրացումով, առանց յիշատակելու այդ ժողովուրդներուն շահագործումը եւ բնական հարստութիւններուն կողոպուտը: Այդպէս վարուած էր նաեւ Ռուսական կայսրութիւնը եւ անոր յաջորդած Խորհրդային Միութիւնը, որ այլ բան չէր, եթէ ոչ նոյն ռուսական կայսրութիւնը՝ տարբեր անուանումով, որ, իրողապէս իր տիրապետութեան տակ գտնուող 15 հանրապետութիւնները շահագործեց 70 տարիներ, անոնց բնական հարստութիւնները, ընդերքը կողոպտելով եւ մարդկային բազմութիւնները ստրկացնելով, կամայականօրէն փոխելով այդ երկիրներուն քարտէսները, զանոնք շահարկելով իր մաքիաւելական հաշիւներուն համար եւ իրմէ կախեալ պահելու նպատակով:

Խորհրդային Միութեան փլուզումով, անոր մաս կազմող 15 հանրապետութիւնները անկախացան, սակայն ապագաղութացումը դիւրին բան չէր: Տարիներ եւ տասնամեակներ պէտք եղան՝ մարդոց մէջէն արմատախիլ ընելու արմատացած սովորութիւնները, հոգեբանութիւնը, կեդրոնէն կախեալ ըլլալու սովորութիւնը, լեզուն, մշակոյթը եւ ամէնէն կարեւորը՝ պետութենէն բան մը պոկելու, փախցնելու, գողնալու եւ իր գլխուն ճարին նայելու կենսակերպը: Թերեւս միւս բոլոր հանրապետութիւններէն աւելի, մեր մօտ եղած է Ռուսիոյ հետ կապի ամրութիւնը, որ հաստատուած էր երկու հարիւր տարի առաջ, մեր աշխարհագրութեամբ պայմանաւորուած. Ռուսիան՝ իբրեւ փրկիչ կը նկատուէր:

Այսօր եւս, անկախացումէն 30 տարիներ ետք, դիւրին չէ Ռուսիոյ հետ մեր պորտալարը կտրելը, եւ բոլորին կողմէ արդէն տեսանելի է Ռուսիոյ դերը Արցախի աղէտին մէջ, թէեւ

բաւական նուազած, սակայն ժողովուրդին ենթագիտակցութեան մէջ տակաւին կայ այն վախը եւ կասկածը, որ առանց Ռուսիոյ պաշտպանութեան, մենք պարզապէս չենք կրնար գոյատեւել տարածաշրջանին մէջ, առանց երկար խորհելու, թէ ի՛նչ վիճակի կրնանք մատնուիլ, եթէ Ռուսիա ստիպուած ըլլայ մեզմէ հրաժարելու, զանազան պատճառներէ եւ հաշիւներէ դրդուած:

Այս աշխարհագրութեան եւ աշխարհաքաղաքական փոփոխութիւններու լոյսին տակ, մենք հարկադրուած ենք լաւագոյն եւ նուազագոյն վնասներով լուծումի մը փնտռտուքին: Անշուշտ, լաւագոյնը, տրամաբանականօրէն, հաւասարակշռուած քաղաքականութիւն մը վարելն է, ինքնապաշտպանութեան մեր հնարաւորութիւնները աւելցնելով եւ հզօրացնելով: Թէ այդ որքա՞ն եւ ինչպէ՞ս կարելի է իրականացնել, նոյնիսկ գիտակցելով, որ աշխարհաքաղաքականութեան մէջ չկան աւելի լաւ գաղութատէրեր եւ շատ ուրիշներու եւ մեր իսկ պատմութեան ընթացքին Արեւմուտքին կողմէն լքուած եւ շահագործուած ըլլալու փաստերը անհաշիւ են, սակայն այսօր մենք կը գտնուինք ճակատագրական ջրբաժանի մը առջեւ: Կա՛մ անձնատուր կ՛ըլլանք մեր ճակատագիրին եւ կ՛ապաւինինք Ռուսիոյ պետական շահերու հոլովոյթին, կամ կը փորձենք մեր աշխարհագրական դիրքը դարձնել մեր գոյատեւման համար կարեւոր կռուան մը:

Թէ ինչպէ՞ս, այդ արդէն մեր քաղաքագէտներուն եւ փորձագէտներուն պարտաւորութիւնն է:

Մարտահրաւէրները եւ անոնցմէ բխած վտանգները բազմաթիւ են:

6/3/2024

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՄ-ԷՆ ԵՒ ԱՄՆ-ԷՆ ՍՏԱՑԱԾ Է ՖԻՆԱՆՍԱՒՈՐՈՒՄ ԵՒ ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆ, ՍԱԿԱՅՆ Ո՛Չ ՄԷԿ ՓԱՄՓՈՒՇՏ

Յարութ Սասունեան
www.TheCaliforniaCourier.com



Անցեալ Ուրբաթ Պրիւքսելի մէջ տեղի ունեցաւ եւրոպացի, ամերիկացի բարձրաստիճան պաշտօնեաներու եւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի շատ սպասուած հանդիպումը: Հայերը չափազանց ոգեւորուած էին այդ հանդիպման առիթով, անոր կայացումէն շատ առաջ:

Որոշ հայեր ի զուր կ՛ենթադրէին, որ Հայաստան շուտով կ՛անդամակցի Եւրոմիութեան, իսկ ուրիշներ աւելի հեռուն երթալով՝ կը կանխատեսէին, որ Հայաստան կը դառնայ ՆԱԹՕ-ի անդամ:

Թէեւ հայերը հիանալի ժողովուրդ են, սակայն իրենց ամբողջ պատմութեան ընթացքին ունեցած են մեծ թերութիւն մը, որ դիւանագիտութեան մէջ հմտութիւններու պակասն է:

Թէեւ հայերը վնասուած են ներխուժումներէ, բռնագրաւումներէ, կոտորածներէ եւ նոյնիսկ ցեղասպանութենէ, անոնք սակայն երբեք չեն հասկցած, որ ոչ մէկ օտար ուժ կրնայ փրկել զիրենք: Անոնք միշտ յոյս ունեցած էին, որ երկիր մը կը փրկէ զիրենք, կարծես թէ ռեւէ մէկը պարտաւոր էր այդ ընել: Եթէ հայերը երբեք չեն պաշտպանած իրենց երկիրը, ապա ինչո՞ւ պէտք է օտարը նման բան ընէ: Ինչպէ՞ս կրնան օտարները շատ աւելի մտահոգուած ըլլալ Հայաստանի անվտանգութեան եւ բարեկեցութեան հարցերով, քան հայերը:

Հակառակը ապացուցող բոլոր փաստերուն փոխարէն՝ հայեր հազարաւոր տարիներու ընթացքին հաւատացած են այն հեքիաթին, որ մէկը կու գայ փրկելու զիրենք: Մինչեւ վերջերս, հայերուն մեծ մասը կը հաւատար, որ եթէ իրական վտանգի մէջ ըլլան, Ռուսիա կը փրկէ զիրենք: Բնականաբար, հին ցանկալին փոխան իրականի ընդունելու շարունակութիւնն է այս: Հակառակ հայերու ակնկալիքներուն, երբ Ռուսիա 2020ին Արցախը չպաշտպանեց Ատրպէյճանի ներխուժումէն, ակնյայտ էր, որ Ռուսիա պարտաւորութիւն չունէր պաշտպանելու Արցախը, քանի որ անիկա Հայաստանի Հանրապետութեան մաս չէր կազմեր: Ի վերջոյ, ռազմական դաշինքը, որ կը կոչուէր Հաւաքական անվտանգութեան պայմանագիրի կազմակերպութիւն (ՀԱՊԿ), եղած է Ռուսիոյ, նախկին խորհրդային չորս այլ հանրապետութիւններու եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ, այլ ոչ թէ Արցախի: Բայց երբ Ատրպէյճան 2021 եւ 2022 թուականներուն գրաւեց Հայաստանի որոշ տարածքներ, աւելի շատ հայեր սկսան սթափիլ այն փաստէն, որ ՀԱՊԿ ոչինչ պիտի ընէ Հայաստանի տարածքը պաշտպանելու համար:

Կարելի էր կարծել, որ երբ օր մը հայերը վերջապէս հասկնան այս փաստը, անոնք կը համոզուին, որ ոչ ոք պիտի պաշտպանէ Հայաստանը: Ցաւօք, այդ տեղի չունեցաւ: Անոնք շարունակեցին փրկիչներու իրենց յաւերժական փնտռտուքը: Պայմանաւորուած Ռուսիոյ նկատմամբ աճող հակակրանքով՝ բազմաթիւ հայեր սկսան հաւատալ, որ այժմ իրենց օգնութեան կու գայ Արեւմուտքը (Եւրոպան, ԱՄՆ-ը) կամ Իրանը: Որոշ ժամանակ անց, երբ տեսնեն, որ ոչ Եւրոպան, ոչ ԱՄՆ-ը, ոչ ալ Իրանը կը պատրաստուի փրկել զիրենք, անոնք պիտի երեւակայեն, որ Հնդկաստանն ու Չինաստանը կը պաշտպանեն զիրենք: Այսպիսով, անոնք կ՛երթան երկրէ-երկիր՝ նոր պաշտպան փնտռելու: Բայց հայերը կը շարունակեն հաւատալ, որ ուրիշներ պարտաւոր են պաշտպանելու զիրենք: Աշխարհի իւրաքանչիւր երկիր կը պաշտպանէ իր ազգային շահերը, բացառութեամբ, կարծես թէ, Հայաստանի: Եթէ Հայաստան ձեռնհաս ղեկավար ունենար, ան արագ քայլերու կը ձեռնարկէր՝ մինչեւ ակռաները զինելու համար երկիրը՝ որպէսզի պաշտպանէ ինքզինք: Կան մարդիկ, որոնք կ՛ըսեն՝ Հայաստան երբեք չի կրնար պաշտպանուիլ իրմէ աւելի հզօր թշնամիներէն, որքան որ ալ ինք լաւ զինուի: Թէեւ այս ճիշդ է, սակայն լուծումը Հայաստանի սահմանները անպաշտպան թողնելը չէ, որ ամէն մէկը կարենայ ներխուժել: Հայաստանի թշնամիները պէտք է գիտակցին, որ եթէ համարձակին հատել անոր սահմանները, ապա եւ սուղ գին կը վճարեն: Անոնք պէտք է գիտնան, որ Հայաստան հանրային պարտէզ չէ, ուր կրնան ազատօրէն մտնել, երբ որ ուզեն:

Անդրադառնալով անցած Ուրբաթ Պրիւքսելի մէջ կայացած հանդիպման, բնականաբար, երբեք չքննարկուեցաւ Եւրոմիութեան կամ ՆԱԹՕ-ին անդամակցելու հարցը: Հայաստան իսկապէս ստացաւ քանի մը հարիւր միլիոն տոլարի խոստումներ յաջորդ չորս տարուան ընթացքին եւ աւելի փոքր գումար՝ Միացեալ Նահանգներու տնտեսական օգնութենէն:

Բնականաբար, ասիկա լաւ է։ Ո՞վ կրնայ վիճարկել դրամաշնորհի ստացումը՝ ենթադրելով, որ այդ գումարը կը ծախսուի խելամտօրէն եւ չ՛երթար իշխանամէտ կապալառուներու գրպանները։

Հայաստանին գումար յատկացուեցաւ տնտեսական զարգացման եւ այլ ենթակառուցուածքներու համար, օրինակ՝ ուժանիւթի։ Այս նոյնպէս լաւ է։ Այնուհետեւ մենք շատ քարոզչութիւն լսեցինք Հայաստանի ժողովրդավարական պետութիւն ըլլալու մասին։ Ասիկա պարզապէս շողոքորթութիւն էր՝ Փաշինեանը զուարճացնելու համար։ ԱՄՆ պետական քարտուղար Էնթընի Պլինքէն շարունակեց խրախուսել Հայաստանի մէջ ժողովրդավարութեան խթանումը, թէեւ ԱՄՆ կառավարութիւնը ուշադրութիւն չի դարձներ նման անիմաստ սկզբունքներու վրայ, բացառութեամբ այն դէպքերուն, երբ այդ կը համապատասխանէ իր քաղաքական ու ռազմական շահերուն։ Հակառակ պարագային, Միացեալ Նահանգներ շատոնց պատժամիջոցներ կը սահմանէր Ատրպէյճանի եւ Թուրքիոյ դէմ՝ իրենց սեփական բնակչութեան, ինչպէս նաեւ արցախահայերու ժողովրդավարական իրաւունքներու գծով իրենց արձանագրած բազմաթիւ խախտումներուն պատճառով։

Հայաստան քաղաքական քարոզչութեան կարիք չունի Արեւմուտքէն։ Հաշուի առնելով Ատրպէյճանի շարունակական յարձակումները Հայաստանի վրայ, նոյնիսկ Պրիւքսելի մէջ հանդիպման կայացման ժամանակ, այլ այս պահուն Հայաստանին ամէնէն աւելի անհրաժեշտ է զէնք՝ պաշտպանուելու համար իր մահացու թշնամիներէն՝ Ատրպէյճանէն եւ Թուրքիայէն։ Եթէ յանկարծ կորսնցնենք մեր հայրենիքը, անիմաստ կը դառնայ բարելաւուած կառոյցներ կամ ժողովրդավարական կառավարում ունենալը։ Քանի որ ո՛չ Արեւելքը, ո՛չ Արեւմուտքը կ՛ապահովեն Հայաստանի անվտանգութիւնը, իսկ նախագահ Ալիեւ համոզուած է, որ Հայաստանի հետ կրնայ վարուիլ ինչպէս որ կ՛ուզէ, եւ ոչ ոք բան մը կ՛ընէ զայն պաշտպանելու համար՝ բացի «բուռ» մը տոլարէն ու բազում անօգուտ գովասանքներէ։

Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան

Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան

10/4/2024

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ

ԵՐԱՆԻ
Երանի անոր ո՛վ հիւլէ մը լոյս կու տայ աշխարհին
Անձայն, անաղմուկ, բերկրանքով ներքին որ անուն չունի,
Ձերթ շողն արեւին որ կը ճառագէ ու կը ջերմացնէ
Անվա՛րձ, անհատո՛յց կը մնայ իր ճիգին միշտ հոգենուէր...

Լոյսի հիւլէներն սիրով ընծայուած կարծես կը շատնան,
Կը մտնեն յուշիկ բի՛ւր-բի՛ւր սիրտերէն ներս լուսածարաւ,
Տաք սիրալոյսովն իրենց կ'ողողեն սիրտերը չորցած,
Որոնք կը բանան ծաղիկներ բուրեան, թոյրերով վառման...

Ամէն մի ծաղիկ օրհներգութիւն է լոյսին, արեւին,
Ամէն մի ծաղիկ սիրերգութիւն է կեանքին, աշխարհին,
Ամէն մի ծաղիկ նորոգ ճաճանչ մ'է գեղեցիկին,
Որ կը պարուրէ աշխարհն ու մարդը լոյսով խնդագին:
26/4/2022
.....

ԳԱՐՈՒՆԱՎԱՌ
Գարունավառ լոյս հետքերով
Ես դեռ կ'անցնիմ մտամոլոր,
Բիւր ծաղիկներ զիս կը կանչեն
Հեքիաթներուս ճամբաներէն...

Այնքան սէր կայ հոն թանձրացած,
Այնքան ճաճանչ լուսապայծառ,

Տարիները ինչպէ՞ս կրնան
Մարել հուրքը սիրահարաշ...

Մէն մի ծաղիկ ակնթա՛րթ մ'է
Գարնանահեւ ապրումներէս,
Մէն մի ծաղիկ սիրոյ բո՛յր է
Կարօտներէս արեւահեւ..

Կ'անցնին ամառ, աշուն, ձմեռ,
Գարնանայորդ կը մնամ ես
Եւ զարթօնքովն իր լուսեղէն
Կը հուրհրատեմ նորոգ յոյսեր:
27/3/2022
.....

ԽԻՂՃԸ
Երանի՛ անոնց որ լուռ կ'աշխատին
Անսալով միայն ներքին այն ձայնին,
Որ խիղճ կը կոչուի, անտեսանելի՛ն,
Որ կը հրահանգէ լռութեամբ խորին,
Կ'ուղղորդէ վարքդ, խօսքդ, արարքդ:
Թէ զայն անտեսես, չես գտներ հանգիստ,
Թէ փորձես խաբել, կը խռովէ քունդ,
Քեզ կը կշտամբէ բառերով լռին,
Քեզ կը հալածէ գիշեր թէ ցերեկ,
Քուն թէ արթմնի ան քեզի հետ է,
Երջանկութիւնդ կ'առնէ փրկագին:
Բայց թէ քարանայ կամ ալ բթանայ,
Կեանքդ կը դարձնէ անոպայ ընթացք,
Կը սպառնայ հոգւոյդ ու կը խեղդէ զայն...
Իսկ առանց հոգւոյն, ի՞նչ կ'արժէ աշխարհն
Իր ողջ ճոխութեամբ, իր հարստութեամբ,
Քանզի հոգին է այն գանձը միակ,
Որ քեզ կ'ընծայէ ըլլալ մարդ էակ:
10/3/2024
.....

ԲՈԼՈՐ ՊՈԷՏՆԵՐՈՒՆ
Ձեր խօսքն ուրիշ է, սրտաբուխ ճիչ է,
Ձեր ձայնն ուրիշ է, հոգիի կանչ է,
Վեհ արդարութեան բորբ աղաղակ է,
Անարդարուածի ցասման հառաչ է:
Ձեր մէջ թրթիռն է մէն մի տերեւի,
Ձեր մէջ դայլայլն է մէն մի թռչնակի,
Դուք էք քնքշանքը բիւր ծաղիկներուն
Ու վէտվէտումը խոնարհ խոտերուն:
Սէրն ու կարօտը ձեր սիրտէն բխին
Ու կը տարածուին համայն աշխարհին:

Ձեր խիղճն մշտարթուն չունի դուլ, դադար,
Աստուծոյ աչքն է աշխարհիս վրայ:
Բառերը կարծես ձեր մէջ կը ծնին,
Կը դառնան աղօթք Ամենակալին,
Ձեր մէն մի բառը ոգիի թռիչք է,
Հոգիի խոյանք, վսեմ ճախրանք է:
Աշխարհի ցաւով դուք կ'այրիք անվերջ,
Ինչպէս կեռոն մը կաթիլ առ կաթիլ,
Ձեր կրրակը՝ ներս, դուրսը ճրրագ է
Որ լուսաւորէ սիրտերը մթին:
Աշխարհի ցաւին կ'ըլլաք սպեղանի,
Բուժիչ դեղ, դարման հայրենեաց վէրքին,
Կ'ամոքէք սիրտերն ինչպէս բալասան,
Կ'ըլլաք սփոփանք հոգւոյն վշտահար:
Չէք ուզեր դուք վարձք, նոյնիսկ երախտիք
Ձեր աշխատանքին ու նուիրումին:
Միայն ձեր հոգին կարենայ բերկրիլ
Ի տես մարդկային համերաշխ կեանքին:
Ձեր հատուցումը միայն կը գտնէք
Թէ յոյս առկայծէք ցաւոտ սրտին մէջ,
Լոյսի նշոյլով ցրրէք խաւարը,
Քանզի դուք էք, դո՛ւք լոյսի ասպետը:
16/3/2024

.....

ՏԷ՛Ր, Կ'ԱՂԱՉԵՄ
Պահեր կան երբ աղօթքս լուռ բա՛ռ կը զգենու,
Կը դառնայ տո՛ղ, կը դառնայ տա՛ղ առ Արարիչն...
Եւ չեմ գիտեր ո՞վ կը յուշէ բառերը սուրբ
Որ կը հիւսուին մէկը միւսին գորովագին...
Եւ ի՛նչ ընծայ մըն է տրուպիս երկնէն տրուած,
Բառեր որոնք աղո՛թք դառնան Տիրոջ ուղղուած
Եւ երախտի՛ք որ անօթս յանկարծ դառնայ
Լոյսի, յոյսի ու հաւատքի սիրոյ խորան...
Տէ՛ր, կ'աղաչեմ, զիս արժանի ըրէ Լոյսիդ,
Բարեբանեմ Քեզ յաւիտեան ու սրտալիր,
Ձքոյս ի քոյոց Քեզ մատուցեմ երախտագին...
Ծնորհէ ազգիս ու երկրիս կեա՛նք խաղաղաւէտ,
Լոյսիդ մատչին, Լոյսով օծուին այժմ ու յաւէտ,
Օրհնէ զանոնք բարիքներով երկնապարգեւ
Ու պահպանէ զանոնք բոլոր չարիքներէն:
Ծատ ենք խոցուեր ու տանջուեր դար ու դարեր,
Մեղանչեր ենք, դաս չենք քաղեր սխալներէն,
Յանուն քաջաց սուրբ արիւնին, ներէ մեզ, Տէ՛ր,
Ու ամրացուր մեր հաւատքը, սէրը առ Քեզ:
15/3/2023

.....

Ո՞Վ
Եւ ո՞վ տեսաւ տառապանքդ,
Լուռ ցաւերդ, տագնապներդ,
Մարդիկ տեսան լոյս ժպիտդ,
Ո՞վ իմանար թաքուն վէրքդ...

Եւ այրեցայ ներքին կրակով,
Մղկտանքով, մորմոքներով,
Անաւարտ իմ բիւր տենչերով,
Երա՛զ մնացած երազանքով:

Օ, երանի՛ տուին, անցան
Ծանծաղամիտ շատ-շատերը,
Որոնց երբե՛ք հասու չեղաւ
Ներքին մարդու տուայտանքը:

Աստուած միայն տեսա՛ւ, չափե՛ց
Անքննելին լուռ ու անտես,
Օծեց հոգիս բառերով պերճ,
Որ թեթեւնամ մրմուռներէս...

Եւ օրհնեց զիս, նուաստ անձս
Արարումովն իմ հոգեթով,
Ընդարձակեց ներաշխարհս
Արարչական բառ ու բանով...
11/3/2023
.....

ԱՊՐԻԼԵԱՆ
Գարո՛ւն էր չքնաղ, կապո՛յտ երկինքով արեւ ոսկեշո՛ղ,
Բայց յանկարծօրէն երկինքը մթնեց բիւր ամպերով գորշ...

Ծի՛լ ու բողբո՛ջ էր հանդ ու արտերուն, ծաղիկնե՛ր գունեղ,
Որոնց հարուածեց կարկուտի տարափն որ տեղաց մէկէն...

Հարս ու աղջիկներ պար էին բռնած սիրո՛վ արբեցած,
Եաթաղանը սեւ արեան մէջ խեղդեց պարը լուսավա՛ռ...

Ու ի՞նչ Ապրիլ էր, որ կեանքի հրաշքը կոխկռտեց անգութ,
Քանդեց օճախներ, բնօրրանը հին, մեծ Տունը հայուն...

Ու թափառական, փոշի ազգ դարձած ցեղ մը հնամեայ
Տէր Զօրի հրաշէկ ու բիրտ աւազին լոկ բաժին դարձաւ...

Դիակներ անթիւ ու անգերեզման ցարդ լուռ բողոք են
Անխիղճ մարդկութեան սուտ ու սրբապիղծ արդարութեան դէմ...

Վերյառնեց դարձեալ ցեղասպանեալ ազգն իմ հրաշափա՛ռ,

Ոգիով Հայկեան ելաւ, կանգնեցաւ, «Ո՛չ» ըսաւ մահուան...

Ու պիտ' պայքարի թէկուզ բուռ մը հայ մնայ աշխարհիս,
Արդարութիւնը՝ հիւանդկախ հիմա, պիտի չմեռնի:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՌՈՒԶԱՆ ԱՍԱՏՐԵԱՆ

ԱՍՏԾՈՎ ԲԱՑՈՒՈՂ <<ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍԸ>> ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ...



Գիրքը գրողի հոգեւոր զաւակն է: Եթէ ուզում ես ճանաչել գրողին սրտի զարկերով կարդ ա՛ նրա տողերը, որովհետեւ դու նոր աշխարհ ես յայտնաբերում, որը որքան նման է գոյութիւն ունեցող աշխարհին նոյնքան, տարբեր է իր խորքային գանձերով և քեզանից է կախուած, թէ այդ պեղումներից ինչ նիւթ ես յայտնաբերելու, որպէս հումք՝ ներկայ ու գալիք սերնդի ազգային հոգեւոր նոր երթի կայունութեան ճանապարհին:

Երան Կերթմենեան-
Գույումճեանի << Ծիրանի Լոյս.. ստեղծագործութիւնների

ստուարածաւալ ժողովածուն գիրք է ետեղեռնական ժամանակների հայի անհաշտ լռութեան մասին՝ յար և նման իր արմատներից կտրուած, գաղթ ու եղեռն ապրած, թուրքական
սրի շեղբից մազապուրծ մեր միլիոնաւոր հայրենակիցների ճակատագրին,
ովքեր հողմի թեւերով, թէեւ անտէրութեան մատնուած, սակայն որպէս բնատուր բեղու ն սերմեր՝ տարածուեցին Երկիր մոլորակի տարբեր տարածքներում: Մեծերը որքան կարող էին ծովերն այն կողմ գնացին, որ մոռանան սրազարկ եղած և ջրհորներ նետուած հարազատների ճիչերը, աւաղ, այդ ճիչերն այդպէս
էլ մնացին նրանց արեան մէջ և շարունակում են ապրել նոր ժամանակների գոյներով
...իսկ հազարաւոր որբեր բաժանուեցին մարդկութեան խղճի
դաշտերին ու նրանցից շատերը հետագայում այդպէս էլ չիմացան, որ
օտար երկրներում Ջոնը, Դեվիդը, Ալին ու Անդրեյը իրենց երակներում կրում են՝
Վանի, Բուլանխի, Սասունի ու Մուշի, Ալաշկերտի ու Զեյթունի,
Կիլիկիայի և այլ հայկական կորսուած հողերի արիւնն ու
Գենը...քանզի նրանց մանկական հոգուց ջնջել էին հայոց լեզուն ու հայի էութիւնը:

<< Ծիրանի լոյս>> գրքով ես կրկին յայտնուեցի ազգային ցաւի հնձանում, որովհետև 44 օրեայ պատերազմը, Եռաբլուրը, Արցախի կորուստն ու 21-
րդ դարի նոր արտագաղթը՝ դեռ թաց ու արդիական է, մէկ դար յետոյ էլ և նոյն ձեռագրով փոթորկելով մեր էութիւնը՝ և երկու դարերի ցաւը

մէկտեղելով, որպէս հայի չկայացած ճակատագրի շարունակութիւն: Ահա այս թեմաների շուրջ են բանաստեղծուհի, հրապարակախօս, ,<<Ազատ խօսք>> թերթի խմբագիր Երան Կերթմենեան – Գույումճեանի ստեղծագործութիւնների նոր ժողովածուի մէջ ընդգրկուած նիւթերը :

Գիրքը բաղկացած է չորս բաժնից: Ընդգրկուած են՝ հեղինակի յուշագրությունները, բանախօսութիւններն ու խօսքերը, հրապարակախօսութիւններն և բանաստեղծութիւնները: Գիրքն սկսւում է հետեւեալ տողերով՝

<<ՁՕՆ

Գիրքս կը
ձօնեմ բոլոր այն Հայկազուններուն, որոնք զէն ի ձեռին քաջաբար կռուեցան ի պաշտպանութիւն
հայրենեաց սուրբ հողին եւ բարձր պահեցին
ազգային մեր արժանապատուութիւնը:>>

-2- Յուշագրութիւնները և անցեալ են և ներկայ Երան գրողի, մտաւորականի, ազգային գործչի, փիլիսոփայի, հասարակական գործչի, Հայրենիքից դուրս ապրող, սակայն ամէն վայրկյան Հայրենիքի տրոփիւններով իր սրտի զարկերը կարգաւորող նուիրեալ հայուհու համար, ես կ'ասեի՝ աւելին, քան Հայաստանում ապրող ներկաներից շատերի…

Գրքի հենց սկզբում կարեւոր մի հարց է նա առաջադրում, որպէս ազգային հոգեբանութիւն ձեւաւորելու
մշտարթուն պահանջ՝<<Ով ես?, ուրկէ? կուգաս և ուր? Կերթաս…>>:
Իւրաքնչիւր հայ, ելնելով անցեալ ու ներկայ իր պատմութիւնից երբեք մոռացութեան չպէտք է մատնի իր գոյութեան ճանապարհները, որովհետեւ երբ ազգը թշնամի ունի , նա մոռացութեան հիւանդութեամբ չպէտք է տառապի:
Երանի նախնիները Ադանայից են, յիշում? եք 1909թ. Ադանայում
երիտթուրքերի կողմից կազմակերպած 30 հազար հայերի
կոտորածը…Թուրքը՝ թուրք է մնում, ինչպէ՞ս կարելի է մոռանալ…
յետոյ՝ Հաճն, ապա՝ Բեյրութ և կանգառ՝
Կիպրոսում: Աշխարհով մէկ տարածուած հայերիս անկանխատեսելի ու չծրագրաւորուած դեգերումների քարտէզ, որը շարունակւում է մինչեւ օրս, քանզի ամէն
տեղ հայն իր կորցրած, իրենից խլուած ու կողոպտուած Հայրենիքն է որոնում… Այս հետագծի վրայ գրողը իր հետ
վերակենդանացրել է իր յուշերում անշշուկ ապրող ներկաներին, ովքեր խոր հետք թողնելով զգայուն ու ճակատագրով բանաստեղծ ծնուած աղջնակի կեանքում՝
պարարտ հող էին նախապատրաստում ապագայ հասուն գրողի համար: Բանաստեղ

ծուհու մնայուն ու տաղանդաւոր ուսուցչուհին նրա մայրն է եղել,
որին բազմաթիւ տողեր է ձօնել ու դարձեալ կարօտը անբաւ է մնացել:
Մայրական կարօտն անբաւ է անշուշտ…

Նրա հերոսները՝ իր կողմից շատ սիրուած սիրելի Նենեն,, Հայկանուշ մաման,
Նշան էֆենտին, սակաւախօս Պերթան և միւսները Երան
արձակագրի ու բանաստեղծի կեանքի այն գոյներն էին, ովքեր գեղեցկացնում
էին շրջապատող աշխարհը,այն լցնելով
բարութեան, ազնուութեան, հայրենասիրութեան երանգներով, որպէս ապրելու խորհրդա
նիշ, հիմք հանդիսանալով գրողի դժուար ճանապարհի ընտրութեանը:

Այդ մարդիկ հայրենիք կորցրած և իրենց ինքնութիւնից վտարանդի՝ աւելի շատ իրենց ներսի հետ էին հաղորդակցւում, քան դրսի
աշխարհի, որովհետեւ այդ աշխարհը իրենցից կողոպտել էր ամենաթանկը՝ իրենց
բնօրրանն ու հարազատներին… <<Օտարութեան համը կարող է միայն
օտարութեան մէջ ապրողը զգալ>>- գրում է հեղինակը և
աւելացնում. <<Մեր երկրագնդի վրայ սահմանաւոր մի կէտ կայ,մի
կտոր հող, որից առնուած է մեր կենդանի կաւը, որին
միայն հարազատ է բնիկ մեր մարմինն ու ոգին-առաւելապէս ոգին>>- շարունակում
է Երան Գույումճեանը:
Ժամանակը ,,իրենով զուլալելու>> խնդիր ունի Բանաստեղծը, հայ բանաստեղծը, ում
զարկերակը տրոփում
է իր ժողովրդի ցաւի ցնցումներից, նա չի կարող բաւարարուել միայն
բանաստեղծական տողերով, նրա գրիչը որպէս
գաղափարախօսութեան առաջնագծի զինուորի, ամէնուրեք դեգերում
է իր ճշմարիտ խօսքի որոնումների հաւատով, նրա սիրտը հայրենիքի հայելին պիտի
լինի: Երանը մէկն է իր ժողովրդի այն նուիրեալ զաւակներից,
ում գրիչը նոյնպէս թաթախուած է իր ժողովրդի արեան մէջ: Այդ մասին
են վկայում գրքում տեղ գտած նրա

-3-

երեք տասնեակի հասնող հրապարակագրութիւններն ու գրախօսութիւնները:Այդ թւում-
<< Աւարայրէն Արցախ, իսկ հիմա?, Հայրենիքը կը սկսի
ընտանիքեն, Արտագաղթը Համազգային ողբերգութիւն է …,Ճանաչել զիմաստութիւն եւ
զխրատ… Մենք հայերէնով ենք հայ… Հայ մօրմեն կը սկսին հայ ընտանիքն ու ազգը,
Մեր առջեւ նոր Սարդարապատ է…. Եւ այսպէս՝ բազմաթիւ խօսուն վերնագրերով ու
բովանդակութեամբ

ծաւալուն նիւթեր տեղ են գտել հեղինակի ժողովածուում, որոնք
լայն արձագանգ ստանալով ընթերցողների շրջանում, վկայում
են իր ազգի ներկայ և ապագայ տագնապներով ապրող ու հայրենիքից հեռու
նոր կորստեան գուժերով մորմոքուող բանաստեղծուհու նկարագրի մասին:

Որքան խոհական, փիլիսոփայական, այնքան պատկերային մտածողութիւն ունի Երան Գույումճեանի պոեզիան:<< Ողձանք-Աղոթք>> բանաստեղծութեան մէջ նա համոզուած է, որ <<ազգը կը գտնէ Արարչագործ պատկերը իր սկզբնական…>>, մէկ այլ՝ <<Ես ինձ հետ>> Բանաս տեղծութեան մէջ պատգամում է՝<<Թէ հողմերը, փոթորիկը քեզ հոս ու հոն տարուբերեն, Կառչիր կամքիդ հզօր կայմին, քալէ ճամբէդ միշտ անվեհեր…>>: Յոյսն ու լաւատեսութիւնը միշտ պէտք է լինի իր ժողովրդի բանաստեղծի շուրթերին, որը և նրա ուղեկիցն է պոետական որոնումների ճանապարհներին: Բանաստեղծուհու համար՝ << Աշխարհը հեքիաթազուրկ քարէ խիղճ է,Այբուբենի մէկ տառը հայի հոգու կանչ ու ձայն և Արարչական լոյսի կայծ…>>: Նա ,,Հայ գրերը ցորենի հատիկի նման հաւաքում է, հոգեւոր հաց թխելու համար…>> Գերազանց է:Խօսքս աւարտում եմ իր իսկ տողերով՝-Եղիցի լոյս, թող ծագի նոր արշալոյսին… Թող ծագի և բարի ծնունդ ու ընթացք <<Ծիրանի լոյսին>>…ու Հայոց Ազգին:

25.03.2024թ.

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ ՍՐՏԻ ԽՕՍՔԸ «ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ» ՀԱՏՈՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍԻՆ

Շատ սիրելի հայրենակիցներ,

Որպէս սփիւռքահայ գրող, դժուար է դիմանալ այսքան ջերմութեան, սիրառատ արտայայտութիւններուն, սրտայոյզ խօսքերուն եւ ի մասնաւորի այս ոգեղէն եւ լուսեղէն մթնոլորտին, զոր կարելի է գտնել միայն ու միայն Մայր հայրենիքէն ներս:

Պահեր կան մեր կեանքին մէջ, սիրելիներ, խի՛տ ու խո՛ր պահեր, որոնք կարծէք մեր ամբողջ կեանքը կ'իմաստաւորեն ու կ'արժեւորեն: Այդպիսին է ինծի համար այս պահը, հայրենի հողին վրայ, մեծ բանաստեղծ Աւետիք Իսահակեանի անուան գրադարանի այս սրահին մէջ տեղի ունեցող ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ գիրքիս շնորհանդէսը ի ներկայութեան ձեզ, սիրելիներ: Շնորհակալ եմ բոլորիդ գիրքիս եւ նուաստիս ընծայած ձեր սիրաջերմ վերաբերմունքին համար, ինչ որ ցոյց կու տայ ձեր յարգանքը, սէրն ու հաւատքը հայ գիրին ու հայ գրողին հանդէպ, ի մասնաւորի սփիւռքահայ գրողին հանդէպ, որ կը ստեղծագործէ թիավարելով մայրենի լեզուի նահանջի հզօր հոսանքն ի վեր եւ կը տքնի վառ պահել Մեսրոպեան ջահը ամէնէն տարականոն պայմաններու մէջ: Երախտապարտ եմ Գրադարանի տնօրէնութեան, Շնորհանդէսին մասնակից խօսք առնողներուն, սիրելի գրողներ եւ հրապարակախօսներ՝ Տիկ. Ռուզան Ասատրեանին, Տիկ. Անոյշ Վարդանեանին, Սիլվա Կապուտիկեանի անուան գրադարանի տնօրէն Տիկ.Արմէնուհի Տեմիրճեանին, շնորհալի ասմունքող եւ հանդիսավար Տիկ. Գայիանէ Սամուէլեանին, շնորհանդէսը

ծաղկեցնող երգիչ Արսէն Համբարեանի, երաժիշտ Մանուկ Յարութիւնեանին եւ վերջապէս ու մասնաւորապէս անխոնջ խմբագիր, բանասէր-պատմաբան Պրն.Գէորգ Եազըճեանին, իրեն օգնական ու գործակից Օրդ.. Լիւսի Տէօքմէճեանին իրենց տարած բծախնդիր եւ խղճամիտ աշխատանքին համար:

Վաղուց է ըսուած. «Ի սկզբանէ էր բանն», այսինքն բառը, խօսքը...Կը հաւատամ որ ԲԱՌԸ արարչական մեծ ոյժ ունի: Ան ԵՂԻՑԻ ԼՈՅՍ է, որուն նշոյլ ճառագայթն անգամ կրնայ փարատել խաւարը չարածին, կամարել հոգիները իրար եւ համերաշխութեան ծիածան դառնալ սիրտէ սիրտ եւ հոգիէ հոգի: Ճշմարիտ գրականութեան մէջ, բառը, գիրով արտայայտուած, տեսակ մը զրոյց է սեփական հոգիին հետ, ընթերցողին հետ, մեր կողքի մարդուն ու մեր հայրենակիցին հետ, հաղորդակցութիւն է բնութեան, ապրելու խորհուրդին, տիեզերքին եւ Աստուծոյ հետ:

Կը գրես եւ կը լիցքաթափուիս, սիրտդ կը պարպես ու կը թեթեւնաս, միտքերդ կը բաժնես այլոց հետ, կը հարստանաս ներքնապէս ոչ միայն տալով ինքնամատոյց, այլ՝ գրելու ընթացքին, նոր միտքերու, նոր գաղափարներու ծագումով: Կը գրես եւ աշխարհդ կ'ընդարձակի, կը ծաւալի, կը խորանայ...աւելի լաւ կը ճանչնաս դուն քեզ, կը յստակես գաղափարներդ, զգացումներդ, յոյզերդ, մտորումներդ: ԳՐԵԼԸ ԿԵԱՆՔԸ ԽՈՐԱՊՐԻԼ Է

Իսկ հայ գրականութեան, հայ բառ ու բանի մէն մի բառը հաղորդակցութիւն է նաեւ ու մասնաւորաբար մեր խոր արմատներուն հետ, հազարամեակներու մեր պատմութեան հետ, հայրենեաց հողին, ՀԱՅ ԸԼԼԱԼՈՒ խորին խորհուրդին հետ: Ան արեան կանչ է ու ցեղի ձայն: Դարերն ու սերունդները իրարու կամարող ոգեղէն ծիածան է ան:

Ներքին այս խորունկ մղումով գրուած է ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ գիրքս իր երեք բաժիններով՝ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ, ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ եւ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ:

ՅՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ էջերուն մէջ, ես վերապրեցայ եւ փորձեցի բառերով վերստեղծել հօրենական օճախիս անսակարկ ու անկաշառ սիրոյ, բարութեան ու խղճի ցոլքը, անմիջական շրջապատիս անապական մարդկայնութիւնը, տոկալու եւ տեւելու անկոտրում կորովը, դպրոցական կեանքիս լուսատու փարոսներու նուիրումը, հայակերտումի եւ հայապահպանման ոգին, Եղեռնի դժոխքէն անցած մարդոց պայքարի ոգին ու անտեղիտալի կամքի ոյժը, արժանապատիւ ապրելու անխոնջ ճիգը...: Փորձեցի ներկայացնել չքնաղ կղզին Կիպրեայ՝ իր բռնագրաւեալ Մակարայ վանքով, իր լուսոյ տաճար Մելգոնեանով, որ փոքրիկ Հայաստան մը դարձաւ հայրենատենչ սրտիս: Կղզին՝ իր վէրքերով ու երգերով...Եւ միշտ ու միշտ, տողերուս մէջ ցոլաց հայրենիքը, բռնախլուածն ու ներկան, որպէս հողեղէն ու ոգեղէն ներկայութիւն, տարագիր մարդու կարօտաբաղձ ապրումներով սիրահեւ...

ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ էջերուս մէջ, ես փորձեցի անաչառ եւ անկաշառ միտքով ներկայացնել հայ մարդու յոյզերն ու խռովքները, ազգային մտահոգութիւններն ու իղձերը, անոր համահայկական տեսլականը, ոգին, ազգային հոգեմտաւոր, կրթական-մշակութային արժեհամակարգի կենսական կարեւորութիւնը որպէս հիմքերու հիմքը մեր ազգային պետականութեան, ամբողջական հայութեան եւ ամբողջական Հայաստանի համազգային գաղափարախօսութիւնը, համայն հայութեան կազմակերպուած, համակարգուած ներոյժի

կոթողումին անհրաժեշտութիւնը, մեր հողային Դատի պահանջատիրութիւնը եւ յարակից հիմնախնդիրները:

Ինչ կը վերաբերի ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ բաժինի տաղերուս, անոնք սրտիս խորէն բարձրացող աղօթք են ամենալայն իմաստով, խորագոյն ես-իս հետ մտերմիկ անկեղծ զրոյց եւ խղճի խոստովանանք: Ներշնչման աղբիւրս եղած են մարդն ու տիեզերքը համակ, բայց մանաւանդ հայրենեաց կարօտը, հայոց լեզուի խորունկ սէրս, ազգիս յոյզերն ու տագնապները, տարագիր մարդու տուայտանքներս, անարդարութեանց ու չարիքի դէմ ըմբոստութիւնս սրբազան, նոր արշալոյսներու տեսլականս...: Այդ տաղերը գեղեցիկի, բարիի ցոլք են, սիրոյ ու կարօտի թրթիռ, հոգիի ճախրանք, ճշմարիտին ու արդարին աղաղակը, մարդ մնալու կոչ մը, մարդ որ վերագտնէ իր Աստուածակերպ պատկերը ներկայ հոգեզուրկ եւ վաշխառու աշխարհիս քաոսին մէջ, ուր անյագուրդ նիւթապաշտութիւնն ու շահամոլութիւնը արթնցուցած են գազանը մարդուն մէջ... Քաոս՝ ուր ոգիի սովը դարձեր է մարդուն անմարդկայնացման, պատերազմներու արհաւիրք, զիրար ոչնչացնելու վայրենի մոլուցք:

Վահան Թէքէեան մեծ բանաստեղծը պիտի աւաղէր. «Բանաստեղծութիւնը ի՞նչ ընել, բանաստեղծութիւնը կ'ուտուի՞»: Բայց բանաստեղծութիւնը, ինչպէս եւ գրականութիւնը, ընդհանրապէս, նոյնքան ԷԱԿԱՆ են ինչպէս հացն ու ջուրը, ՈԳԻԻ ՍՈՎԷՆ չտառապելու համար..: Արդարեւ, «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ...»:

Աւելին: Օտար երկինքներու տակ ապրող հայ տարագիր մարդուն համար ի մասնաւորի, մեր Մեծասքանչի մէն մի բառը հոգիի հաց է ու մանանա, հոգիի սնունդ է, առանց որուն կը խամրի ու կը մաշի հայ հոգին: Հայոց լեզուի մէն մի բառը ոգեղէն հայրենիք է, սիրելի հարենակիցներ, իսկ առանց ոգեղէն հայրենիքի, նոյնիսկ ֆիզիքական հայրենիքը պիտի կորսնցնէր իր բուն արժէքն ու իմաստը:

Կը հաւատամ որ իւրաքանչիւր հայ գիրք որ կ'ընծայուի լոյսին, նշոյլ մը ճառագայթ է ճշմարտութեան, բարիին, գեղեցիկին, չարին դէմ տարուած յաղթանակ է, խղճի արթնացման կոչ է, ազգային ինքնաճանաչման, ազգային ինքնագիտակցութեան, ազգային զգօնութեան հրաւէր է ան, մէկ խօսքով, ազգային-հոգեւոր ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԶԷՆՔ Է ՀԱՅ ԳԻՐՔԸ: ՈԳԻԻ ՍՊԱՌԱԶԻՆՈՒՄ է ան: Պիտի աւելցընեմ, որ այս պարագային, արեւմտահայերէնով գրուած գիրքիս պարագային, ան նաեւ ճաշակ մըն է արեւմտահայ բառ ու բանին, որ անբաժանելի մասն է հայոց լեզուի գանձարանին: Ազգի աւելի քան կէսը հաշուող տարագիր արեւմտահայութեան արիւնն է արեւմտահայերէնը, անոր ոգին ու ինքնութիւնը: Բռնախլուած Արեւմտահայաստանի անկողոպտելի շունչն է ան ու ոգին:

Այս խորապրումով ու գիտակցութեամբ գրած եմ ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍը, զոր այսօր կը յանձնեմ ընթերցողիս դատին, ձեր դատին, մաղթելով որ ան արձագանգ գտնէ ձեր ալ հոգիներէն ներս, զանոնք վարակէ այն յոյզ-ապրումներով ու միտք-գաղափարներով, որոնք ներշնչած են զիս...դառնայ ձեզի՝ հոգիի թրթիռ ու մտքի գրգիռ:

Գիրքիս եւ խոնարհ անձիս նկատմամբ ցուցաբերուած այս ջերմ ընդունելութիւնը կը յուզէ, կը թեւաւորէ զիս, այլեւ կը պարտաւորեցնէ շարունակելու գրել, արարել, ներքին ձայնիս

ունկնդիր եւ հաւատարիմ Մեսրոպեան դարաւոր ու փառաւոր աւանդին: Ի խորոց սրտի շնորհակալ եմ եւ երախտապարտ բոլորիդ անուն առ անուն, մաղթելով որ ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ գիրքս կը գտնէ դէպի ձեր սիրտերը տանող գաղտնի ճամբան: Աղօթքս է ջերմեռանդ՝ որ մեր երկիրը ծաղկի ու բարգաւաճի խաղաղ երկնքի տակ եւ ի կատար ածէ դարերէն եկող եւ դէպի գալիք դարերը գացող իր լուսապաշտ եւ լուսարար առաքելութիւնը՝ ԱԶԳ, ՀԱՅՐԵՆԻՔ եւ ՄՇԱԿՈՅԹ հզօր միասնութեամբ ամրապինդ:

ՅԱՐԳԱՆՔՍ ԵԻ ԽՈՆԱՐՀՈՒՄՍ ԲՈԼՈՐԻԴ, ՍԻՐԵԼԻՆԵՐ:

ԽԱՉՈՒՍԵԱԼԸ

ՎԻՐՏՈՒԱԼ ԶՐՈՅՑ ՎԱՂԱՄԵՌ ԳԱԳԻԿ ԳԻՆՈՍԵԱՆԻ ՀԵՏ

1990-ականների Արցախեան առաջին պատերազմին էլ դու Արցախում էիր, Գագիկ, այնտեղ էիր Վազգէն Սարգսեանի կոչով հաւաքուած մահապարտների շարքում: Գիւղ, գիւղի յետեւից ազատագրում էիք Արցախը:

Յետոյ դու հեղինակեցիր «Ողջոյն, տղերք» գիրքդ, որ զրոյց էր քո մարտական ընկերների հետ, փառաբանումն էր նրանց ու մեծարումը մասնաւորապէս քո փառապանծ հրամանատար Լեոնիդ Ազգալդեանին: Արցախեան պատերազմական օրերի նկարագրութիւն էր՝ գրուած զոհուած զինակիցներիդ յիշատակի խնկարկումով, ցաւով, կսկիծով: Քո այդ գիրքը նուիրել էիր «*Զանոնց, ովքեր իջան գերեզման մի մի լուսավառ հաւատքով, որ իրենց ահիւնէն շանթանման նոր հերոսներ պիտի ծնեն*»:

Դու գրում էիր այն տղաների մասին, ովքեր «***երդուեցին Եռաբլուրում... Նրանք... վահանի վրայ վերադարձան Եռաբլուր՝ յաղթանակն իրենց կեանքի գնով բաշխելով մեզ... Ապրէք, տղերք... եւ ձեր ուխտուածութեամբ ապրեց հայրենիքը: Դուք հեգնեցիք մահը՝ յանուն բիւր կենաց:Անգիտացաք մահու եւ կենաց սահմանը՝ Ձեր կեանքի գնով սահման գծելով մեր եւ Ձեր միջեւ: մենք այն Եռաբլուր կոչեցինք... Գալիս ենք Եռաբլուր եւ ասում՝ Ողջոյն, տղերք: Եռաբլուրը միակ տեղն է, ուր վայել է գլուխ խոնարհել...***»:

Անագորոյն ճակատագիր է, Գագիկ, որ դու ո՛չ թէ հերթական անգամ գնացիր Եռաբլուր՝ «Ողջո՛յն» ասելու, այլ, ցաւօք, քեզ վահանի վրայ տարանք, որ խառնուես հերոս նահատակների երամին:

Քո հեղինական «Ողջոյն, տղերք» գիրքդ մի տեսակ նաեւ տարեգրութիւնն էր արցախեան առաջին պատերազմի, եւ քո զրոյցներն այդ գրքում հայրենիքի զգացողութեան իւրօրինակ յորդոր էր ու ոգեկոչում՝

«***Օրհնեալ լինեն այն բոլոր հայ տղանմարդիկ, ովքեր կեանքի սանդղակի որ աստիճանին էլ կանգնած լինեն, չեն մոռանում, որ իրենց առաջին առաքելութիւնը հայկական հողը, հայրենիքը, ծննդավայրը պահպանելն է:***

Աստուած եւ Նժդեհի ոգին ձեզ զօրավիգ»:

Դու ամենուր պահանջուած էիր՝ քո ստեղծած ու փայփայած «Կարին» պարի անսամբլի փորձերը, հանդիպումներ տարբեր դպրոցներում, ուր ջանացիր ու կարողացար ազգային պարը դարձնել պարտադիր ուսուցում: Յետոյ «Նարեկացի» մշակութային

կենտրոն, ուր հաւաքւում էին մշակոյթին նուիրեալ երիտասարդներ ու աղջիկներ, նաեւ տարեցներ, ովքեր քո գտած, մշակած պարերն էին իւրացնում ու հաճոյքով պարում:

«Գտած» ասացի յիշեմ քո թափառումները Հայաստանի, Վրաստանի հայաբնակ տարբեր գիւղեր, ուր ապրում են Կարինից գաղթածների ժառանգները: Դու հանդիպում էիր տարեցների հետ, խնդրում յիշել եւ ցուցադրել Կարնոյ պարեր: Քո այդ ուղեւորութիւնների արդիւնքում էլ գրանցեցիր, ձեւաւորեցիր Կարնոյ 39 պար:

Հիմա չասե՞մ, թէ դու նոյնն էիր անում, ինչ արել է Կոմիտասը, երբ շինականներին հանդիպելով՝ հաւաքում էր հայկական հին երգեր:

Քո պարի սկիզբը՝ Հայրիկ Մուրադեանով:

Հայրիկ Մուրադեանի մասին դու ակնածանքով ու մի առանձնակի վերաբերմունքով ես խօսում: Պարի քո սկիզբը դու համարում ես «Վան» անսամբլում քո պարելը:

Քո սիրելի Հայրիկ Մուրադեանի վախճանից յետոյ հայ ազգային երգ տարածող Առաքեալին նուիրուած յիշատակի երեկոյ, մի ճոխ համերգ էիր կազմակերպել ֆիլհարմոնիայի մեծ դահլիճում: Ասում էիր. «***Այս երեկոն խորհուրդ է, խօսք է մարդկանց, որպէսզի բոլորս սթափուենք ու մտածենք, թէ Կոմիտասը, Հայրիկը, իրենց նման մեծ անհատները գործել ու իրենց գործունէութեամբ մեզ պատգամել են, որ ազգային տեսակը ձեւաւորւում է մշակոյթի միջոցով***»:

Հիմա սխալուած կը լինե՞մ, արդեօք, եթէ քո նուիրումը զուգահեռեմ Հայրիկի նուիրումին ու երկուսիդ իրար կողքի տեսնեմ, ինչպէս դու Հայրիկին ու Կոմիտասին էիր իրար կողքի տեսնում:

«Երբ իմ պարը մարմնեղ աղօթք է դառնում,
եւ ես ձուլւում եմ պարի հետ,
արդէն ոգեղէն տրամադրութեան մէջ եմ»:

ԳԱԳԻԿ

Դու առանձնայատուկ մարդ էիր, առանձնայատուկ ընկեր, առանձնայատուկ հայ, քո ասածի հանգոյն՝ Հայու լաւագոյն տեսակ: Քեզ համար բնաւ կարեւոր չէր, ինչ պայմաններում են կայանում քո ծանօթութիւնները, քեզ համար կարեւոր էր Մարդը, ում հետ պիտի շփուէիր, մտքեր փոխանակէիր: Քո միջավայրը դո՛ւ էիր ստեղծում: Ուր էլ գնայիր, ինչ սենեակ էլ մտնէիր՝ այնտեղ արդէն լեցուն էր քո ներկայութեամբ, քո գոյութեամբ:

Իսկական մարաթոնի վազքի մէջ ես եղել ամէն օր:

Դու քո մարաթոնեան վազքի մէջ փորձեցիր մի օր ազատ պահել քեզ՝ դա քո ծննդեան 50-ամեակին էր: Բայց դա ինչ հանգիստ – քո ծննդեան օրը դու ընկերներիդ հետ՝ չորսով, գնացիք Կապան եւ բարձրացաք Խուստուփի գագաթ: Ասել է՝ գնում էիր մեծ հայի՝ Նժդեհի ներկայությամբ տօնելու քո ծննդեան օրը:

«*Ես մի հզօր ուսուցիչ ունեմ՝ Գարեգին Նժդեհը, ով 700 հոգով սովետական 30 հազար կանոնաւոր բանակ էր կոտորում: Այլ հրաման չունենք, բացի զօրեղ, պինդ, հաստատակամ ու վճռական լինելուց, սեփական երկրի, սեփական ազգի ճակատագրին տէր կանգնելու կամք ունենալուց*»: ԳԱԳԻԿ

Քո Կարինը

Ապուպապերիդ Կարին դու մի քանի անգամ գնացիր: «***Արմատներս եմ զօրացնում***».- ասում էիր: Յիշում էիր գաղթի ճամբէքով անցած պապիդ խօսքերը. «***Մանչս, մեր երկիր սուրբ էր, ու ամէն քար ու թփէն խնկի հոտ կուգար: Մենք թողինք մեր խնկահոտ երկիր շուն թուրքին ու փախանք... թէ կուզենք, որ մեր երկրէն էլի խնկի հոտ գայ, ամէն հայի քթի մէջ վառոտի հոտ պիտի լինի***»:

Մի գեղեցիկ առիթ էլ եղաւ, երբ միասին գնացինք: Ի՜նչ յուզմունք էիր ապրում, երբ ամրոց բարձրանալու ճամբին անցնում էինք հայկական հնաբոյր տների մօտով:

«*Ինձ թւում է,*-ասում էիր,- ***հիմա այս տներից մէկից մի տարեց կին դուրս կը գայ՝ Կարնոյ տարազով***»:

…Մենք նստած էինք Կարնոյ բերդի ամենավերին եզրաքարերին, որտեղից ամբողջ Կարինն է երևում:

Ամրոցի բարձունքից մէկ անգամ էլ հայեացք գցեցինք Կարինի (թուրքերն այն անուանում են Էրզրում) համայնապատկերին: Դու ոնց որ թէ չէիր պատրաստւում հեռանալ բերդից. ուզում էիր երկա՞ր մնալ՝ տպաւորուած այդ տեսարանից, ուզում էիր երեւակայօրէն Ախալցխա գաղթածների հին ու հալումաշ եղած տնե՞րը հայեացքով որոնել-գտնել…

Եւ դու սկսեցիր երգել: Նախ ցածրաձայն, երբ նստած էիր, ապա ելար, հասակով մէկ կանգնեցիր պարսպի պատին ու բարձր, շատ բարձր շարունակեցիր երգել: Դա Ջիվանու «Կարնեցու երգը» գործն էր, որ մեզանում շատ քիչ է կատարւում:

– Ախ թէ հիմա խումբս այստեղ լինէր, այս բերդի վրայ մի պար պարէինք:

–Միւս այցելութեանը խմբով կը գաք ու կը պարէք:

Մխիթարու՞մ էի, թէ՞ դա պարզապէս իմ ցանկութիւնն էր, չգիտեմ, բայց պատկերացնում եմ այդ տեսարանը՝ բերդի հարթակում, եկեղեցու հարեւանութեամբ զիլ փչող զուռնայի ձայն, և՝ «Կարնոյ քոչարին»: Հրաշք տեսարան կը լինէր:

<u>Քո պարը</u>

«***Մեր պարը լոկ պար չէ, այլեւ պայքար,***
ոգու սլացք է ու յաղթապար, խորհուրդ է խորին
եւ ճակատագրից հզօր լինելու դաս է ու պատգամ»:

Գագիկ Գինոսեան

Պարը, քո պարը: Արմատները Կարինում ու Կարինի շրջակայ գիւղերում, ճիւղերը՝ քո ծննդավայր Ախալցխայում ու Ախալցխայի շրջանի գիւղերում:

Ի՜նչ ակնածանքով էիր արտայայտւում պարի, քո՛ պարի մասին.

«***Պարը ծնուեց, երբ մարդն առաջին անգամ չկարողացաւ իր ոգեւորութիւնը խօսքի եւ, նոյնիսկ, երգի միջոցով արտայայտել: Պարը աճեց, զօրեղացաւ եւ դարձաւ արուեստների թագը, որովհետեւ միակն էր, որ միաձուլեց մարդկային հոգին ու մարմինը: Պարը մարմնի երգն է եւ նկարչութիւն է մարմնի միջոցով: Պարը մտքի սլացքն է, ոգու կռիւն ու հերոսացումը: Պարը կնոջ հեզ նազանքն է եւ տղամարդու զօրեղ զարկը***»:

Դու մէջբերում էիր Կոմիտասի խօսքերը՝ «***Պարն արտայայտում է իւրաքանչիւր ազգի բնորոշ գծերն ու, մանաւանդ, վարքն ու քաղաքակրթութեան աստիճանը***»:

Բա քո՛ հրաշալի բնորոշումը՝ «***Հայոց ազգային պարը աղօթք է: Երբ պարը աղօթք է դառնում, եւ Խորանի վրայ սկսւում է ազգային Պատարագ, այդ ժամ մարմնի իւրաքանչիւր շարժում վերածւում է հայոց մեռոնով օծուած աղօթամարմնոյ պարի***»:

Քո «Եարխուշտա»-ն զէնքի ընկեր պար է, Ազգային հնագոյն ռազմապար, որի ընթացքում շարժումները շեշտւում են զոյգերի հետ ծափերով, որոնք կարծես թէ, փոխարինում են զէնքերին եւ իւրովի նմանակում դրանց հարուածին ու բախման ձայնին:

Հիմա, այս պահին, երկնային հեռուներից Գէորգ Չաուշի ձայնը լսուեց.

-Միրօ, քո ծիրանափողդ քո մօ՞տդ է: Լաւ, կռուէն առաջ «Եարխուշտա» փչէ:

Դու քո պարը դարձրիր բոլորինը, եւ բոլորը դարձան քո պարի ու արուեստի երկրպագուն: Դու քո ազգային պարը բեմից տարար գիւղեր, տարար քաղաքների հրապարակներ, անգամ բակեր: Ո՛չ թէ ժողովրդին էիր կանչում քո պարը նայելու, այլ քո պարն էիր մօտեցնում ժողովրդին, քո պարի միջոցով մարդկանց մտերմացնում էիր իրար

հետ, քո պարի, քո մշակոյթի, ինքնութեան հետ: Դու քո ազգային պարով հայի Ոգին էիր սերմանում մարդկանց մէջ: Ամէն ուրբաթ օր Երեւանի կասկատի տարածքը վերածեցիր պարահանդէսի հրապարակի, որը վերեւից նայելիս Սարտարապատ էր թւում: Դու դա էլ երազում էիր՝ Երկրորդ Սարդարապատ:

Դու հասար քո բազում ծրագրերից շատ կարեւորի իրականացմանը՝ դպրոցներում ներդնել «Ազգայի պար» առարկան: Յընթացս դու արդէն աւարտական թեզդ էիր գրում՝ «Ինչպէ՞ս սովորեցնել պարը»: Դու հասար այն բանին, որ քո պարախումբն ընդգրկուած սաներից իւրաքանչիւրը կարողանում է դասաւանդել, որովհետեւ դու աւելի շատ փոխանցում ես ինչպէս սովորեցնել պարել, քան թէ ինչպէս պարել: Քսանից աւել խմբերում մօտ 500 մարդ շաբաթը երկու անգամ այցելում է պարի ազգային պարերի դասընթացների:

...Եւ ազգային պարը դարձաւ հազարաւորների ուսանելի ու սիրելի զբաղմունք:

Դու յաճախ էիր այցելում Գաղափարական քո կուռք Գարեգին Նժդեհի շիրիմին:

Շարունակում էիր դասե՞ր առնել հայու լաւագոյն տեսակ այդ փառաւոր զօրավարից, շարունակում էիր շտկե՞լ քո կեցուածքն ու քո դիրքորոշումը նրա պահուածքի, նրա գաղափարների հանգոյն:

«***Գարեգին Նժդեհը***,-ասում էիր դու,- ***Հայոց ռազմի Մարգարէն է, մերօրեայ նոր պայքարի խորհրդանիշը***»:

...Ծանր էր քո ԽԱՉԸ, Գագիկ, բայց դու այն սիրով էիր տանում, տանում էիր՝ հայ մշակոյթը պահպանելու, զարգացնելու, տարածելու Հաւատով: Քո Հաւատը եւ այդ հաւատով քո գործունէութիւնը՝ ինչպէս աղօթք, որ ընդունւում էր, տարածւում էր համայն Հայաստանով, իսկ դպրոցներում դարձել էր ազգային պարուսուցում:

Քո օրերի այդ խիտ ռեժիմի մէջ ինչպէ՞ս պիտի դիմանար քո մի բուռ սիրտը:

Հ. Գ. Անկրկնելի լեզուաբան ՀՐԱՉԵԱՅ ԱՃԱՌԵԱՆԻ մասին խօսելիս յաճախ ասում էին. «Նա մենակ կատարեց ամբողջ լեզուաբանութեան ինստիտուտի գործը»: Ասում էին, եւ ասողներն իրաւացի էին:

ԳԱԳԻԿ ԳԻՆՈՍԵԱՆՆ իր գործունէութեամբ ամբողջ մի մշակոյթի նախարարութեան գործ էր անում: Միայնակ էր անում՝ իր բաժին ծանր խաչը տքնանքով, բայց եւ սիրով ուսած, խաչուսեալի լուսաւոր հաւատով, անհանգիստ ու պրպտուն մաքառումով զարգացնելով ու տարածելով ազգային մշակոյթը, փոշիներից, մոռացումից հանելով հարիւրից աւել ազգային պար: Կոմիտասի նման գիւղե-գիւղ անցնելով, ծերունիներից սովորելով ու տարածելով: Անգամ ուսումնական հաստատութիւններում կարողանալով պարտադիր դաընթացների աստիճանի հասցնել:

Յովհաննէս Պապիկեան
Գրող, հրապարակախօս

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ ԵՒ ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ…

«Բանաստեղծութեան Իշխան» Վահան Թէքէեան գրեթէ մասնակցած է կիրակնօրեայ մեր ընտանեկան բոլոր հաւաքոյթներուն ճաշէն ետք: Ծնողքս երկուքն ալ Թէքէեանի երկրպագուներ… Հայրս ոչ միայն Թէքէեան բանաստեղծը իր գիրքերով ճանչցած՝ այլեւ աշակերտած էր անոր Կիպրոսի Մելգոնեան Վարժարանին մէջ: Թէքէեան առաջնորդած է հայրս դէպի Ռամկավար Ազատական Կուսակցութեան շարքերը: Իսկ մայրս՝ ինչպէս Թէքէեան «Անունդ» բանաստեղծութեան մէջ կ՚ըսէ «Թէեւ վաղուց մտքիս մէջ քեզ ամբողջ գոց գիտեմ ես», այդպէս ալ Թէքէեանի գրեթէ բոլոր բանաստեղծութիւնները գոց գիտէր, եւ մինչեւ իր մահը իննիսուն տարեկան՝ ներշնչուեցաւ ու վաթսուն երկար տարիներ ներշնչեց իր աշակերտ-աշակերտուհիները անոնցմով: Թէքէեանի կողքին՝ Վարուժանով, Սիամանթոյով, Սեւակով,Թումանեանով,Կապուտիկեանով, նաեւ Նարեկացիով ու Շնորհալիով շրջապատուած իր աշխարհը ունէր, կ՚արտասանէր նոյնիսկ կը խօսէր անոնց հետ:

1943ին բանաստեղծը կ՚այցելէ Եափա: Եափայի հայկական գաղութը մեծ խանդավառութեամբ կը դիմաւորէ Բանաստեղծութեան Իշխանին:

Թէքէեան կ՚այցելէ Եափայի Սուրբ Գլխադիր միակ հայկական վարժարանը եւ հետաքրքրուած հօրս աշակերտներով անոնց շարադրութիւնները կ՚ուզէ տեսնել:(հայրս Մելգոնեանի Վարժապետանոցը աւարտելէ ետք կ՚անցնի Լիբանան, եւ քանի մը տարի ուսուցչութիւն ընելէ ետք կը փոխադրուի Եափա, ուր ընտանիքը հաստատուած էր իրմէ առաջ, եւ այնտեղ դարձեալ ուսուցչութիւն կ՚ընէ, անոր զուգահեռ ունենալով իր լուսանկարչական խանութը՝ Studio Venus):

Հայրս իր ուսուցչին կը յանձնէ աշակերտներուն շարադրութիւնները, որոնց մէջէն Թէքէեան կ՚առանձնացնէ Արփինէ Սարգիսեանին շարադրութիւնը, ըսելով. «Այս մէկը խոստմնալից աշակերտուհի մըն է, յատուկ ուշադրութեան արժանի»:

Այդ իրիկուն Եափայի ազգայինները անոնց հետ նաեւ Եղիվարդ բանաստեղծը կը հաւաքուին մեծ հօրս՝ Արշակ Սարգիսեանի (Արշակ աղբար ճանչցուած) տունը, ուր պիտի հիւրընկալուէր մեծ եւ նոյնքան համեստ բանաստեղծը:

Դեռ չհասած զիրենք հիւրընկալող տունը՝ լուրը արդէն հասած էր, թէ Վահան Թէքէեան շատ հաւնած է Հրանդին աշակերտուհիներէն Արփինէ Սարգիսեանին շարադրութիւնը:

Մայրս՝ իր յուշերու տետրակը ձեռին անհամբեր կը սպասէ բանաստեղծին ժամանումին, որ երեք անտիպ բանաստեղծութիւն կը գրէ իր՝ բանաստեղծին բառերով «հրեշտականման աղջնակին» տետրակին մէջ, որուն տխուր աչքերը չեն վրիպիր բանաստեղծին ուշադրութենէն: Մայրս տարի մըն էր, որ կորսցուցած էր 32 ամեայ մօրը եւ այդ կորուստը խլած էր ժպիտը իր մանկական անմեղ, գեղեցիկ դէմքէն: Թէքէեանին ուշադրութիւնը վերջապէս դարձեալ ժպիտ մը կը գծագրէ իր դէմքին:

Մայրս ամբողջ կեանքին ընթացքին ոչ միայն ափսոսաց, այլեւ ցաւ ապրեցաւ թէ ինչպէս 1948ի հրեայ-արաբ պատերազմին երբ կը փախչին Եափայէն Յորդանան՝ այդ տետրակը չէր վերցուցած իր հետ:

Կիրակի օրերը ճաշէն ետք մեր բանաստեղծական երեկոները կը սկսէին: Դարձեալ ու դարձեալ ծնողքիս պատմել կու տայինք իրենց յուշերը: Կը հպարտանայինք, մրցում կ՚ընէինք ով ինչ պիտի արտասանէ: «Անունդ» բանաստեղծութիւնը իմս էր, սրտանց կը նեղուէի երբ ուրիշը արտասանէր: Կը հաւատայի, որ ինծի համար գրուած էր…

Հայրս, որ ջութակ կը նուագէր եւ երաժշտական լաւ ականջ ունէր, մեզի սորվեցուցած էր Թէքէեանի երգի վերածուած բանաստեղծութիւններէն «Ես սիրեցի», «Ինչ որ տուիր» եւ այլ երգեր։ Երգերը կը լրացնէին բանաստեղծական երեկոն։ Եւ հիմա կարգը կու գար դարձեալ հօրս ուսուցիչ Յակոբ Օշականին։
Բաւական ժամանակ ես խորապէս նեղուած էի Օշականէն… Եւ ինչո՞ւ…
Տասներեք տարեկան էի երբ առաջին բանաստեղծութիւնս կարդացի կիրակնօրեայ մեր բանաստեղծութեան երեկոյին, սպասելով ծափողջոյններ եւ արդէն բանաստեղծի յորջորջում, երբ հայրս Օշականէն տողեր կարդաց, որ իմ յիշողութեամբ կը ներկայացնեմ, թէ «Առաջին բանաստեղծութիւնը գրած արդէն իրենք իրենց բանաստեղծ կը կարծեն»։ Շատ ծանր տարի։ Ինչպէս կրնար Օշական այդպիսի բան գրել նոյնիսկ իմ ծնունդէս շատ առաջ եւ թեւերս կոտրել։ Հօրս այդ լաւ դասը ես մի՛շտ յիշեցի եւ գնահատեցի։ Իսկ Օշականը դարձաւ սիրելի։
Յակոբ Օշական նոյնպէս այցելած էր Եաֆայի հայկական վարժարանը եւ իր աշակերտէն՝ հօրմէս պահանջած աշակերտներուն շարադրութիւնները։ Նի՞ւթը… «Մեծ Հայրս»։
Որբերու զաւակները ի՞նչ մեծ հայր պիտի ունենային, որ գրէին այդ մասին։ Իրենց ծնողները հայր-մայր տեսա՞ծ էին, որ իրենք ալ մեծ հօր մասին գրէին։ Բայց ա՛յդ պահանջած էր մեծ ուսուցիչն ու գրաքննադատը։
Եւ շարադրութիւններուն մէջէն դարձեալ կ՝առանձնանայ հատ մը, որուն վրայ Օշական գրած էր. «Այս աղջիկին հոգ տար»։
Եւ այդ աղջիկը դարձեալ Արփինէ Սարգիսեանն էր։
Հայրս չմոռցաւ իր երկու սիրելի ուսուցիչներուն պատգամները եւ ամբողջ կեանքին ընթացքին «Հոգ տարաւ եւ յատուկ ուշադրութեան արժանի դարձուց» ատկէ տասնամեակէ մը աւելի ետք ամուսնանալով իր «հրեշտականման աշակերտուհիին» հետ։
Մարտ ամիսը ուրախ ամիս էր մեզի համար, որովհետեւ հօրս ծննդեան ամիսն է։ Հիմա անոր խառնուած է մօրս մահուան տարեդարձը։ Եւ…
Այդ օրերու «Յիշատակը այս գիշեր զիս լալու չափ կը յուզէ»։
Անուշ Նազգաշեան
Մարտ 2024, Երուսաղէմ

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ

Ազգային պետականաշինութեան համար, չի բաւեր ըլլալ օրինապահ, ժողովրդավար, մարդկային իրաւունքները յարգող...
Ազգային պետականութեան հիմնաքարը ազգային գաղափարն է, ազգային արժեհամակարգը, առանց որոնց պետութիւնը կը դառնայ սոսկ վարչական միաւոր, հայրենիքը կը դառնայ բնակավայր եւ կը ջնջուի տակաւ այն ոգեղէն բովանդակութիւնը որ հողեղէն երկրին կու տայ ոգեղէն տարածք, իմաստ ու խորհուրդ։

.....

Ազգը աւելին է քան պետութիւնը, ազգը հազարամեակներու մեր պատմութիւնն է ու մշակոյթը, անոնց ոգիին կրողը։ Հայրենիքը պարունակն է անոր, ազգին ու անոր մշակոյթին ու պատմութեան։ Պետութիւնը սոսկ միջոց է պահելու ազգն ու հայրենիքը։ Եթէ միջոցը՝

պետութիւնը, դառնայ նպատակ, յայնժամ ազգը կը վերածուի սոսկ բնակչութեան, հայրենիքը՝ բնակավայրի:

.....

Առանց ՀԱՅ ԴՊՐՈՑԻ, Սփիւռքի գաղթօճախները չեն կրնար երկար կեանք ունենալ...Առանց Սփիւռքի հայեցի գոյութեան, հայեցի լինելութեան, տարագիրի իրավիճակի ամբողջական գիտակցութեան եւ յանձնառութեան, հայկական Պահանջատիրութիւնն ալ տակաւ կը մարի: Սա վստահաբար շատ լաւ գիտեն աշխարհակալ ուժերը եւ կ'ոռոճան իրենց ԾՐԱԳԻՐԸ, որուն հաւատարիմ գործադրողները կ'ըլլան ՀԱՅԵՐԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հայ դպրոց փակերով, կամ անոր կարեւորութիւնը նսեմացնելով, անոր հայեցի մթնոլորտը օտարացնելով: ԾԱԽՈՒԱԾ ՀԱՅԸ միշտ ալ եղեր է մեր թիւ մէկ թշնամին, մեր ներքին ցեցը...ԱՐԹՆՆԱԼ ԵՒ ԶԳԱՍՏԱՆԱԼ Է ՊԷՏՔ:

.....

Լռութեան մէջ է գերագոյն խորհուրդը: Լռութեան մէջ կը ծնին մեծ միտքերը, լռութեան մէջ ականջալուր կ'ըլլանք բնութեան մեղեդիին, լռութեան մէջ կը լսենք մարդ էակի տառապանքի, տրտմութեան հառաչները, լռութեան մէջ հաղորդակից կը դառնանք տիեզերական անհունութեան, ներդաշնակութեան, լռութեան մէջ մեզ կ'այցելեն խոհեր, յոյզեր որոնք անպարագիծ են, արարչական: ԼՌՈՒԹԻՒՆԸ ՈՍԿԻ Է, ՄԻՆՉ ԱՂՄՈՒԿԸ՝ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ:

.....

Մեծ բանաստեղծ Վահագն Դաւթեան ունի նման իմաստալից տողեր՝ «Ո՛վ Տէր, օգնիր որ տեսնեմ ա՛յն ինչ չեմ տեսնում»...Խօսքը, անշուշտ, Անիմանալիին ու Անըմբռնելիին մասին չէ միայն, այլեւ այն մասին, որ յաճախ կ'ուզենք տեսնել ցանկալին միայն, կամ կուրցած կ'ըլլանք զանազան նախապաշարումներով եւ այլեւայլ կաղապարներով...Երանի՛ կարենանք տեսնել իրականութիւնները այնպէ՛ս, ինչպէս կան անոնք իրօք, յստակ ու համընդգրկուն, ամբողջական,առանց մանաւանդ ինքնախաբէութեան, առանց պատրանասիրութեան, գիտակից կամ անգիտակից կուրութեան:

.....

Մեծ մատեանը այնքա՛ն պերճախօս է իր խրատներով, յորդորներով, պատուիրաններով, որոնք անհատական թէ հաւաքական կեանքի Ուղեցոյց են անկասկած...Քրիստոսի Աստուծոյ տաճարը՝ լումայափոխներէ, փերեզակներէ եւ զայն սրբապղծողներէ մաքրելու արարքը աւելի քան խօսուն է: Իսկ մեր ՀԱՅՐԵՆԻՔԸ, որպէս մեր ազգի կեցութեան սրբազան վայրը, պիտի մաքրել զայն պղծողներէ, զայն չարաշահողներէ, զայն կեղեքողներէ, որպէսզի ան մնայ եւ յարատեւէ որպէս մեր նուիրական ՀԱՒԱՔԱԿԱՆ ՏՈՒՆԸ, դարերէն եկող եւ դէպի դարերը գացող ա՛յն սրբազան աւանդը, ուր մեր պապերը կը պառկին..«.ո՛ւր կայ հիւլէ մը Հայկէն, փոշի մ'Արամէն, Անանիայէն բիբ մը դէտ, դեռ աստղերու ճաճանչներով թաթաւուն»...Զայն պղծելը ազգային մեծագոյն դաւաճանութիւն է:

.....

Ճշմարտութիւնը բարձրաձայնողը քիչ ընկեր կ'ունենայ, քանզի մարդիկ կը սիրեն խաբուիլ ստրկամտօրէն, քան լսել ճշմարտութիւնը եւ զգաստանալ...Տակաւին ճշմարտութիւնը բարձրաձայնողը ուղղակի թէ անուղղակի ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ կը դնէ իւրաքանչիւրին ուսերուն վրայ՝ խօսելու ճշմարիտը, չծածկելու զայն, ըլլալու շիտակ, շիփ-շիտակ: Կեղծիքը կը դառնայ ԹԱՓԱՆՑԻԿ եւ կը մնայ ԱՄՕԹԱՀԱՐ՝ ՃՇՄԱՐԻՏԸ բարձրաձայնողին դիմաց...Ահա թէ ինչու մեր իմաստուն ժողովուրդը կ'ըսէ իրաւացիօրէն. «Ճշմարտութիւնը խօսողին գլուխը ծակ կ'ըլլայ», կամ «Ճշմարտութիւնը խօսողը եօթը գիւղէն կը վռնտուի»:

.....

Քննադատութիւնը, մանաւանդ ինքնաքննադատութիւնը շատ օգտակար է եւ սխալներու սրբագրման կրնայ առաջնորդել անհատն ու հաւաքականութիւնը: Կրնայ ազդակ դանալ յառաջդիմութեան ու զարգացման: Բայց հայհոյանքը, նախատինքը ներքին մաղձի դրսեւորում է միայն, որ կրնայ թունաւորել նոյնինքն հայհոյողն ու վիրաւորանք հասցնողը: Բոլոր պարագաներուն ՀԱՅՀՈՅԱՆՔԸ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ԲԱՆԱԿԱՆ ՎԷՃԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆՆ Է:

.....

ԱԶԱՏ ՄԻՏՔՆ ու ԱԶԱՏ ԽՕՍՔՆ են եղած կեանքիս ուղին, որմէ ԵՐԲԵ՛Ք չեմ շեղած, Ո՛Չ մէկ պարագային....Գերագոյն նպատակներ՝ ինծի համար, ԱՆՍԱԿԱՐԿԵԼԻ, ինչպէս են կեանքի ամէնէն նուիրական արժէքները...: Մանուկ հասակէս, ճիշդն ու շիտակն եմ ԲԱՐՁՐԱՁԱՅՆԱԾ, երբ շուրջս այնքա՛ն շատ էին սուտասանները, որոնք «նիշ» մը շահելու համար, հազար խարդախութեան կը դիմէին, հազար ու մէկ սուտեր կը յօրինէին..եւ միշտ ու միշտ զօրաւորին կողմը կը պաշտպանէին: Այսպէս, ԲԱՐՁՐԱՃԱԿԱՏ քալած եմ կեանքիս պողոտաներէն, սիրտս ու խիղճս՝ հանգիստ, քանզի անոնց ձայնին եմ եղած ունկնդիր, արհամարհելով «ԳԷՇ» երեւելու սպառնալիքը...: Աւելի լաւ է ԳԷՇ երեւիլ ուրիշին, քան՝ սեփական ներքին ես-ին, որուն հետ պիտի ապրիմ ամբողջ կեանք մը...

.....

ՄԵՐ ՄԱՅՐԵՆԻՆ...ԳԱՆՁԵՐՈՒ ԳԱՆՁ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ...Ամէն օր զայն կը կարդամ, ամէն օր զայն կ'ըմբոշխնեմ հոգեմտաւոր անհուն վայելքով, կը խորզգամ անոր մէն մի բառին, մէն մի նախադասութեան, դարձուածքին, ասոյթին խորութիւնը, գեղեցկութիւնը, համն ու հոտը, եւ ՍԷՐՍ ԿԸ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԻ անոր հանդէպ: Հարուստ է մեր լեզուն, ճկուն, բարեհունչ, ամէնէն նուրբ զգացումը թէ միտքը արտայայտելու ատակ ճշգրտութիւն ունի ան: Մինչեւ վերջին շունչս, կ'ուզեմ զայն սերտել, զայն խորապրիլ, անով հարստանալ, անով հայանալ...ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ՄԵՐ ՈԳԵՂԷՆ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ

Թէ սիրտէ սիրտ կամուրջ ըլլայ,
Մարդը մարդուն լաւ հասկընայ,
Առանց խօսքի, առանց բառի,
Կ'ըլլան իրար հաղորդակից...
.....

Իմաստութի՛ւն, դժուար կու գաս,
Նշոյլ լոյսիդ համար կու տանք
Ցաւ անհամար ու տառապանք
Եւ կը դառնաս թանկագին գանձ:
.....

Ոչ ոք պիտի քեզ հասկնայ,
Սիրտդ այդպէս դուն մի բանար,
Ե՞րբ է եղեր որ մերկ աչքը
Տեսնէ սրտի խորխորատը...
.....

Լռութիւնը խոր շշուկներ ունի,
Ճիշդ ինչպէս հունտը հողի ընդերքին,
Որ յետոյ ծըլի գարնան գալուստին,
Ցարութեան շունչ բերէ աշխարհին:
.....

Մենք մեր բախտը միշտ կ'անիծենք,
Մինչդեռ ան մեր ափին մէջ է,
Թէ ճիշդ ընթացք տանք մենք անոր,
Մեզ կը տանի լուսէ ճամբով:
.....

Քաղաքական խարդաւանքէն
Հեռու պահէք գիրն ու տառը,
Անոնց տեղը երկինքը է,
Ուր թեւածեն հոգին, միտքը:
.....

Թող հողմը փչէ, քամին թող ոռնայ,
Սրտիս խարոյկը թող միշտ վառ մնայ,
Ես ապաւինիմ անոր տաք շունչին
Անոր ծիրանի, ճարճատիւն կրակին:
.....

Ինչ ծաղիկներ տրորուեցան
Ազատութեան փշոտ ճամբուն,
Անոնց բոյրը սակայն մնաց
Օդէն առկախ զերթ անմահ շունչ...
.....

Լացն ու կոծը, ողբն ու կական ոչինչ արժեն մահէն ետքը,
Արտասուքդ խղճիդ խայթն է, ի զուր են քու արցունքները,
Թէ պիտ' յարգես, հիմա յարգէ՛ երբ դեռ ողջ է մարդը, ի՛նքը,
Կոտրելէն ետք, աւա՛ղ, կը զգանք կոտրուածին բուն արժէքը:
……..

Ժամանակն է զոր կը մսխենք ամէն ինչէն ալ աւելի,
Կարծելով թէ յաւիտեան է, չկայ աւարտ ու չկայ վերջ,
Մայրամուտին լոկ մենք կը զգանք արժէքն անգին ժամանակի,
Երբ ալ ուշ է, հորիզոնին վերջալոյսն է ծիրանագեղ:
……..

Մարդիկ կրնան առժամաբար միտքը բանտել,
Սանձել հոգին խուցի մը նեղ պատերուն մէջ,
Բայց ո՞վ կրնայ լոյսի ճախրանքը կասեցնել,
Կամ խափանել անոր ճաճանչը լուսեղէն:
.....

Ազատութի՛ւն, դուն կը շողաս արեւի պէս,
Ամպերէն վեր, հորիզոնին դէմ լուսագեղ,
Եւ ո՞վ կրնայ ոգիդ, շունչդ արգելակել,
Խոչընդոտել ու խափանել լոյսդ հրեղէն:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ